

Handwritten text in cursive script, possibly a name or title.

Handwritten text in cursive script, possibly a name or title.

Handwritten text "1937" with a double quote symbol above it.

36P

n-25

1 MAR 2010

ՀԱՅԿԱԿԱՆ ԲԱՐԵԳՈՐԾ. ԸՆԴՀ. ՄԻՈՒԹԻՒՆ

ՀԻՄՆՈՒԱԾ 1906 ԻՆ Ի ԳԱՀԻՐԷ

Ե Ի

ՎԵՐԱԿԱԶՄՈՒԱԾ 1924 ԻՆ Ի ԼՈԶԱՆ



ԸՆԴՀԱՆՈՒՐ

ՏԵՂԵԿԱԳԻՐ ԵՒ ՀԱՇՈՒԵԿՇԻՌ

30 ԲԴ ՏԱՐԵՇՐՁԱՆԻ

(1935)



ՅԿԱԳՐԱՐԻՆ ԳՍ.ՀՐԻ ԵՂՁԱՐՑ

1937

ԲԱՐԻՁ

361
- 25

361
7-25

1905 10 20

ՀԱՅԿԱԿԱՆ ԲԱՐԵԳՈՐԾ. ԸՆԴՀ. ՄԻՈՒԹԻՒՆ

ՀԻՄՆՈՒԱԾ 1906 ԻՆ Ի ԳԱՀԻՐԷ

Ե Ի

ՎԵՐԱԿԱԶՄՈՒԱԾ 1924 ԻՆ Ի ԼՈԶԱՆ

Ը Ն Դ Շ Ա Ն Ո Ւ Ր

ՏԵՂԵԿԱԳԻՐ ԵՒ ՀԱՇՈՒԵԿՇԻՈՒ

ՅՕ ՐԴ ՏԱՐԵՇՐԶԱՆԻ

(1 9 3 5)

05.06.2013

92.100

ԱՏԵՆԱԳՐՈՒԹԻՒՆ

Հ. Բ. Ը. ՄԻՈՒԹԵԱՆ 27 ՐԴ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԻ

(Բ. ՀՐԱԻՆՏԻ ՎՐԱՑ)

Այսօր, հինգշաբթի, 15 Հոկտեմբեր 1936, ժամը 4 ին (յ. մ.), Բարիզ, Նուսրաբեան Մատենադարանի Ժողովարանին մէջ, 11 Սքուար Ալլոնի, Հայկական Բարեգործական Ընդհանուր Միութեան Ընդհանուր Ժողովը, որ, 1936 Հոկտեմբեր 1 ի օրը, Հիմնական Կանոնադրի 27րդ Յօդուածին (Հատուած Ը.) պայմանադրած մեծամասնութիւնը դոյացած չըլլալուն համար յետաձգուած էր, իր 27րդ նիստը դումարեց օրինաւորապէս, երկրորդ հրաւերի վրայ, նախագահութեամբ Զարեհ Պէյ Նուսրաբի, իրեն աջակից ունենալով փոխնախագահ Տ. Պօղոս Էմէրեան:

Ատենադպիր ընտրուեցաւ Տ. Վ. Մալէգեան, իսկ քուէախոյզ՝ Տեարք ճանիկ Զաքըր եւ Մաղաք Պէրպէրեան:

Նախագահը ներկայացուց հետեւեալ թերթերը, որոնց մէջ հրատարակուած է հրաւիրագիրը:—

«Միութիւն»	Բարիզ	Մայիս-Յունիս	1936
«Արագած»	,,	5 Յունիս	,,
«Հայ Սիրտ»	Մարսէյլ	9	,,
«Արեւ»	Գահիրէ	9	,,
«Եփրատ»	Հալէպ	9	,,
«Արամազդ»	Աթէնք	2	,,
«Արեւելք»	Սելանիկ	4	,,
«Պալքան. Մամուլ»	Սօֆիա	3	,,
«Պայքար»	Պոսթոն	14	,,
«Հայաստանի Կոչնակ»	Նիւ Եորք	25	,,
«Վերածնունդ»	Թեհրան	24 Օգոստոս	,,



51597-65

Ներկայութեան տոմարէն յայտնի եղաւ որ անձամբ ներկայ եւ փոխանորդաբար ներկայացուած անդամներու թիւը 193 է, 308 ձայնի իրաւունքով:

Նախագահը կը յայտարարէ որ, Հիմն. Կանոնադրին 27րդ. Յօդուածին համաձայն, ներկայ ժողովը կանոնաւորապէս հրաւիրուած եւ գումարուած է, անկախաբար ներկայներու թիւէն, քանի որ առաջին նիստին օրինական թիւ գոյացած չէր, եւ ըստ այնմ ժողովը բացուած կը հռչակէ:

Նախագահը սզազգած յարգանքի խօսքերով ի վեր կը հանէ այն մեծ կորուստները զոր Միութիւնը ունեցաւ անցեալ տարուանէ ի վեր, ողբացեալ Աղաթօն Պէյէ վերջ, որուն յիշատակը ողբերգութեամբ վերջին Ընդհ. ժողովին, յանձին Միութեան մեծագոյն վեթերաններէն Բարերար Անդամ Վեհ. Բարդէն Ա. Կիլիկիոյ Աթոռակից Կաթողիկոսի, նոյնպէս եւ Բարերար Անդամ Տ. Միհրան Ղազարոսեանի, Պատուոյ Անդամներ՝ Գեր. Շահէ Արքեպիսկոպոս Գասպարեանի, Տօքթ. Ս. Լոնկի, Տ. Միրտիչ Սուլիկեանի եւ Տ. Գարեգին Կիրակոսեանի, որ երկար տարիներ դնահատելի ծառայութիւններ մատուցած են Միութեան:

Անդամները յոտնկայս արտայայտեցին իրենց յարգանքը:

Նախագահը կը բացատրէ թէ Հ. Բ. Լ. Միութիւնը ըլլալով Զուլցերիական Ընկերակցութիւն մը եւ իր հիմնական կեդրոնատեղին գտնուելով Լոզան, Հիմն. Կանոնադրին 27րդ Յօդուածին համաձայն՝ որ կը տրամադրէ թէ « Ընդհանուր ժողովը կը գումարուի Լոզան կամ այլուր », իրաւագէտներու խորհուրդով յարմար դատուած էր Միութեան համարաուու գերագոյն ժողովը գումարել ընդհանրապէս Լոզան: Բայց որոշուեցաւ այս տարի գումարել Բարիդ, որ իր վարչական կեդրոնատեղին է: Դժբախտաբար, ինչպէս անցեալին մէջ ալ պատահած է, ըլլալով Գահիրէ թէ Բարիդ, դարձեալ ներկայ եղող անդամները սակաւաթիւ են այսօր, եւ պէտք է խոստովանիլ թէ ուր որ ալ գումարուի, այդ տեղը բնակող անդամները միայն դիւրութիւն կ'ունենան անձամբ ներկայ գտնուելու: Սակայն եւ այդ իսկ նախատեսութեամբ է որ Հիմն. Կանոնադրիը պատեհութիւն ընծայած է հեռակայ անդամներուն եւս որ փոխանորդաբար կարենան մասնակցել Ընդհ. ժողովին, ինչպէս որ այս տարի ալ հարիւրաւոր փոխանորդագիրներ զրկուած են դանաղան վայրերէ: Պէտք է նաեւ ճշդել որ Ընդհ. ժողովի օրակարգը, նախապէս պատրաստուած եւ ծանուցուած ըլլալով, սահմանափակ է, որով եւ ժողովը տարբեր հարցերով չի կրնար զբաղուիլ, եւ կը գոհանայ Կեդր. Վարչական ժողովի

ուշադրութեան փոխանցելով իրեն ներկայացուած բաղձանքները եւ առաջարկները:

Կը յայտարարէ թէ անցեալ տարուան վերջերը Կեդր. Վարչ. Ժողովը ցաւ ի սիրտ ընդունեց բրոֆ. Մ. Բունիաթեանի հրաժարականը, ջերմօրէն դնահատելով այն օգտաշատ ծառայութիւնները զոր մատուց Միութեան, մասնաւորաբար երմտական խնդիրներու մէջ: Բայց ուրախութեամբ կ'աւելցնէ թէ ողբ. Աղաթօն Պէյի պարապ թողած պիտուր կուգայ գրաւել իր ազգասիրութեանը համար յոյժ յարգուած բարեկամ մը, Տ. Վահան Էսմէրեան, որուն բարեգէյ ընտրութիւնը կ'ենթարկուի Պատկ. ժողովի վաւերացման:

Նախագահը կը բացատրէ նաեւ թէ անցեալ տարի Ընդհ. ժողովին ներկայացուեցաւ յիշատակագիր մը, Ամերիկայի Շրջանակային Յանձնաժողովին կողմէ, զոր անձամբ յանձնեց եւ պարզաբանեց իր պատուիրակը Տ. Վ. Քիւրքեան: Կեդր. Վարչ. ժողովը իր մասնաւոր ուշադրութեան առարկայ ըրաւ անոր եղբակացութիւնները, եւ ատոնց հիման վրայ Պատկ. ժողովի վաւերացման կ'ենթարկէ Հիմն. Կանոնադրի 17րդ եւ 27րդ Յօդուածներուն, ինչպէս նաեւ Միութեան լուծման պարագան նախատեսող 28րդ Յօդուածին մասին հարկ դատուած բարեփոխումներու նախագիծ մը:

Նախագահը կը հաստատէ որ, հակառակ անցեալ տարի եւս չեղտուող անտեսական տաղնապին ստեղծած աննպաստ պայմաններուն, կարելի եղած է ամբապնդել Դրամադրութիւններուն երմտական վիճակը, ինչպէս նաեւ հաւասարակշռել Միութեան ելեւմուտքը, ըստ նախահաշիւի: 1935 տարուան ամէն տեսակ հասոյթներու համագումարը եղած է Ա. Ո. 55057 (որուն 4667 սակին անձեռնմխելի նոր կտակներ եւ այլ հիմնադրամներ ու 8356 սակին հանդանակութիւններէ գոյացած), իսկ իբրեւ նպաստ Ա. Ո. 37012 յատկացուած է ազգօգուտ եւ հայրենաշէն ձեռնարկներու:

Յետոյ, շնորհակալութիւն յայտնելով ներկայ եղող յարգելի անդամներուն, համակրանքի խօսքերով կ'ողջունէ մասնաւորապէս հաճելի ներկայութիւնը Ամերիկայի Միաց. Նահանգներու Շրջ. Յանձնաժողովի պատգամաւոր Տ. Մաղաք Պէրպէրեանի եւ Եղիպտոսի Շրջ. Յանձնաժողովի փոխ-նախագահ Տ. Ճանիկ Չաղբրի, ու կը հրաւիրէ Ատենադպիրը կարգալ 1935 Տարեշրջանի ընդհանուր համարատուութեան տեղեկագիրը, ինչպէս նաեւ Հաշուեքննիչին վկայադիրը:

Ժողովը անցնելով Օրակարգի խնդիրներուն, եւ լսելէ վերջ Ամերիկայի (Մ. Ն.) Շրջանակային Յանձնաժողովի պատգամաւոր

Տ. Մաղաք Պէրպլէրեանի ղեկավարները, վերջին պահուն առաջարկուած Հիմն. Կանոնադրի կարգ մը բարեփոխումներու մասին, ինչպէս նաեւ Բարիլի Տեղ. Մասնաժողովին կողմէ ատենապետ Տ. Ս. Սաղրեանի յայտնած բաղձանքները եւ թելադրութիւնները, ու Տ. Յ. Թեղեանի դիտողութիւնները եւ առաջարկները, առ այդ պատրաստուած երեք յուշագիրները կը յանձնէ Կեդր. Վարչ. Ժողովի ուսումնասիրութեան եւ ի հարկին դործադրութեան, յառաջիկայ տարուան Ընդհ. Ժողովին ներկայացնելու համար իր եղբակացութիւնները, եւ, ընկերական սիրով միջնորդարի մը մէջ ուղղուած հարցումներուն արուած լուսարանութիւնները բաւարար Կնկատելով, կարծիքներու փոխանակութեամբ մը յետ խորհրդակցութեան կը քուարկէ հետեւեալ որոշումները.—

Ա.— ՎԱԻԵՐԱՑՈՒՄ ՀԱՇԻՒՆԵՐՈՒ

Ժողովը կ'ընդունի Հաշուեքննիչ Տ. Ռուբէն Թաղէոսեանի հաշուական տեղեկագրին եղբակացութիւնները եւ կը վաւերացնէ 30րդ Տարեշրջանի հաշիւները՝ ինչպէս որ ներկայացուած են իրեն, եւ ըստ այնմ պարտագերծ կ'ընէ Կեդրոնական Ժողովը այդ շրջանի վարչութեան համար :

Բ.— ԸՆՏՐՈՒԹԻՒՆ ՀԱՇՈՒՆՔՆԵՒԶԻ

1937 տարուան համար իրրեւ Հաշուեքննիչ կը վերընտրէ Տ. Ռուբէն Թաղէոսեանը, իսկ տեղակալ կը նշանակէ Տ. Սեբորէ Պէրպլէրեան :

Գ.— ՎԱԻԵՐԱՑՈՒՄ ՆՈՐ ՎԱՐԻՉ ԱՆԳԱՄԻ

Ժողովը կը վաւերացնէ որպէս Կեդր. Վարչ. Ժողովի Վարիչ-Անդամ ընտրութիւնը Տ. Վահան Էմէրեանի, սղբացեալ Երուանդ Աղաթօն պէյի տեղ :

Դ.— ՀԻՄՆԱԿԱՆ ԿԱՆՈՆԱԳՐԻ ԲԱՐԵՓՈՒՅՈՒՄՆԵՐ

Կը քուէարկէ Հիմնական Կանոնադրին 17րդ, 27րդ եւ 28րդ Յօդուածներուն համար առաջարկուած հետեւեալ բարեփոխումները.—

Ա.— 17րդ Յօդուածին առաջին երկու հատուածները կը բարեփոխուին հետեւեալ կերպով.—

« Իւրաքանչիւր Երջանակ կը յանձանձուի « Երջանակին Կեդրոնական Յանձնաժողովի » մը կողմէ, ինչպէս ստորեւ բացատրուած է :

« Ամերիկայի Միացեալ Նահանգներու Երջանակին առաջին Կեդրոնական Յանձնաժողովը պիտի կազմուի Ամերիկայի Միացեալ Նահանգներու Երջանակային Յանձնաժողովի արդի անդամներէն :

« Եղիպտոսի Երջանակին առաջին Կեդրոնական Յանձնաժողովը պիտի կազմուի Եղիպտոսի Երջանային Յանձնաժողովի արդի անդամներէն :

« Իւրաքանչիւր Երջանակի Կեդրոնական Յանձնաժողովը կրնայ Երջանային Յանձնաժողովներ կազմել իր Երջանակին մէկ մասին մէջ, Կեդրոնական Վարչական Ժողովին հաւանութեամբ » :

Ծան.— 18րդ, 19րդ, 20րդ, 21րդ եւ 22րդ Յօդուածներուն մէջ դործածուած « Երջանակային Յանձնաժողով » բառերը պիտի փոխարինուին « Երջանակին Կեդրոնական Յանձնաժողով » բացատրութեամբ :

Բ.— 27րդ Յօդուածին երրորդ հատուածը կը բարեփոխուի հետեւեալ կերպով եւ նոր հատուածի մը յաւելումով.—

« Ի պաշտօնէ Ընդհանուր Ժողովին կը մասնակցին Երջանակներու Կեդրոնական Յանձնաժողովներու, Երջանային Յանձնաժողովներու եւ Տեղական Մասնաժողովներու անդամները, ինչպէս նաեւ Բարերար եւ Պատուոյ անդամները՝ որոնց մասին խօսուած է 7րդ Յօդուածին մէջ : Բացի այն ձայներէն զոր կրնան ունենալ իրրեւ բաժնեվճար անդամ, Բարերար Անդամներէն իւրաքանչիւրը 10 ձայնի, իսկ Պատուոյ անդամներէն իւրաքանչիւրը 4 ձայնի իրաւունք ունի :

« Երջանակի մը իւրաքանչիւր Կեդրոնական Յանձնաժողովը կըրնայ Ընդհանուր Ժողովի մօտ ներկայացուցիչ մը ունենալ, յանձին պատգամաւորի մը զոր կը նշանակէ այդ Ժողովին մասնակցելու իրաւունք ունեցող անդամներուն մէջէն, որ սակայն, իր ունեցած ձայնն ալ հաշուելով, 20 ձայնէ աւելի չի կրնար ունենալ : »

Գ.— 28րդ Յօդուածը (Լուծում) կը բարեփոխուի հետեւեալ բովանդակութեամբ.—

« Երբոր Ընդհանուր Ժողովը Ընկերակցութիւնը լուծելու որոշում տայ, պէտք է նշանակէ այն Հայկական Ընկերակցութիւնը կամ Հաստատութիւնը կամ Հայկական Պետութեան մէջ այն Վարչութիւնը որ պիտի յաջորդէ Հ. Բ. Ը. Միութեան եւ շարունակէ անոր գործերուն վարչութիւնը եւ սնօրինութիւնը, համաձայն Միութեան ներկայ Կանոնադրին մէջ սահմանուած նպատակներուն, ինչպէս նաեւ համաձայն նուիրատուներուն եւ կտակարարներուն կամքին՝ նուիրատուութեանց եւ կտակներուն վերաբերմամբ :

« Այն պարագային ուր լուծումը որոշելու համար ի նիստ հրապարակած Ընդհանուր Ժողովը չի կարենայ օրինաւորապէս դումարուել Կանոնադրով նախատեսուած պայմաններուն համաձայն, Կեդրոնական Վարչական Ժողովին Նախագահը, կամ անոր տեղը բռնող անձը, ի նիստ պիտի հրաւիրէ հետեւեալ անձերէն բաղկացած Յանձնախումբ մը, որ Միութեան լուծման որոշումը պիտի տայ եւ պիտի նշանակէ այն Հայկական Ընկերակցութիւնը, Հաստատութիւնը կամ Հայաստանի Պետութեան մէջ այն Վարչութիւնը, որ պիտի յաջորդէ Միութեան :

« Այս Յանձնախումբը պիտի բաղկանայ հետեւեալ անձերէն. —

ա) Միութեան Կեդրոնական Վարչական Ժողովին Նախագահը, Փոխ-Նախագահներէն մին, Գանձապահը եւ Վարիչ-Պատուիրակը կամ անոնց պաշտօնական տեղակալները :

բ) Միութեան Ամերիկայի Միացեալ Նահանգներու եւ Երկպտոսի Երջանակին Կեդրոնական Յանձնաժողովներուն, ինչպէս նաեւ ներկայ Կանոնադրին 16րդ Յօդուածին համաձայն ստեղծուելիք բոլոր Երջանակներու Կեդրոնական Յանձնաժողովներուն կամ անոնց յաջորդած Մարմիններուն Նախագահները եւ Գանձապահները, կամ անոնց պաշտօնական տեղակալները :

գ) Հայաստանի Պետութեան երեք պատուիրակները, մին՝ Հայաստանի Կառավարութեան, երկրորդը՝ Համալսարանին եւ երրորդը՝ Հայաստանի մայրաքաղաքին Քաղաքապետութեան կողմէ նշանակուած :

դ) Միութեան Կեդրոնական Վարչական Ժողովին կողմէ նշանակուած Հայկական բարենպատակ կամ մշակութային աշխարհական մեծ կազմակերպութեանց իրաւասու երկու ներկայացուցիչները :

ե) Էջմիածնի Վեհ. Ս. Կաթողիկոսին մէկ պատուիրակը :

զ) Կիլիկիոյ Վեհ. Ս. Կաթողիկոսին մէկ պատուիրակը :

է) Կ. Պոլսի Հայոց Ամեն. Ս. Պատրիարքին մէկ պատուիրակը :

ը) Երուսաղէմի Հայոց Ամեն. Ս. Պատրիարքին մէկ պատուիրակը :

թ) Հայ Կաթողիկ Գերեթ. Ս. Կաթ. Պատրիարքին մէկ պատուիրակը :

ժ) Ամերիկայի Միացեալ Նահանգներու Հայ Բողոքական Եկեղեցիներուն մէկ պատուիրակը :

Եթէ, ոեւէ պատճառաւ, վերոյիշեալ անձերէն մին, հրաւիրագրին մէջ նշանակուած թուականէն առառաւելն մէկ ամսուան պայմանաժամի մէջ չի կարենայ ներկայանալ Կեդրոնական Վարչական

Ժողովին կեդրոնատեղին՝ քուէարկութեան մասնակցելու համար, այդ պարագային ներկայ անդամներուն խորհրդակցութիւնները օրինաւոր պիտի նկատուին եւ անոնք պիտի կրնան, ձայներու մեծամասնութեամբ, ընտրել այն Հայկական Ընկերակցութիւնը, Հաստատութիւնը կամ Հայաստանի Պետութեան մէջ այն Վարչութիւնը որ պիտի յաջորդէ Միութեան, կը բաւէ որ, առաջին դումարման, ներկայ եղող անդամներուն թիւը ամբողջ անդամներուն թիւին կէսէն մէկ աւելի ըլլայ, եւ, երկրորդ դումարման, որ առաջնոյն մեծամասնութիւն չի դոյնանալուն պատճառաւ տեղի պիտի ունենայ տասնըհինգ օր վերջ եւ տասը օրուան ժամանակամիջոցով մը, առնուազն հինգ անգամ ներկայ գտնուի :

« Վերջապէս, այն պարագային որ յիշեալ Յանձնախումբը չի կարենայ դումարուել ոեւէ պատճառաւ, կամ, դումարուելէ վերջ, չի կարենայ որոշման մը յանգիլ, վերոյիշեալ կազմակերպութիւններէն կամ անձերէն ոեւէ մէկը իրաւունք պիտի ունենայ Հ.Բ.Ը.Միութեան լուծման եւ անոր յաջորդելիք Հայկական Ընկերակցութեան կամ Հայաստանի Պետութեան Վարչութեան ընտրութեան հարցը ենթարկել Հ.Բ.Ը.Միութեան Կեդրոնատեղին եղող Լողանի Դաշնակցային Դատարանին Նախագահին, եւ եթէ այս Դատարանը գոյութիւն չունենայ, Անգլիոյ Արդարութեան Բարձրագոյն Ատեանին կողմէ նշանակուած իրաւարարի մը իրաւարարութեան :

« Հ.Բ.Ը.Միութիւնը իր Հիմնական Դրամադրուիւր եւ իր Մասնաւոր Դրամադրուիւրին մէկ մասը Թրըսթի (Trust) վերածած ըլլալով, եթէ վերոյիշեալ անձերէն կամ կազմակերպութիւններէն մին իրաւարարութիւն յառաջ չի բերէ, այն ատեն Թրըսթիին (Trust) — որ չի կրնար անդորձածելի թողուլ Թրըսթին եկամուտները որ որոշ նպատակներու յատկացուած են — անկ պիտի ըլլայ գիմել իրաւարարութեան, նշանակելու համար այն Հայկական Ընկերակցութիւնը, Հաստատութիւնը կամ Հայաստանի Պետութեան մէջ այն Վարչութիւնը, որուն Թրըսթին պարտի յանձնել Թրըսթին եկամուտները :

« Երկու պարագային մէջ ալ, իրաւարարական վճիռը վերջնական եւ անվերաբննելի պիտի ըլլայ, եւ ծախքերն ալ Թրըսթը պիտի ստանձնէ : »

Ե. — ՈՒՂԵՐՁՆԵՐ

Տիրաբ. Ճ. Չաղըրի, Մ. Պէրպէրեանի եւ Ս. Սաղրեանի առաջարկութեամբ, Ժողովը կը քուարկէ հետեւեալ ուղերձները. —

1. — Յոտնկայս իր մշտական յարգանքը կ'արտայայտէ Միութեան

թեան բաղմերախտ Հիմնադիրներուն՝ յաւէտ ողբացեալ Պօղոս Նուպար Փաշայի, Եագուպ Արթին Փաշայի եւ Երուանդ Պէյ Աղաթօնի, ինչպէս նաեւ ազգային Բաբերաբ Կարապետ Աղա Մելքոնեանի, ու Հ. Բ. Լ. Միութեան հանգուցեալ Վեթերան եւ այլ բոլոր անդամներուն եւ նուիրատուներուն յիշատակին :

2.— Սրտազին խնդակցութիւն Խ. Հայաստանի վերաշինական նոր եւ հսկայ նուաճումներուն համար, եւ շնորհակալութիւն Կառավարութեան կողմէ Հ. Բ. Լ. Միութեան ընծայուած նորագոյն օժանդակութեանց համար, մասնաւորապէս Նուպարաշէնի մասին :

3.— Զերմ գնահատանք Եգիպտոսի եւ Ամերիկայի Շրջանակներու Կեդր. Յանձնաժողովներուն, անոնց գործակցող Շրջանային Յանձնաժողովներուն, Միութեան բոլոր Տեղական Մասնաժողովներուն եւ Օժանդակ Մարմիններուն, իրենց ազգանուէր գործունէութեան համար :

4.— Անկեղծ շնորհակալութիւն Միութեան բոլոր անդամներուն, նուիրատուներուն, ինչպէս նաեւ այն ամէն բարեսէր ազգայիններուն, հոգեւորականներուն եւ խմբագիրներուն, որ իրենց բարոյական կամ նիւթական օժանդակութիւններով սատարեցին Միութեան բարգաւաճման :

5.— Խորին շնորհակալութիւն Կեդր. վարչական Ժողովին եւ անոր Նախագահին որ Միութեան գործերը կը վարեն ձեռնհասօրէն եւ խղճմտօրէն :

Օրակարգի խնդիրները սպառած ըլլալով, Նախագահը նիստը կը փակէ ժամը 8 ին :

Քուէախոյզներ
ՀԱՆԻԿ ԶԱԳԸՐ
ՄԱՂԱՔ ՊԵՐՊԵՐԵԱՆ

Ատենադպիր
Վ. ՄԱԼԷԶԵԱՆ

Ատենապետ
ԶԱՐԵՀ ՆՈՒՊԱՐ

Տ Ե Ղ Ե Կ Ա Գ Ի Ր

ՀԱՇՈՒԵՔՆՆԻԶ Տ. ՌՈՒԲԷՆ ԹԱԴԷՈՍԵԱՆԻ

Պատկ. Ընդհանուր Ժողով Հ. Բ. Լ. Միութեան
Բարից

Տեարք,

1934 Սեպտեմբեր 21 ին ինձի յանձնուած պաշտօնին համաձայն, Հ. Բ. Լ. Միութեան 1935 տարեշրջանի հաշուական գործողութիւնները քննած ըլլալով, կը յայտարարեմ թէ անցեալ տարեշրջանին հաշիւները եւ 31 Դեկտեմբեր 1935 ի հաշուեկշիւը կէտ առ կէտ համաձայն են կեդրոնական համարակալութեան տոմարական արձանագրութեանց, անոնց վերաբերեալ փաստաթուղթերուն, ինչպէս նաեւ դրամատուներու գոյութեանց :

Հաշուեկշիւին կցուած եօթը բացատրական տախտակները կը պարունակեն 1 Յունվար 1935 էն մինչեւ 31 Դեկտեմբեր Հ. Բ. Լ. Միութեան գործունէութեան վերաբերեալ բոլոր մանրամասնութիւնները :

Հետեւաբար պարաք կը համարիմ առաջարկել ձեզի հաստատել սոյն հաշուեկշիւն ու հաշիւները, այնպէս ինչպէս որ ներկայացուած են ձեզի, կրկնելով հանդերձ նախապէս ըրած յանձնարարութիւնս՝ կատարելու Հ. Բ. Լ. Միութեան անչարժ կալուածներուն եւ արժեթուղթերուն վերագնահատումը, անմիջապէս որ կարելի ըլլայ :

Հաշուեքննիչ
ՌՈՒԲԷՆ ԹԱԴԷՈՍԵԱՆ

Բարից, 31 Օգոստոս 1936

ԿԵԴՐ. ՎԱՐՉԱԿԱՆ ԺՈՂՈՎ

(1 9 3 5)

ԶԱՐԵՀ ՊԵՅ ՆՈՒՊԱՐ	Նախագահ
ՎՍԵՄ. Տ. ԳԱԲՐԻԷԼ ՆՈՐԱՏՈՒՆԿԵԱՆ	Պատուակալ փոխ-Նախագահ
ԱՌԱՔԵԼ ՓԱՇԱ ՆՈՒՊԱՐ	Փոխ-Նախագահ
ՏԻԳՐԱՆ ԽԱՆ ԲԵԼԵԿԵԱՆ	Փոխ-Նախագահ
Տ. ՊՕՂՈՍ ԷՍՄԵՐԵԱՆ	Փոխ-Նախագահ
Տ. ԼԵՒՈՆ ԿԻՄԻՒՇԿԵՐՏԱՆ	Գանձապահ
Տ. ՎԱՀԱՆ ՄԱԼԵԶԵԱՆ	Վարիչ-Պատուիրակ
Տ. ԱՐԱՅ ԱՐԱՊԵԱՆ	Վարիչ-Անդամ
Տ. ԳԵՈՐԳ ԷՍԱՅԵԱՆ	Վարիչ-Անդամ
Տ. ՏԻԳՐԱՆ ԿԱՄՍԱՐԱԿԱՆ	Վարիչ-Անդամ
Տ. ԴԱԻԻԹ ՄՍՐԵԱՆ	Վարիչ-Անդամ
Տ. ՏԻՐԱՆ ՓԻԼԻՊՊՈՍԵԱՆ	Վարիչ-Անդամ

Տ. ՌՈՒԲԷՆ ՓԱՓԱԶԵԱՆ	Իրաւագէտ-Խորհրդական
Տ. ԶԱՐԵՀ ՍՐԱՊԵԱՆ	Իրաւագէտ-Խորհրդական
Տ. Ս. ԱՍՏՈՒԱԾԱՏՈՒՐՕՖ	Ելմտագէտ-Խորհրդական
Տ. Մ. ԵԱԶԸՃԵԱՆ	Ելմտագէտ-Խորհրդական

Տ. ՌՈՒԲԷՆ ԹԱԴԵՆՈՍԵԱՆ	Հաշուեքննիչ
----------------------	-------------

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿԱԳԻՐ

ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՉԱԿԱՆ ԺՈՂՈՎԻ

(30րդ ՏԱՐԵՇՐՁԱՆ 1935)

Յ Ա Ռ Ա Զ Ա Բ Ա Ն

Հ. Բ. Ը. Միութեան Հիմն. Կանոնադրին 27րդ Յօդուածին (Ե. Հատուած) համաձայն, Կեդր. Վարչ. Ժողովը պատիւ ունի Ընդհանուր Ժողովին ներկայացնելու 30րդ Տարեշրջանի, այսինքն 1935 տարուան համարատուութիւնը, ամփոփ կերպով:

Նախորդներուն նման, ներկայ Տեղեկագիրը, որ կ'ընդգրկէ Միութեան միամեայ ընդհանուր զործունէութիւնը, չորս մասի բաժնուած է. —

Առաջին, Միութեան վարչական զործունէութեան ամփոփոյթը: Երկրորդ, երմտական կացութեան պատկերը:

Երրորդ, նոր կտակներու եւ նուիրատուութեանց վիճակացոյցը: Չորրորդ, նպատներու եւ ձեռնարկներու մանրամասնութիւնը:

Ըստ սովորութեան, սոյն համարատուութեան կ'ընկերանան հաշուական ութ կցեալներ՝

1. — Հաշուեկշիռ 31 Դեկտեմբեր 1935 ի:
2. — 1935 տարուան հասոյթներուն եւ ծախքերուն ամփոփ հաշուացոյցը, յետագայ առաջին հինգ ցուցակներուն մէջ մանրամասնուած:
3. — Ընդհանուր Հասոյթներ:
4. — Մասնաւոր Հասոյթներ:
5. — Արտասովոր Հասոյթներ:

6.— Ընդհանուր Ձեռնարկներ եւ Նպաստներ:

7.— Ընդհանուր Ծախք:

8.— Հիմնադրամներու ցուցակը 31 Դեկտ. 1935 ին:

Հաշուական բոլոր գործողութիւնները օրը օրին քննուած եւ ճիշդ գտնուած են Տ. Ռուբէն Թաղէոսեանի կողմէ, որուն Ընդհ. Ժողովը իր 20 Սեպտ. 1935 ի նիստին մէջ Հաշուեքննիչի պաշտօնը վստահած էր, եւ որուն Հաստատագիրը կ'արտագրենք սոյն Տեղեկագրին սկիզբը:

Ա . Մ Ա Ս

ՎԱՐՉԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԷՈՒԹԻՒՆ

Ա.— ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎ

1935 ին Միութեանս Ընդհ. Ժողովը իր տարեկան 26րդ նիստը գումարեց 20 Սեպտեմբերին, Լոզան, Միութեան հիմնական կեդրոնատեղին, նախագահութեամբ Զարեհ Պէյ Նուպարի, եւ վաւերացուց 1934 տարեշրջանի համարատուութիւնը, յարգելի նախագահին, Անգամներու եւ գլխաւորաբար Ամերիկայի Շրջանակային Յանձնաժողովի Պատուիրակ Տ. Վահան Բիւրքճեանի ղեկուցումները լսելէ եւ կարգ մը ուղերձներ քուէարկելէ վերջ:

Այս տարի Ընդհ. Ժողովը իր 27րդ նիստը կը գումարէ Բարիդ, որ Միութեան վարչական կեդրոնատեղին է, Կանոնագիրը Կեդր. Վարչ. Ժողովը արտօնած ըլլալով Ընդհ. Ժողովը ըստ պարագայի գումարել Լոզան կամ Բարիդ: Այսպէսով կարելի կ'ըլլայ գոհացում տալ Բարիդարնակ անգամներու բաղձանքին:

Ընդհ. Ժողովի գնահատման եւ վաւերացման ենթարկուած գլխաւոր խնդիրներն են՝

Ա.— Ընդհ. Տեղեկագիր 30րդ Տարեշրջանի (1935):

Բ.— Վաւերացում 1935 Տարեշրջանի Հաշուեկշիռի:

Գ.— Անուանում Հաշուեքննիչի 1937 Տարեշրջանի համար:

Դ.— Վաւերացում նոր վարիչ անգամի ընտրութեան:

Ե.— Հիմն. Կանոնագրի բարեփոխումներ:

Զ.— Զանազան ուղերձներ:

Մասնաւորելով մեր խօսքը Հիմն. Կանոնագրի բարեփոխման հարցին, հարկ տեսնուեցաւ, առաւելապէս Ամերիկայէն մեզի ուղղուած թելադրութեանց վրայ, առաջարկել որ 17րդ եւ 27րդ, ինչպէս ոմանց կողմէ եղած դիտողութեանց վրայ, 28րդ Յօդուածներ

րուն մէջ բարեփոխումներ ներմուծուին, ապահովելու համար Ընդհ. Ժողովին աւելի լայն մասնակցութիւն մը եւ մեր Ընկերութեան լուծման պարագային եւս աւելի նպատակայարմար հաշուեյարդար մը:

Բ. — ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՁԱԿԱՆ ԺՈՂՈՎ

Անցեալ տարուան ընթացքին, Միութիւնը, եւ մասնաւորապէս Կեդր. Վարչութիւնը մեծ կորուստ մը ունեցան յանձին Երուանդ Պէյ Աղաթօնի, որ Նիսի մէջ, յետ երկարատեւ հիւանդութեան, իր մահահանացուն կնքեց, 12 Յուլիսին: Մեր սղբացեալ պատուակալ Փոխ-Նախագահը, որպէս Հիմնադիր եւ Բարերար Անդամ յոյժ թանկազին ծառայութիւններ մատուցած է Հ. Բ. Ը. Միութեան, որուն բոլորանուէր առաքեալը հանդիսացաւ մինչեւ իր վերջին շունչը: Հիմնարկութեան թուականէն սկսեալ Կեդր. Վարչ. Ժողովի Փոխ-Ատենապետի պաշտօնը վարեց անչէջ եռանդով ու նուիրումով մը որ հանդուցեալը կը գնէ մեր Միութեան մեծագոյն վեթերաններուն առաջին գիծին վրայ: Իրեն կը պարտինք բազմաթիւ Մասնաճիւղերու կազմութիւնը, անհամար անդամներու արձանագրութիւնը, եւ կարեւոր կտակներու եւ նուիրատուութեանց իրագործումը, գլխաւորաբար Տիկ. Երանուհի Թաղեր Փաշա Յակոբեանի եւ Լեւոն Պէյ Յակոբեանի: Աղաթօն Պէյի մահը անփոխարինելի կորուստ մըն է Հ. Բ. Ը. Միութեան համար, եւ Ազգին որուն ծառայեց միշտ գործնական միտքով:

Ողբացինք նաեւ անակնկալ մահը Միութեան վեթերան անդամներէն Տ. Յարութիւն Ամիրայեանի, որ ինքնաշարժով Գահիրէէն Աղեքսանդրիա դացած միջոցին արկածամահ եղաւ, Օգոստոս 4 ին: Տ. Ամիրայեան Միութեանս հնազոյն վաստակաւորներէն էր, եւ վերջին տարիները, որպէս ատենադպիր Գահիրէի Երջան. Յանձնաժողովի, սրտեռանդ լծուած էր Միութեան գործերուն, ցոյց տալով հազուադիւրս անձնուիրութիւն մը: Իրմով կորսնցուցինք երիտասարդ ուժ մը, համակ կորով եւ բարեք, իր ազգանուէր գործունէութեան ամենափայլուն չրջանին: Յետ մահու Պատուոյ Անդամներու ցանկին վրայ արձանագրուեցաւ իր անունը:

Տարւոյն վերջը ուրիշ ցաւալի եւ անփոխարինելի կորուստ մը եւս ունեցանք: Երեւանի մէջ, 24 Նոյեմբերին, յանկարծամահ եղաւ Միութեանս Պատուոյ Անդամ Գեոր. Շահէ Արքեպիսկոպոս Գասպարեան, որ ամիս մը առաջ Բարիզէն Հայաստան մեկնած էր: Մեր պատ-

ուական բարեկամը երկար տարիներէ ի վեր իր լաւագոյն ջանքերը ի սպաս դրած էր Միութեան, Ամերիկայի մէջ թէ Սուրիոյ, ինչպէս նաեւ մեծ պատերազմէն առաջ: Այս տխուր ցանկը կը փակենք արձանագրելով նաեւ մահը ուրիշ վեթերանի մը, Տօքթ. Ս. Լոնկի, Ֆրէզնո, որ Գալիֆօրնիոյ Երջ. Յանձնախումբին ատենապետութիւնը վարած է երկար տարիներ եւ մեր Միութեան զաղափարականին նուիրուած անձնուէր մէկ անդամը եղած է:

Յաւ ի սիրտ կ'արձանագրենք նաեւ Կեդր. Վարչ. Ժողովի նորընտիր անդամներէն Բրօք. Մենտոր Բունիաթեանի հրաժարումը, վարիչ անդամի պաշտօնէն զոր գրեթէ տարի մը կատարեց, որպէս տնտեսագէտ իր թանկազին ծառայութիւնը ի սպաս դնելով, գլխաւորաբար ելմտական խնդիրներու մէջ:

Կեդր. Վարչ. Ժողովը 1935 ին եւս ինքզինքը դտաւ համաշխարհային տնտեսական տագնապին ստեղծած դժուարութեանց առջեւ, որոնց դէմ Միութեան շահերը պաշտպանելու համար իր ջանքերը չի խնայեց, աջակցութեամբը իր կողքին կազմուած եւ գործող Ելմտական, Իրաւագիտական եւ Օգնութեան երբեակ Յանձնաժողովներուն, որ իրենց շարունակական գումարումներովը եւ մասնագէտներու հետ խորհրդակցութեամբը կատարեցին իսկապէս արդիւնաւոր աշխատանք մը:

Ուրախ ենք յայտնելու որ հակառակ տնտեսական աննպաստ պայմաններուն, որոնց դաժան հակազդեցութեամբը Միութեանս հասոյթները նուազած են, բազդատարար բարեյաջող տարեշրջաններու, 1935 ին եւս կարելի եղաւ հաւասարակշռել ընդհանուր ելեւմուտքը, գոյացնելով 55057 Անգլ. Ոսկիի հասոյթներ, ոմանք կտակային հիմնադրամներու եւ մասնաւոր հանգանակութեանց հաշւոյն, իսկ այլազան ձեռնարկներու եւ նպաստներու յատկացնելով 37012 Անգլ. ոսկիի գումար մը, որուն մանրամասնութիւնները կը գտնուին ներկայիս կցուած թիւ 6 հաշուեցոյցին մէջ:

Մեզի համար հաճելի պատեհութիւն մը ընծայեց, կարեւոր խորհրդակցութիւններ ընելու համար, Նիւ Եորքէն իբր Պատուիրակ այցելութիւնը Տ. Քիւրքեանի, եւ Գահիրէէն Երջ. Յանձնաժողովի փոխ-Ատենապետ Տ. Ճ. Չաքըրի, որ անձամբ եւս շահեկան տեղեկութիւններ հազորդեց Մերձաւոր Արեւելքի մէջ կատարած իր ուղեւորութեանց առթիւ:

1935 ին, Միութեանս բրորականտի գործին ըստ կարելւոյն մըղում տրուեցաւ, ղեկիցներով եւ այլ միջոցներով, լուսաբանելու համար մեր Միութեան շարքերը եւ հանրային կարծիքը: Մեր գոր-



ծրչները շրջաններ ընելով կատարեցին իրենց պարտականութիւնը մասնաւորաբար Ֆրանսայի դործիչ Տ. Օ. Թադէոսեան գաւառները այցելեց, իսկ Յունաստանի դործիչ եւ կրթ. քննիչ Տ. Կ. Սանիկեան, բացի իր շրջանէն, մասնաւոր առաքելութեամբ մը այցելեց Պուլկարիա, կազմակերպական օգտակար գործեր տեսնելով:

Ուսումնասիրութեան առարկայ եղան զանազան առաջարկներ եւ որոշուեցան նոր կարգադրութիւններ, « Միութիւն » պաշտօնաթերթը շաբաթաթերթի վերածելու, Միութեան մատենաշարը հրատարակելու (օգտակար գիտելիքներու ժողովրդական պրակներ), շարժանկարի կազմութիւնը փութացնելու, եւ յօգուտ անդամներու նախապատուութեան իրաւունք եւ այլ բացառիկ առաւելութիւններ ապահովելու համար: Այդ ուղղութեամբ Կեդր. Վարչութիւնը սկսած է ջանքեր ընել, ինչպէս եւ Միութիւնը օժտել մասնաշատուկ շարժանկարով մը որուն ամբողջացումը ժամանակի կը կարօտի:

Տարեվերջին լրացաւ Միութեանս Ոսկեմատեանի Ա. Հատորին տպագրութիւնը, որուն ձեռնարկուած էր Արծաթեայ Յորեկանին առթիւ: Այս ընդարձակ եւ ճոխատիպ հրատարակութիւնը պատկերազարդ արլամ մըն է, որուն մէջ ոչ միայն ամէն անգամ պիտի գտնէ Հ. Բ. Ը. Միութեան 25 տարուան դործունէութեան հոգեպարար պատկերը, այլ ամէն հայ հոն պիտի գտնէ մեր ժամանակակից պատմութեան բազմազան դրուագներուն ցոլացումը: Երախտագիտութեամբ կը յիշատակենք որ նուիրատուներու շնորհիւ է որ հրատարակուեցաւ Ոսկեմատեանը, եւ անոր վաճառումին արդիւնքովն է որ պիտի ձեռնարկուի Բ. Հատորին տպագրութեան:

Հաճոյքն ունեցանք անցեալ տարի արձանագրելու Ընդհ. Ժողովին բարեգէպ որոշումը, որուն համաձայն Պատուոյ Անդամ նշանակուեցան մեր պաշտօնակիցներէն վարիչ-անդամ Տ. Տիգրան Կամսարական եւ գանձապահ Տ. Լեւոն Կիւմիւշկէրտան, որ 15 տարի է ի վեր Կեդր. Վարչ. Ժողովին կը մասնակցին հազուադիւտ անձնուիրութեամբ մը, առաջինը ըլլալով նաեւ Միութեան հիմնադիր անդամներէն, նոյնպէս եւ Եգիպտոսի Երջ. Յանձնաժողովի Ժրջան փոխ-ատենապետը Տ. Ծանիկ Չազըր, ինք եւս հիմնադիր անդամ մը, որ աւելի քան երբեք հաւատքով ու ոգեւորութեամբ նուիրուած է Միութեան: Բաց աստի, ողբ. Սորէն Մ. Վ. Լազարեան, որ կարեւոր կտակ մը ըրած էր, ըստ Կանոնագրի, յետ մահու Պատուոյ Անդամ նշանակուեցաւ:

Գ. — ԱՄԵՐԻԿԱՅԻ ՇՐՋԱՆԱԿԱՅԻՆ ՅԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ամերիկայի շրջանակը անցեալ տարի եւս բաւական ազդուեցաւ Ամերիկայի տնտեսական տաղնապէն: Գործադրութեան հետեւանքով կազմալուծուած Մասնաճիւղներէն քիչերը միայն վերակազմուեցան:

Այսուհանդերձ, Երջանակային Յանձնաժողովի տարեկան հաշուետուութենէն կը տեսնուի թէ կրցած է 40045 տոլարի գումար մը դոյացնել զանազան հասոյթներով, որոնցմէ կ'արձանագրենք անգամավճար 5698 տոլար, կտակներ 4725, Նուպարաչէն (Հայրենակցականներէ եւ Մասնաճիւղներէ) 11060, տեղական կարօտեալներու համար 2582, ներդադրի 1051, Հալէպի տնազուրկներու 1099, եւն.:

Անցեալ տարեշրջանին, Ամերիկայի Երջ. Յանձնաժողովի կազմը հետեւեալ փոփոխութիւնը կրած է. — Տեարք Արշակ Գարակէօզեան, Տ. Տիգրիճեան եւ Վ. Քիւրքեան դադրած ըլլալով, Համաժողովը վերընտրած է Տ. Ա. Գարակէօզեանը եւ ընտրած է Տեարք Մ. Գարակէօզեան եւ Կ. Փուլման: Իսկ Նիւ Եորքի Գրասենեակի պաշտօնէութիւնը մնացած է նոյնը, — Տ. Վ. Քիւրքեան, պատուիրակ Երջ. Յանձնաժողովի, Տ. Գր. Գալուստեան, ընդհ. քարտուղար:

Սոյն Երջ. Յանձնաժողովի գլխաւոր գործունէութիւնը եղած է, բացի Մասնաճիւղային ընթացիկ աշխատանքներէն, վիճակահանութիւն ի նպաստ ներդադրի եւ տեղական կարօտեալներու, կտակային հետապնդումներ, Հայրենակցական Միութիւններու հետ բանակցութիւններ, օգնութիւն Հալէպի տնազուրկ դաղթականներու, գործադրութիւն Հայաստանի ապսպրանքներու, Միութեան Երեսնամեակի տօնակատարութեանց ծրագիր, եւն.:

Երջ. Յանձնաժողովը իբրեւ պատուիրակ Բարիկ զրկած էր Տ. Վ. Քիւրքեանը, որ Լոզան ներկայ եղաւ Ընդհ. Ժողովին: Միութեանս վեթերան պատուիրակը յուշագրով մը քանի մը հարցեր ներկայացուց Ընդհ. Ժողովին, որ անոնց նկատառումը եւ ի հարկին գործադրումը փոխանցեց Կեդր. Վարչ. Ժողովին: Այդ հարցերուն գլխաւորագոյններն էին՝ Հիմն. Կանոնագրին մէջ ներմուծել քանի մը բարեփոխումներ, Երջ. Յանձնաժողովներու տալ ներկայացուցչական իրաւունք Ընդհ. Ժողովին մէջ, զօրացնել Միութեան բրորականտը՝ բերանացի ու գրաւոր, ապահովել կանանց եւ երիտասարդաց գործակցութիւնը, ակումբներու հաստատումը, եւն.:

Սոյն Յանձնաժողովը լրջօրէն հետապնդած է զանազան կտակներու յաջողութիւնը, եւ, եթէ այդ գլուխը միայն 4725 տոլարի գումար մը ցոյց կուտայ 1935 տարուան հաշուետուութեան մէջ, առա-

ւելապէս ներկայ տարուան մէջ ձեռք բերուած են սկսուած աշխատանքներուն բարեյաջող արդիւնքները, մասնաւորապէս ողբ. Մորճիկեանի կտակը գործադրուած է շուրջ 12500 տոլարի գումարով մը:

Անցեալ տարի Ամերիկայի Պորճրակցական Համաժողովը իր 22րդ նիստը գումարեց Պոսթոն, 1—2 Յունիսին, մասնակցութեամբ 66 պատգամաւորներու եւ նախագահութեամբ Տ. Տիգրան Տիրատուրեանի: Ըստ սովորութեան, Գալիֆօրնիոյ շրջանին Մասնաճիւղները եւս իրենց Համաժողովը ունեցած են 4 Մայիսին, Սան Ֆրանսիսքոյի մէջ, նախագահութեամբ Պատուոյ Անդամ Տ. Ս. Պասթաճեանի:

Գ. — ԵԳԻՊՏՈՍԻ ՇՐՋԱՆԱԿԱՅԻՆ ՅԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Եգիպտոսի շրջանակը կ'ընդգրկէ ընդարձակ շրջան մը, Մերձաւոր եւ Ծայրագոյն Արեւելքի դաղութները, որուն Եւրոպայէն Յունաստանը եւս մաս կը կազմէ:

Եգիպտոսի Շրջանակային Յանձնաժողովը, որուն կեդրոնն է Գահիրէ, 1915ին եւս ունեցաւ արդիւնաւոր գործունէութիւն մը, ոչ միայն հասոյթներու գոյացման տեսակէտով, այլ նպաստներու յատկացման գործին մէջ, գլխաւորաբար յօգուտ կը թափան ձեռնարկներու գոր կը վարէ երկար տարիներու փորձառութեան ուժովը:

Այդ շրջանին Յանձնաժողովի կազմը ունեցաւ յոյժ ցաւալի կորուստ մը, իր անդամներէն Տ. Յարութիւն Ամիրայեանի եղբրական մահուան պատճառաւ, արկածի մը հետեւանքով: Յանձնաժողովին ատենադպիրը թանկագին ուժ մըն էր, իբր երկարամեայ աշխատոր իր մատուցած թանկագին ծառայութեանց համար: Այդ վեթերանին մահը Միութեանս համար եղաւ անփոխարինելի կորուստ մը:

Իբր յաջորդ ընտրուեցաւ Տ. Պետրոս Կիրակոսեան, Գահիրէի մէջ սիրուած դէմք մը, եւ ատենադպիրի թափուր մնացած պաշտօնին կոչուեցաւ Միութեանս Պատուոյ Անդամներէն Տօքթ. Ն. Քէչէճեան, որ նոյնպէս երկար տարիներ զնահատելի ծառայութիւններ մատուցած վեթերան մըն է:

Միութեանս Գահիրէի գրասենեակին պաշտօնէութիւնը փոփոխութիւն չէ կրած, — Տ. Մխալեան՝ քարտուղար, Տ. Եկաւեան՝ հաշուակալ, Տ. Անդրանիկեան՝ օգնական:

1935ին, Յանձնաժողովի ողբացեալ ատենադպիրը Տ. Ամիրայեան Պէյրութ եւ Աթէնք, իսկ փոխ-ատենապետ Տ. Չաքըր եւս Սուրիա եւ Պարսկաստան կատարած ճամբորդութեանց ընթացքին մեծապէս օգ-

տակար հանդիսացան, տեղական կազմակերպութեանց մղում տալով եւ օգնութեան ձեռնարկներու մասին պէտք եղած վերին հսկողութիւնը գործ գնելով:

Անցեալ տարի Եգիպտոսի շրջանակին հասոյթներուն համադումարը եղած է Եգ. ոսկի 3828, փոխան նախատեսուած 3124 ոսկիի: Այդ գումարին 1920 ոսկին գոյացած է անդամավճարներէ, 486 ոսկին մշակոյթի նուիրահաւաքութենէ, 480 ոսկին ողբ. Օհանիկ Պօնճուգեանի կեանքին ապահովագրութենէն, եւն.: Այդ գումարէն դուրս կը մնայ Աղեքսանդրիայէն Տ. Պետրոս Կիւմիւզեանի նուիրատուութեան փոխարժէքը, որուն մասին կը խօսինք կտակներու գլուխին մէջ:

Այդ Յանձնաժողովին կողմէ 1935ին եղած նպաստի յատկացումները կը ներկայացնեն 4988 Եգ. ոսկիի համադումար մը, որուն 3929 ոսկին Վարժարաններու եւ 608 ոսկին Երիտասարդական կազմակերպութեանց համար ծախսուած է ուշագրաւ արդիւնքներ ձեռք բերելով:

Եգիպտոսի Շրջանակային Յանձնաժողովը կը շարունակէ հետապնդել Միութեանս օգտին կտակներ, որոնցմէ անցեալ տարուան ընթացքին գլխաւորաբար կը յիշատակենք Բարբար Անդամ Տ. Կիւմիւզեանի տրամադրած հիմնադրամը Անգ. ոսկի 3634, ողբ. Տ. Օ. Պօնճուգեանի ապահովագրութեան գումարը Ա. Ո. 492, ինչպէս նաեւ Արար-Բունարէն Չնգուչցի Տ. Աւետիս Էքմանեանի կտակը, որուն համաձայն, օրինական ձեւակերպութիւնները կատարուելէ վերջ, Միութեանս պիտի փոխանցուի տուն մը, խանութ մը, 12 Եգիպտ. Գրէտի Փօնտիէի պարտաթուղթ եւ 200 Սուր. ոսկի, Միութեանս նպատակներուն յատկացուելու համար:

Իր տեղեկագրին մէջ, զոր այս տարի ուշ ստացանք պատասխանատու քարտուղարին անհանգստութեան պատճառաւ, Յանձնաժողովը հետեւեալ տողերով կը բացատրէ իր լաւատեսութիւնը. — «Հ. Բ. Ը. Միութեան բարոյական անձնաւորութիւնն ունեցող Չուիցերիական Ընկերակցութիւն մը ըլլալը մեծապէս կը նպաստէ կտակներու եւ նուիրատուութեանց գոյատուութեանց, արուած ըլլալով որ այդ երկրին օրէնքները թոյլատու են զոհացում տալու կտակարարներու եւ նուիրատուներու կարգ մը հասկանալի պահանջներուն, մինչ տեղական օրէնքը առ այդ սեղմիչ տրամադրութիւններ ունի: Անտարակոյս այս անհույսութեամբ մեծ դեր կը խաղայ նաեւ, ու կատարեալ վստահութիւն կը ներշնչէ բարեսէր ազգայիններու այն մեծ հաւատարմութիւնը որ Միութեան կողմէ ցոյց կը տրուի, աւելի քան հաստատակամօրէն, իրեն վստահուած հիմնադրամներուն հանդէպ»:

Եգիպտոսի Շրջ. Յանձնաժողովը հաւատարիմ մնալով նուիրա-

գործուած աւանդութեանց, անցեալ տարեշրջանին եւս կազմակերպեց Մշակոյթի Օրուան կամ Ամսուան նուիրահաւաքութիւնը, ինչպէս նաեւ Պատի Օրացոյցի ձեռնարկը որ տեւական բնոյթ ստացած է տարիներէ ի վեր, որպէս յուշարար եւ հասոյթի աղբիւր:

Ե.— ՄԱՍՆԱՃԻՒՂԻՆԵՐ

1935 տարին Միութեան Մասնաճիւղներու կազմակերպութեան եւ գործունէութեան տեսակէտով լաւագոյն տարեշրջան մը եղաւ: Շատ տեղեր նոր Մասնաճիւղներ հիմնուեցան եւ անգործութեան դատապարտուած Մասնաժողովներ եւս վերակազմուեցան: Մասնաւոր ջանք մը եղաւ Տիկնանց Օժանդակներու եւ Երիտասարդաց Լիկաներու կազմակերպութեան համար:

Կեդր. Վարչութեան ենթակայ Մասնաճիւղներուն թիւը յանդեցաւ 44ի, եւ 10 քաղաքներու մէջ ալ ներկայացուցիչներ կարգուեցան, փոքրաթիւ անդամներէ բանձումները կատարելու համար:

Հակառակ աննպաստ պայմաններուն, պէտք է խոստովանինք թէ առհասարակ Մասնաճիւղները յաջողեցան գնահատելի աշխատանք կատարել եւ արդիւնքներ ձեռք բերել:

Ուղղակի Կեդրոնի կազմուած Մասնաճիւղներու տարեկան հասոյթներու գումարը եղած է Անգլ. ոսկի 3462, որուն 2082 ոսկին անդամավճարներէ գոյացած: Առաջին դիժին վրայ կուգայ մեր Բարիզի Մասնաճիւղը, տարեկան հասոյթ Ա. Ո. 1217, յետոյ Մանչէսթըր, Պ. Այրէս, Պուքըէշ, Գոնսթանցա, Բլումֆիլ, եւն.:

Անցեալ տարի, Յունաստանի գործիչ եւ կրթ. քննիչ՝ Տ. Կ. Պանիկեանի պաշտօն յանձնեցինք շրջան մը կատարել Պուլկարիոյ մէջ, ուր բրոքականտի եւ կազմակերպական աշխատանք մը կատարեց, շարժում ստեղծելով այդ երկրին մէջ, ուր այսօր շեշտուած գործունէութիւն մը կը հաստատենք գոհունակութեամբ:

Ամերիկայի (Մ. Ն.) Մասնաճիւղներու թիւը եղած է 60, հետեւեալ բաժանումով.— Նիւ Եորքի շրջան 20, Նիւ Ինկլէնտ 10, Միչիկէն նահանգներ 6, Գալիֆորնիա 24: Գործօն անդամներու թիւն է 3200, չի հաշուելով յետամնացները: Այս թիւին մէջն են Տիկնանց բաժնին 300 անդամուհիները եւ Կրտսերաց Լիկայի 600 անդամները եւս:

Արդիւնքի տեսակէտով, առաջին դիժին վրայ կուգայ Նիւ Եորքի Մասնաճիւղը (1545 տոլար), որուն կը յաջորդեն Ֆրէզնօ (872), Շիքագօ (863), Ուսար (440), Ալպընի (400), Լոս Անձէլըս (400):

Մասնաւոր յիշատակութեան արժանի է Նիւ Եորքի Տիկնանց

Կեդր. Յանձնախումբը, որ կը հաշուէ 120 անդամուհիներ եւ որուն գործունէութեան մէջ կարեւոր տեղ մը կը գրաւէ ընկ. ծառայութիւնը յօդուտ տեղացի կարօտեալներուն: Առանձին տուն մը կը ծառայէ իրրեւ կեդրոնավայր, ուր տեղի կ'ունենան պարբերական դասախօսութիւններ: Յանձնախումբը 1000 տոլարով մասնակցած է Միութեանս կրթական գործին եւ որոշած է Նուպարաչէնի մէջ կառուցանել դարմանատուն մը: Այդ Յանձնախումբին կապուած են Պրանքսի, Հարթֆըլըթի, Նիւարքի, Փէթըրսընի, Ֆիլատէլֆիայի եւ Սէնթ-Փօլ-Մինիաբոլիսի Որբ. Մարմինները:

Կրտսերներու Լիկաները կը պահեն իրենց գոյութիւնը եւ, եթէ չընդարձակուիր իրենց շրջանակը, կը գործեն սրտեռանդ: 1935ին գոյացուցած են 1900 տոլարի հասոյթ մը:

Եգիպտոսի շրջանակը ունէր 88 Մասնաճիւղներ եւ 5256 անդամներ, հինգ նորակազմ Մասնաճիւղներու յաւելումով.— Սուբիոյ մէջ Եպուպիէ, Համամ եւ Մէյտան էքպէզ, իսկ Պարսկաստանի մէջ Ապատան եւ Նոր Զուզա:

Այդ Մասնաճիւղներու տարեկան համագումարը յանդած է 3317 եգ. ոսկի: Ինչպէս ամէն տեղ, դժբախտարար, կարգ մը Մասնաճիւղներ շատ ուշ զրկած են իրենց համարատուութիւնները, որոնց արդիւնքը բնականաբար կը փոխանցուի յաջորդ տարեշրջանին:

Այդ շրջանակը ունի երեք գործիչներ, Տ. Միք. Նաթանեան, Սուբիոյ Կրթական Տեսուչ, Տ. Կ. Պանիկեան, Յունաստանի գործիչ եւ Կրթ. քննիչ, եւ Տ. Վ. Բագրեւանդեան, Մակեդոնիոյ Կրթ. Տեսուչ, որոնց իւրաքանչիւրը իր շրջանի սահմաններուն մէջ նեցուկ հանդիսացած է Միութեան Մասնաճիւղներուն, իսկ գործիչ Վեր. Հայկազուն Պանդամուր Եգիպտոսի մէջ օգտակար հանդիսացած է:

Առաջնութիւնը դարձեալ վիճակած է Գահիրէի Մասնաճիւղին, որ 1935 Դեկտեմբեր 15ին Միութեանս 29րդ Տարեդարձին հետ փառաշուք հանդիսաւորութեամբ տօնեց նաեւ իր հիմնարկութեան քսանըհինգամեակը: Այդ առթիւ մեծարանքի բացառիկ արտայայտութիւն մը ըրաւ Կեդր. Վարչ. Ժողովը, Պատուոյ Վկայականով մը գնահատելով Գահիրէի Մասնաճիւղին օրինակելի անձնուիրութիւնը եւ արդիւնաշատ գործունէութիւնը, շնորհիւ վեթերան եւ հիմնադիր բազմաթիւ անդամներու օժանդակութեանց:

Գահիրէէն վերջ, որուն տարեկան հասոյթը եղած է Եգ. ոսկի 840, կուգայ Աղեքսանդրիա (442), եւ ըստ կարգի՝ Սելանիկի, Հալէպի, Նիկոսիոյ, Պէյրութի, Աթէնքի, Երուսաղէմի եւ Ալեքսանտրիթի Մասնաճիւղները:

Բ . Մ Ա Ս

ԵԼՄՏԱԿԱՆ ԿԱՅՈՒԹԻՒՆ

Այս մասին Ա. Բաժանումին մէջ կը պատկերացնենք Միութեան 1935ի հասոյթներն ու ծախքերը, եւ Բ. Բաժանումին մէջ 31 Դեկտեմբեր 1935ի Հաշուեկշիռին վիճակը:

Աւելորդ է թերեւս կրկնել թէ Հ. Բ. Ը. Միութեան հասոյթները կ'երեւան իրարմէ անջատ հետեւեալ հաշիւներուն մէջ. —

1. — ԸՆԴՀ. ՀԱՍՈՅԹՆԵՐՈՒ ՀԱՇԻԻ, ուր կ'արձանագրուին՝

ա) Հիմնական Դրամագլուխին եւ պարտադիր նուիրատուութեանց եւ կտակներուն եկամուտները:

բ) Մեր գանազան հաստատութեանց, ձեռնարկներուն եւ սպասարկութեանց սահմանուած այն բոլոր հասոյթները, որոնց գործածութիւնը կեդր. վարչ. ժողովին նախաձեռնութեան թողուած է՝ առանց մասնաւոր յատկացումներու:

2. — ՄԱՍՆԱԻՈՐ ՀԱՍՈՅԹՆԵՐՈՒ ՀԱՇԻԻ, ուր կ'արձանագրուին՝ կտակուած կամ նուիրուած դրամագլուխներու եկամուտները, գար կեդր. վարչ. ժողովը պարտաւոր է գործածել ըստ իրենց կանխորոշ յատկացումներուն:

3. — ԱՐՏԱՍՈՎՈՐ ՀԱՍՈՅԹՆԵՐՈՒ ՀԱՇԻԻ, ուր կ'արձանագրուին՝ այն հանգանակութիւնները եւ նուիրատուութիւնները, որոնց իւրաքանչիւրը ամբողջովին սահմանուած է միակ նպատակի մը, այսինքն որոշ ձեռնարկի մը, եւ ոչ թէ, ինչպէս Ընդհանուր Հասոյթներուն մէջ, Միութեան ձեռնարկներու ամբողջութեանը:

Գարով դրամներու արձանագրութեանց, 1931էն առաջ մեր հաշուագրութիւնը կը կատարուէր 5 տոլարը, 124 Ֆրանս. Փրանքը եւ 25 Չուից. Փրանքը՝ 1 անգլ. ոսկիի հաշիւով: Անգլիական ոսկիին անկումին պատճառով, 1931էն սկսեալ, սպասելով որ իր սակը կայուն վի-

ճակ մը ստանայ, յարմար դատեցինք այդ սակերը փոխել, եւ 1935ին եւս հաշուագրութեան հիմ բռնեցինք տոլար 5, Փրանս. Փրանք 75 եւ Չուից. Փրանք 15ը՝ իբրեւ համարժէք 1 անգլ. ոսկիի, երբ հասոյթները դանձուած եւ ծախքերը վճարուած են միեւնոյն դրամով, իսկ երբ յիշեալ դրամները փոխուած են անգլ. ոսկիի կամ անգլ. ոսկին յիշեալ դրամներուն, կամ ուրիշ դրամներու, տարբերութիւնը արձանագրուած է իբր շահ կամ վնաս իր պատկան հաշուոյն մէջ: Միայն Դրամագլուխներու հաշիւները անխախտ պահուած են հին սակով, մինչեւ որ կարելի ըլլայ վերադնահատուած մը ընել:

Ա . Բ Ա Ժ Ա Ն Ո Ւ Ս

30րդ ՏԱՐԵՇՐՁԱՆԻ (1935) ՀԱՍՈՅԹՆԵՐՆ ՈՒ ԾԱԽԲԵՐԸ

Այս տեղ կը ներկայացնենք հաշիւը՝

Ա. ԳԼՈՒԽԻՆ մէջ, 1935ի հասոյթներուն,

Բ. ԳԼՈՒԽԻՆ մէջ, 1935ի յատկացումներուն եւ ծախքերուն,

Գ. ԳԼՈՒԽԻՆ մէջ, 1935 Դեկտեմբեր 31ին տրամադրելի մնացած գումարներուն:

Ա. ԳԼՈՒԽ

Հ Ա Ս Ո Յ Թ Ն Ե Ր

1935ին, վերեւ բացատրուած մեր հասոյթի երեք հաշիւներուն մուտքին անցած են հետեւեալ գումարները. —

1. — ԸՆԴՀԱՆՈՒՐ ՀԱՍՈՅԹՆԵՐ

Ընդհանուր հասոյթներու հաշիւին մուտքը, որուն մանրամասնութիւնները կ'երեւան թիւ 3 կցեալին մէջ, հետեւեալ կերպով կ'ամփոփուի. —

Ա.— 1935 ՅՈՒՆ. 1 ԻՆ ՏՐԱՄԱԴՐԵԼԻ ԳՈՒՄԱՐ

10009. 8. 2

Բ.— 1935 ՏԱՐԵՇՐՁԱՆԻ ՀԱՍՈՑՅՆԵՐ

Ա. ԴՐԱՄԱԳԼՈՒԻԻ ԵԿԱՄՈՒՏ

1. Պարտադիր կտակներու եւ

նուիրատուութեանց եկամուտ Ա. Ո. 17069. 4. 7

2. Հիմնական Դրամագլուխի

եկամուտ

* 2378.19. 5

Գումար Ա. Ո. 19448. 4. 0

Բ. ՈՒՐԻՇ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՀԱՍՈՑՅՆԵՐ

1. Մուտքի տուրքեր

Ա. Ո. 119. 3. 9

2. Անդամավճարներ

* 5191.19. 6

3. Յօգուտ որբերու նուիրա-

տուութիւններ

* 1394. 8. 0

4. Զանգան հասոյթներ

* 4990. 8. 0

5. Տոկոս, սակէ շահ, եւն.

* 756.19.11

Գումար Ա. Ո. 12452.19. 2

1935 տարեշրջանի հասոյթներուն գումարը 31901. 3. 2

Համագումար Ա. Ո. 41910.11. 4

Միութեանս երեք Շրջանակները հետեւեալ գումարներով մասնակցած են 1935 տարեշրջանի ընդհանուր Հասոյթներուն.—

Կեդրոն (Բարիքի շրջանակ)

Ա. Ո. 6806.16. 2

Ամերիկայի Շրջ. Յանձնաժողով

* 2261. 6. 7

Եգիպտոսի Շրջ. Յանձնաժողով

* 3384. 16.5

Գումար Ա. Ո. 12452.19. 2

Կեդր. Գրասենեակին կող-

մէ գանձուած Դրամագլուխ-

ներու եկամուտ

Ա. Ո. 19448.4. 0

Վերոգրեալ գումարը " 31901.3. 2

II. — ՄԱՍՆԱԻՈՐ ՀԱՍՈՑՅՆԵՐ

Մասնաւոր Հասոյթներու հաշիւին մուտքը, որուն մանրամասնութիւնները կ'երեւան թիւ 4 կցեալին մէջ, հետեւեալ կերպով կ'ամփոփուի. —

Ա.— 1935 ՅՈՒՆ. 1 ԻՆ ՏՐԱՄԱԴՐԵԼԻ ԳՈՒՄԱՐ (1)

Ա. Ո. 4822. 7. 4

Բ.— 1935 ՏԱՐԵՇՐՁԱՆԻ ՀԱՍՈՑՅՆԵՐ

ա) Մասնաւոր յատկացումներով նոր կտակներ

եւ նուիրատուութիւններ

Ա. Ո. 4667. 7.10

բ) Մասնաւոր յատկացումներով կտակներու

եւ նուիրատուութիւններու եկամուտ

* 10132. 2. 6

Գումար 14799.10. 4

Համագումար Ա. Ո. 19621.17. 8

III. — ԱՐՏԱՍՈՎՈՐ ՀԱՍՈՑՅՆԵՐ

Արտասովոր Հասոյթներու մուտքի կողմը, որ 5 թիւ կցեալին մէջ մանրամասնուած է, ամփոփ կերպով հետեւեալ պատկերը կը ներկայացնէ. —

Ա.— 1935 ՅՈՒՆ. 1 ԻՆ ՏՐԱՄԱԴՐԵԼԻ ԳՈՒՄԱՐ

Ա. Ո. 11125.18. 5

Բ.— 1935 ՏԱՐԵՇՐՁԱՆԻ ՀԱՍՈՑՅՆԵՐ

1. Նուպարաշնի հանգանակութիւն

Ա. Ո. 3037. 6. 5

2. Ներգաղթի հանգանակութիւն

* 267.11.10

3. Յօգուտ գաղթականներու հանգան.

* 3167. 5. 3

4. Ուրիշ արտասովոր հասոյթներ

* 1193.17. 5

5. Պատրաստ գումարներու տոկոս

* 690. 9. 5

Գումար 8356.10. 4

Համագումար Ա. Ո. 19482. 8. 9

1) Ըստ 1934 ի Տեղեկագրի (կցեալ 1) 1935 ին փոխադրելի գումարն էր Ա. Ո. 4940.16.8: Տարբերութիւնը բացատրուած է թիւ 4 կցեալին ներքեւ:

Երեք շրջանակները հետևեալ բաժինը ունեցած են 1935 Տարե-
շրջանի արտասովոր հասոյթներու զսյացման մէջ. —

Կեդրոն (Բարիկի շրջանակ)	Ա. Ո.	4680. 5. 3
Ամերիկայի Շրջ. Յանձնաժողով	»	3626.19. 0
Եգիպտոսի Շրջ. Յանձնաժողով	»	49. 6. 1

Վերոգրեալ գումարը Ա. Ո. 8356.10. 4

IV. — ՀԱՍՈՅԹՆԵՐՈՒ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԳՈՒՄԱՐԸ

Մեր հասոյթներուն ամբողջութիւնը հետևեալ կերպով կը ներ-
կայանայ ուրեմն. —

Ա. — 1935 ՅՈՒՆ. 1 ԻՆ ՏՐԱՄԱԴՐԵԼԻ ԳՈՒՄԱՐ (1) Ա. Ո. 25957.13.11

Բ. — 1935 ՏԱՐԵՇՐՁԱՆԻ ՀԱՍՈՅԹՆԵՐ

1. Ընդհանուր Հասոյթներ,	Ա. Ո.	31901. 3. 2
2. Մասնուր Հասոյթներ,	»	14799.10. 4
3. Արտասովոր Հասոյթներ,	»	8356.10. 4
Գումար	»	« 55057. 3.10

Գումար (տե՛ս կցեալ Թիւ 2) Ա. Ո. 81014.17. 9

Բ. ԳԼՈՒԽ

ՅԱՏԿԱՑՈՒՄՆԵՐ ԵՒ ԾԱԽՔԵՐ

Այս գլուխը կը բաժնենք հինգ հատուածի, այսինքն՝

1. Դրամագլուխներու յաւելում եւ յատկացումներ,
2. Չեռնարկներ եւ ընդհանուր օգնութեան նպատակներ,
3. Կենսաթոշակներ եւ այլ մասնուր ծախքեր,
4. Ընդհանուր ծախքեր,
5. Համագումար յատկացումներու եւ ծախքերու:

(1) Ըստ 1934 ի Տեղեկագրին (կցեալ 2), 1935 ին փոխադրելի գումարն էր Ա. Ո. 26076.3.3: Տարբերութիւնը բացատրուած է Թիւ 4 կցեալին մէջ:

I. — ԴՐԱՄԱԳԼՈՒԽՆԵՐՈՒ ՅԱԻԵԼՈՒՄ ԵՒ ՅԱՏԿԱՑՈՒՄՆԵՐ

Ա. — Դրամագլուխներու վրայ բարդուած են՝

1) Ընդհանուր Հասոյթներէն (տե՛ս կցեալ Թիւ 3)	Ա. Ո.	1233. 3. 2
2) Մասնուր Հասոյթներէն (տե՛ս կցեալ Թիւ 4)	»	5986.11. 0
Գումար (1) Ա. Ո.		7219.14. 2

II. — ՉԵՌՆԱՐԿՆԵՐ ԵՒ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՆՊԱՍՏՆԵՐ

1935ին ձեռնարկներու եւ ընդհանուր նպաստներու համար մեր
վարկերը հետևեալ կերպով բաժնուած են մեր պիւտճէին զանազան
գլուխներուն վրայ (տե՛ս կցեալ Թիւ 6). —

1. Հայաստանի ձեռնարկներ	Ա. Ո.	9619.17. 4
2. Որբեր եւ Որբանոցներ	»	11340.16. 8
3. Գաղթականներու օգնութիւն	»	3388. 1.11
4. Կրթական նպաստներ	»	6230.17. 3
5. Պատրիարքարաններու եւնակայ ձեռնարկներ	»	3658.18. 3
6. Թոշակընկալ սաներ	»	1186. 2.11
7. Առողջապահական նպաստներ	»	920.18.11
8. Նուպարեան Մատենադարան	»	484. 3. 3
9. Զանազանք	»	182.15. 2
Գումար	»	37012.11. 8

Այս ծախքը հողացուած է (տե՛ս կցեալ Թիւ 2)

Ընդհանուր Հասոյթներէն	Ա. Ո.	23110. 4. 6
Մասնուր հասոյթներէն	»	4663.13. 4
Արտասովոր հասոյթներէն	»	9238.13.10
Վերոգրեալ գումարը Ա. Ո.		37012.11.8

Ներկայ համարատուութեան չորրորդ մասին մէջ, այս ծախքե-
րուն իւրաքանչիւրին նկատմամբ մանրամասն տեղեկութիւններ
տրուած են:

(1) Դրամագլուխներու յաւելում Ա. Ո. 5599.18. 8
Պահիստի Հիմնադրամի յաւելում » 1619.15. 6

Վերոգրեալ գումարը Ա. Ո. 7219.14. 2

III.— ԿԵՆՍԱԹՈՇԱԿՆԵՐ ԵՒ ՄԱՍՆԱՒՈՐ ՅԱՏԿԱՅՈՒՄՆԵՐ

1935ին, կենսաթոշակներու եւ դանազան սպասարկութեան գումարն է՝

Ընդհանուր Հասոյթներէն	Ա. Ո. 534 15. 11
Մասնաւոր Հասոյթներէն	» 553.—.—
Արտասովոր Հասոյթներէն	» 28.12. 4
Գումար	Ա. Ո. 1116. 8 3

Այս ծախքերը, որ մանրամասնուած են թիւ 3, 4 եւ 5 կցեալներուն մէջ, կատարուած են պարտադիր կամ մասնաւոր յատկացումներ ունեցող նուիրատուութեանց պայմանագրութեանց համաձայն: Կենսաթոշակներու վճարուած գումարը պիտի դործածուի մեր դանազան ձեռնարկներուն՝ երբ դադրին ապագային:

IV.— ԶԱՆԱԶԱՆ ՓՈՆԱՆՅՈՒՄՆԵՐ

Այս գլուխին մէջ կ'երեւայ Ա. Ո. 785-19-9 գումար մը, որ կազմուած է հաշուական փոխանցումներով, Մասնաւոր Հասոյթներէն տարուած Ընդհ. եւ Արտ. Հասոյթներուն եւ պարտական հաշիւներուն:

V.— ԸՆԴՀԱՆՈՒՐ ԾԱԽՔԵՐ

1935ին, մեր Ընդհանուր Ծախքերը հետեւեալներն են (տե՛ս կցեալ թիւ 7). —

ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ԳՐԱՍԵՆԵԱԿ	
Վարչական ծախք	Ա. Ո. 4130.14.10
Բրոքականի ծախք	» 824. 7. 0
Տուրքեր	» 192.14. 6
Տեղ. Մասնաժողովներու ծախք	» 528.11. 1
Գումար	Ա. Ո. 5676. 7. 5
Փոխադրելի	» 5676. 7. 5

Ա. Ո. 5676. 7. 5

ԱՄԵՐԻԿԱՅԻ ՇՐՋ. ՑԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Վարչական ծախք	Ա. Ո. 1838. 7. 2
Բրոքականի ծախք	» 25. 6. 3
Տեղ. Մասնաժողովներու մասնակի ծախք (1)	» 41.—.—
Գումար	» 1904.13. 5

ԵԳԻՊՏՈՍԻ ՇՐՋ. ՑԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Վարչական ծախք	Ա. Ո. 841. 8. 5
Բրոքականի ծախք	» 196. 5. 4
Տեղ. Մասնաժողովներու ծախք	» 773.10.10
Գումար	1811. 4. 7
Համագումար	Ա. Ո. 9392. 5. 5

VI.— ՀԱՄԱԳՈՒՄԱՐ ՅԱՏԿԱՅՈՒՄՆԵՐՈՒ ԵՒ ԾԱԽՔԵՐՈՒ

Ըստ նախորդ գլուխներու, յատկացումներն ու ծախքերը հետեւեալ գումարներուն կը հասնին. —

Ընդհանուր Հասոյթներ (տե՛ս կցեալ թիւ 3)

Իրամագլուխներու վրայ բարդուած գումարներ	Ա. Ո. 1233. 3. 2
Ձեռնարկներու համար ծախսուած	» 23110. 4. 6
Կենսաթոշակներ եւ մասնաւոր յատկացումներ	» 534.15 11
Ընդհանուր ծախք	» 8112. 4. 6
Գումար	Ա. Ո. 32990. 8. 1

Մասնաւոր Հասոյթներ (տե՛ս կցեալ թիւ 4)

Իրամագլուխներու վրայ բարդուած գումարներ	Ա. Ո. 5986.11. 0
Ձեռնարկներու համար ծախսուած	» 4663.13. 4
Կենսաթոշակներ	» 553.—.—
Ընդհանուր եւ արտակարգ հասոյթներու եւ պարտական հաշուի փոխանցում	» 785.19. 9
Ընդհանուր ծախք	» 589.11. 6
Գումար	» 12578.15. 7
Փոխադրելի	Ա. Ո. 45569. 3. 8

(1) Ամերիկայի տեղական Մասնաժողովներու մեծագոյն մասը զուտ հասոյթները միայն հաշուի անցընելու սովորութիւնը ունենալուն, Շրջ. Ցանձնաժողովին ուշադրութիւնը հրաւիրուած է մուտքին կողմը հասոյթները եւ ելքին կողմը ծախքերը առանձնապէս նշանակելու անհրաժեշտութեան վրայ:

Փոխադրեալ Ա. Ո. 45569. 3. 8

Արտասովոր Հասոյթներ (տե՛ս կցեալ թիւ 5)

Ձեռնարկներու համար ծախսուած	Ա. Ո.	9238.13.10
կենսամոշակ	»	28.12. 4
վարչական ծախսարժին	»	690. 9. 5

Գումար » 9957.15. 7

Համագումար (տե՛ս կցեալ Թիւ 2) Ա. Ո. 55526.19. 3

Գրամագլուխներու վրայ բարդուած գումարներ	Ա. Ո.	7219.14. 2
Ձեռնարկներու համար ծախսուած	»	37012.11. 8
կենսամոշակներ եւ մասնաւոր յատկացումներ	»	1116. 8. 3
Հաշուական փոխանցումներ	»	785.19. 9
Բնդիմանոր ծախք	»	9392. 5. 5

Գումար Ա. Ո. 55526.19. 3

Գ . Գ Լ Ո Ի Խ

31 ԴԵԿՏԵՄԲԵՐ 1935 ԻՆ ՏՐԱՄԱԴՐԵԼԻ ԳՈՒՄԱՐՆԵՐ

Հասոյթներուն համագումարէն (տե՛ս Գլուխ Ա.)	Ա. Ո.	81014.17. 9
գեղջիկով վերոգրեալ յատկացումներն ու ծախքերը	»	55526.19. 3
1935 Գեկտ. 31 ին տրամադրելի գումարն է՝ փոխանցուած		
1 Յունվար 1936 ին	»	<u>25487.18. 6</u>

Այս գումարը հետեւեալ կերպով կը բաժնուի զանազան գլուխներուն վրայ .—

Բնդի. Հասոյթներ	Ա. Ո.	8920. 3. 3
Մասնաւոր Հասոյթներ	»	7043. 2. 1
Արտասովոր Հասոյթներ	»	9524.13. 2

Վերոգրալ գումարը (տե՛ս Թիւ 2, 3, 4 եւ 5 կցեալները) Ա. Ո. 25487.18. 6

որ արդէն ներկայ տարուան ընթացքին յատկացուած է կամ պիտի

յատկացուի ամբողջութեամբ ձեռնարկներու, ըստ մեր Հիմնական կանոնադրին, պարտադիր կամ մասնաւոր յատկացումներով եղած կտակներու եւ նուիրատուութեանց, ինչպէս նաեւ հանդանակութեանց պայմաններուն :

Բ . Բ Ա Ժ Ա Ն Ո Ի Մ

ՀԱՇՈՒԵԿՇԻՈՒ 31 ԴԵԿՏԵՄԲԵՐ 1935 ԻՆ

Յետագայ երկու գլուխներուն մէջ կը բացատրենք Հաշուեկշիւին իւրաքանչիւր թուանշանը սկսելով պարտքէն :

Ա . Գ Լ Ո Ի Խ

ՀԱՇՈՒԵԿՇԻՈՒԻՆ ՊԱՐՏՔԸ

Ա. — ԳՐԱՄԱԳԼՈՒԽՆԵՐ

I. — ՀԻՄՆԱԿԱՆ ԳՐԱՄԱԳԼՈՒԽ

31 Գեկտեմբեր 1934 ին Մայր Տոմարին արձանագրութեանց համաձայն մեր Հիմնական Գրամագլուխին արժէքն էր	Ա. Ո.	64288. 4.10
1935 ին (տե՛ս կցեալ Թիւ 2) այս Գրամագլուխին վրայ բարդուած են՝ մուտքի տուրքերը	»	119. 3. 9
	Գումար	» 64407. 8. 7
Աւելցնելով արձեմուղներու վաճառումն գոյացած շահը	»	7505.14. 5
31 Գեկտեմբեր 1935 ին Հիմնական Գրամագլուխին արժէքը եղած է	Ա. Ո.	<u>71913. 3. 0</u>

Վերոյիշեալ Գրամագլուխը կը բաղկանայ՝

Թրքմի մաս կազմող արձեմուղներէ	»	67666. 3. 2
Գրամատանց մէջ պահուած արձեմուղներէ	»	2348 12. 7
Շարժուն գոյքերէ	»	888.19. 0
Անշարժ գոյքերէ	»	674.13. 4
Հնչուն դրամէ	»	334.14.11

Գումար (տե՛ս կցեալ Թիւ 8) Ա. Ո. 71913. 3. 0

II. — ՊԱՐՏԱԳԻՐ ԿՏԱԿՆԵՐՈՒ ԵՒ ՆՈՒԻՐԱՏՈՒՈՒԹԵԱՆՅ

ԴՐԱՄԱԳԻՈՒԽՆԵՐ

Պարտադիր կտակներու եւ նուիրատուութեանց Գրամագլուխներուն (այս Գլուխին մէջ կը մտնէ Մեղգոնեան Նուիրատուութիւնը) արձանագրուած արժէքն էր, 1934 Գեկտեմբեր 31 ին,

Ա. Ո. 544358.10. 9

Զեղչելով արժեթուղիներու վաճառումէն գոյացած վնասը

» 792.15. 9

1935 Գեկտեմբեր 31 ին այս Գրամագլուխներուն արձանագրուած արժէքն է

» 543565.15. 0

որ կը բաղկանայ՝

Թրքսթի մաս կազմող արժեթուղիներէ

Ա. Ո. 460722.13. 6

Գրամատան մէջ պահուած արժէքազուրկ արժեթուղիներէ

» 1.—.—

Աշնարժ կալուածներէ

» 75096. 6. 9

Հնչուն դրամէ

» 7745.14. 9

Գումար (Տե՛ս կցեալ Թիւ 8) Ա. Ո. 543565.15. 0

III. — ՄԱՍՆԱԻՈՐ ՅԱՏԿԱՅՈՒՄՆԵՐՈՎ ԿՏԱԿՆԵՐ

ԵՒ ՆՈՒԻՐԱՏՈՒՈՒԹԻՒՆՆԵՐ

1934 Գեկտեմբեր 31 ին այս Գրամագլուխներուն արձանագրուած արժէքն էր

Ա. Ո. 286410.14. 0

Շահ արժեթուղիներու վաճառումէն

» 4262. 9. 0

Գումար . 290673. 3. 0

ուրիշ գեղչուեցած

վեճի, Սահակ կաթողիկոսի վերադարձուած գումարը

Ա. Ո. 100.—.—

Տիկ. Կ. Շ. ի կենսամոռչակին յատկացուած

» 1340. 2. 7

Տիկ. Տ. Զ. ի

» 508 10. 2

Գումար » 1948.12. 9

Փոխադրելի Ա. Ո. 288724.10. 3

Փոխադրեալ Ա. Ո. 288724.10. 3

Իսկ 1935 ին ստացանք հետեւեալ կտակները եւ նուիրատուութիւնները

ա) Տ. Պ. Կ. Ա. Ո. 3634.10. 6

բ) Ողբ. Ճոն Պոննոբեան » 492.17. 4

գ) Ողբ. Տորթ. Ա. Հէճիւնեան » 540.—.—

4667. 7.10

դ) Լազարեան վարդապետի 1934 ի մասնաւոր հիմնադրամին հասոյթներէն փոխանցուած

» 118. 9. 4

Գումար 4785.17. 2

Ասկէ զատ նուիրատուութեանց պայմաններուն համաձայն, Գրամագլուխի վրայ բարդեցինք հետեւեալ կտակներուն եւ նուիրատուութեանց եկամուտները՝

Հիմնադրամ Նուպարեան Սաներու Ա. Ո. 397. 9.11

Հիմնադրամ Մարի Նուպար Ակնաբուժարանի . 138.17. 1

Հիմնադրամ Նուպարեան Մատենադարանի . 91.19. 0

Հիմնադրամ Յ. Գրբեաշարեանի » 28. 0. 2

Հիմնադրամ Ա. Լյնսեանի » 157. 0 11

Գումար » 813. 7. 1

Հետեւաբար մասնաւոր յատկացումով կտակներու եւ նուիրատուութեանց ընդհ. արժէքը 1935 Գեկտ. 31 ին եղաւ համապատասխան

Ա. Ո. 294323.14. 6

Այս համադրումարը բաղկացած է հետեւեալ կերպով (տե՛ս կցեալ Թիւ 8) . —

Թրքսթի մաս կազմող արժեթուղիներ Ա. Ո. 102405.13. 7

Գրամատանց մէջ պահուած արժեթուղիներ » 107530. 5. 7

Աշնարժ գոյքեր - 72775 5 10

Շարժուն գոյքեր - 3189. 0. 4

Հնչուն դրամ » 4521. 0.10

Պարտական հաշուով պահանջներ » 3902. 8. 4

Գումար Ա. Ո. 294323.14. 6

Բ. — ՊԱՀԵՍՏԻ ՀԻՄՆԱԴՐԱՄ

I. — ՊԱՀԵՍՏԻ ՀԻՄՆԱԴՐԱՄ ՀԻՄՆ. ԴՐԱՄԱԳԼՈՒԽԻ

1934 Գեկտեմբեր 31 ին այս Հիմնադրամն էր	Ա. Ո. 4741. 6. 5
1935 ին (տե՛ս կցեալ Թիւ 3) այս Դրամագլուխին վրայ բարդուեցան՝	
ա) Անդամալճարներու 1/6 ր	Ա. Ո. 865. 6. 6
բ) Հիմնական դամագլուխի եկամուտին 1/10 ր	» 237.17.11
գ) Պարբերաշրջման կանխատեսութեամբ	» 10.15. 0
Գումար	» 1113.19. 5
1935 Գեկտեմբեր 31 ին այս Հիմնադրամին գումարն է	Ա. Ո. 5855. 5.10

II. — ՊԱՀԵՍՏԻ ՀԻՄՆԱԴՐԱՄ

ՄԱՍՆԱԽՈՐ ՅԱՏԿԱՅՈՒՄՆԵՐՈՎ ԵՂԱԾ ԿՏԱԿՆԵՐՈՒ ԵՒ ՆՈՒԻՐԱՏՈՒՈՒԹԵԱՆՅ ԴՐԱՄԱԳԼՈՒԽՆԵՐՈՒՆ

Այս Հիմնադրամն էր 1934 Գեկտեմբեր 31 ին	Ա. Ո. 7107. 4.10
1935 ին ասոր վրայ բարդուեցան՝	
Նուիրատուութեանց պայմանագրութեանց մէջ կանխատեսուած յատկացումները որ կը ներկայացնեն (տե՛ս կցեալ Թիւ 4)	» 505.16. 1
	7613. 0.11
ուրիշ գեղչուեցաւ մի բանի հիմնադրամի դրամագլուխին փոխանցուած	» 0.15. 2
1935 Գեկտեմբեր 31 ին այս Հիմնադրամին գումարն է	Ա. Ո. 7612. 5 9

Գ. — ՊԱՀԱՆՋԱՏԷՐ ՀԱՇՅԻՆԵՐ

I. — ԱԻԱՆԴԻ ՀԱՇՅԻ

Աւանդել հաշիւը կը պարունակէ՝

ա) Ա. Հիմնարկութեան Դրամագլուխի հաշուոյն՝	
Դրամատան մէջ պահուած արժեթուղթերը՝ որոնց յայտարարուած արժեքն է	Ա. Ո. 11213. 7. 8
Պատրաստ դրամ	» 288.10. 1
Գումար	Ա. Ո. 11501.17. 9
բ) Եգիպտոսի որբուհիներուն խնայողութիւնը	» 5292.19. 0
գ) Ուրիշ գրեմական աւանդներ	» 7180.11. 3
Համագումար	Ա. Ո. 23975. 8. 0

II. — ԶԱՆԱԶԱՆ ՊԱՀԱՆՋԱՏԷՐՆԵՐ

Զանազան պահանջատէրներու հաշիւը կը պարունակէ՝

ա) Գումարներ որ իրր ծախք ցոյց տրուած են 1935 Տարեշրջանի հաշիւներուն մէջ՝ Ձեռնարկներու եւ կենսամոշակներու համար, որովհետեւ այդ տարեշրջանին ծախքերուն կը պատկանին եւ սակայն 1936 տարուան մէջ վճարուած են՝	Ա. Ո 1843. 5. 7
բ) Զարեհ Պէյ Նուպարի պահանջը Հայաստանի մէջ Բարեգործականի Տան շինութեան համար	» 2400. — —
գ) Պահանջատեր ուրիշ հաշիւներ	» 589.18. 2
որ կ'ամբողջացնեն Հաշուեկշիւին մէջ նշանակուած գումարը	Ա. Ո. 4833. 3. 9

Դ. — ԳԵՆՏ. 31 ԻՆ ՏՐԱՄԱԳՐՅԵՒ ԳՈՒՄԱՐՆԵՐ

1935 Գեկտեմբեր 31 ին տրամադրելի գումարներուն համար՝ տե՛ս ներկա Տեղեկագրին 29-րդ էջը	Ա. Ո. 25487.18. 6
---	-------------------

Բ. ԳԼՈՒԽ

ՀԱՇՈՒԵԿՇԻՈՒԻՆ ԳՈՅՔԸ

Վերոյիշեալ պարտքին դէմ ունինք յետադայ հասուածներու մէջ յիշուած գոյքը:

I. — ՇԱՐԺՈՒՆ ԵՒ ԱՆՇԱՐԺ ԳՈՅՔԵՐ

Ունինք հետեւեալ գոյքերը՝

ա) Թրքոսի մաս կազմող արժեթուղթեր (արձանագրութեան արժէք)	Ա. Ո. 630794.10. 3	
Դրամատանց մէջ արժեթուղթեր (արձանագրուած արժէք)	1. Զանազան դրամագլուխներու հաշուոյն	109879.18. 2
	2. Ա. հիմն. հաշուոյն	11213. 7. 8
	3. Բարեգի Աղբատախնամ	150. — —
	4. Տրամադրելի գումարներու հաշուոյն	15726 12. 9
Գումար	136969.18. 7	
բ) Անշարժ գոյքեր որոնց արձանագրուած արժէքն է	» 148546. 5.11	
գ) Շարժուն գոյքեր որոնց արձանագրուած արժէքն է	» 4077.19. 4	
Համագումար	Ա. Ո. 920388.14. 1	

Թիւ 8 կցեալին մէջ պիտի գտնէք այս դոյքերուն բաժանումը զանազան Դրամազուտներու մէջէն:

II. — ՊԱՏՐԱՍՏ ԴՐԱՄ

Մեր գոյքը իբր պատրաստ դրամ՝ որ մանրամասնումս է հաշուեկշիռին մէջ, կը ներկայացնէ համագումար Ա. Ո. 46681 7. 2

Ստիպում ենք 1935 թիւ 31 ին արամադրելի գումարը հնչուն դրամով պահել, որովհետեւ սահմանումս է Չեւնարկներու եւ Հիմնարկութեանց, 25487 18. 6

մնացորդը Ա. Ո. 21193. 8. 8

Կը բաղկանայ գլխաւորաբար Դրամազուտներուն եւ մանաւանդ Պահեստի Հիմնադրամներուն հնչուն պատրաստ գումարէն, ինչպէս նաեւ աւանդ Սողում գումարներէն:

III. — ՊԱՐՏԱԿԱՆ ՀԱՇՅԻՆՆԵՐ

Չանագան պարտականներու հաշիւը կը պարունակէ գանձելի պահանջներ որ կը բաղկանան՝

ա) Ընդհանուր, Մանաւոր եւ Արտատուր հասոյթներու հաշուոյն պարտական գումարներէ՝ որ իրենց պայմանաժամին պիտի գանձուին Ա. Ո. 7097. 4 6

բ) Երեսանի մէջ Բարեգործականի Տան կառուցման համար եղած փոխառութեանէն » 2400. — . —

գ) Պարտական ուրիշ հաշիւներէ » 999. 8. 7

որ կ'ամբողջացնեն հաշուեկշիռին մէջ նշանակուած **Գումար** Ա. Ո. 10496.13. 1

Գ. Մ Ա Ս

ԿՏԱԿՆԵՐ ԵՒ ՆՈՒՒՐԱՏՈՒՈՒԹԻՒՆՆԵՐ

Ա. — ՆՈՐ ՀԻՄՆԱԴՐԱՄՆԵՐ

Այս գլուխին մէջ կ'ամփոփենք այն նոր կտակները եւ նուիրատուութիւնները զոր 1935 ին ստացած ենք, արձանագրելով Մասն. Դրամազուտի հաշուոյն, իբրեւ առանձնաշատուկ հիմնադրամ: Ատոնց համագումարն է Անգլ. ոսկի 4667.7.10:

1.— Միութեան Եզրպատտի վեթերան անդամներէն Պ.Կ. պայմանաւոր նուիրատուութիւն մը ըրաւ, 3634.10.6 Անգլ. ոսկիի արժեթուղթեր յանձնելով, որոնց եկամուտը իր մահուանէ վերջ պիտի յատկացուի դպրոցի մը հաստատման:

2.— Միացեալ Նահանգներու Այօլա նահանգին Անամողա քաղաքը բնակող բարեսէր ազգայինի մը՝ Տօքթ. Արամ Հէճինեանի կտակին համաձայն Միութեանս վճարուած է Անգլ. ոսկի 540, որուն եկամուտը յառաջիկային պիտի յատկացուի նոր Արարկիբի երիտասարդներէն միտին բարձրագոյն կրթութեան, Երեւանի Պետական Համալսարանին մէջ:

3.— Գահիրէի հիմնադիր անդամներէն ողբ. Տ. Օհանիկ Պօնճուկեան յօդուտ Միութեանս իր կեանքը ապահովադրած ըլլալով, գանձեցինք Անգլ. ոսկի 492.17.4 յօդուտ Միութեանս ձեռնարկներուն:

Բացի վերոգրեալ կտակային հիմնադրամներէն, կ'արձանագրենք նաեւ հետեւեալ կտակները որ ծանուցուած են 1935 ին, բայց անոնց դործադրութեան պիտի անդրադառնանք յաջորդ Տեղեկագրին մէջ.—

1.— Գահիրէ քաղաքի ողբ. Տ. Վաղարշակ Թօլիալեան, որուն մահը տեղի ունեցաւ Բարիդ, անցեալ տարի, 2000 Եգ. ոսկիի օրինաւոր կտակ մը ըրած է:

2.— Սուլթանապատ հաստատուած աղբայրիներէն ողբ. Տ. Նիկողոս Մորճիկեանի կտակին համաձայն, կտակարարներուն կողմէ ներկայ տարուան ընթացքին Միութեանս յանձնուած է 12500 տուարի գումար մը, որուն եկամուտը պիտի յատկացուի որբերու դաստիարակութեան:

3.— Ներկայ տարուան մէջ դանձուեցաւ նաեւ նախապէս ծանուցուած կտակադրամի մը մնացորդ գումարը, 1575 տուար, Օրէնճի (Մ. Ն.) մէջ վախճանած Տ. Անդրէաս Զօթեանի կտակին համաձայն:

Բ.— ԶԱՆԱԶԱՆ ՆՈՒԻՐԱՏՈՒՈՒԹԻՒՆՆԵՐ

Ստորեւ կ'ամփոփենք այն կարեւորագոյն նուիրատուութիւնները (աւելի քան 50 ոսկի) զոր անցեալ տարի ստացած ենք, ոչ թէ որպէս հիմնադրամ, այլ իբր անմիջական նպատակներու յատկացուելիք նըպաստադրամ, եւ զոր ըստ պարագայի արձանագրած ենք Ընդհ. կամ Արտ. Հասոյթի գլուխներուն մէջ:

1.— Միութեանս նախորդ Նախագահ եւ Բարերար Անդամ Տ. Գարուստ Կիւլպէնկեան իր պաշտպանութեան տակ առած Կեսարիոյ եւ Շողատի շրջանի որբերուն դաստիարակութեան համար անցեալ տարի եւս մեղի յանձնեց 600 Անգլ. ոսկի, ինչպէս նաեւ իր սովորական տարեվճարը Ֆր. 12000, յօգուտ Մարսէլի դորձադուրկներուն Ֆր. 10000, եւ Լիոնի հայերէնի դասընթացքներուն համար եւս Ֆր. 2000:

2.— Սուլթանապատի Միութեանս վաղեմի անդամներէն ողբ. Տ. Յակոբ Վարժապետեան իր կեանքը ապահովադրած ըլլալով, յօգուտ Հ. Բ. Ը. Միութեան, դանձուեցաւ Ֆր. 17780, առողջապահական նպատակներու համար:

3.— Բարերար Անդամ Տ. Տիգրան Թէյլըր (Լօս Անճէլլոս) 1500 տուարի նուիրատուութիւն մը եւս ըրաւ, Մամլիթէյնի Բուժարանին տեղ Լիբանանի բարձունքը շինուելիք սանաթօրիոմին համար:

4.— Շիքակոյէն ողբ. Տ. Ճօն Գասպար Մուրատեանի կտակին հիման վրայ դանձեցինք տուար 902.35, յօգուտ որբերու դաստիարակութեան:

5.— Ժընէվի Նանսէնեան Միջաղբայրին Օֆիսը անցեալ տարի եւս մեր արամադրութեան տակ դրաւ 20000 Զուլից. Ֆրանքի նպաստադրամ մը, զոր ըստ համաձայնութեան յատկացուցինք Սուրբոյ, Յունաստանի եւ Պուլկարիոյ դորձադուրկ կարօտեաններու:

6.— Միութեանս Նախագահ Զարեհ Պէյ Նուպար Երեւանի Բաղդորձականի Տան հաշույն ամէն տարի իրեն վերադարձուած 150 Անգլ. ոսկիին 1935 ի տարեվճարը ամբողջովին յատկացուց Հայաստանի Պետ. Համալսարանին (Ա.Ո. 138) եւ Նոր Եւզոկիա աւանին (Ա.Ո. 12), ինչպէս նաեւ 5000 Ֆր. արամադրեց Երեւանի Մարի Նուպար Ակնաբուժարանին զրկուելիք գործիքներուն համար:

7.— Բարերար Անդամ Վահրամ Պէյ Նուպար եւս այդ նպատակին համար յանձնեց Ֆր. 5000, ինչպէս նաեւ նոյնքան գումար մը ի նպաստ Բարիղի աղքատներուն:

8.— Բարերար Անդամ ողբ. Մարգար Միրզայի կտակին համաձայն, անցեալ տարի Ատիս-Ապէսպայէն ստացանք Ֆր. 9720, զոր յատկացուցինք Իզմիրցի չքաւորներու, գլխաւորաբար Յունաստանի մէջ:

9.— Մանչէսթրի (Մ. Ն.) բարեսէր աղբայրիներէն Տ. Գ. Թիւթիւնճեան, որ նախապէս իր եղբոր յիշատակին 3500 տուար նուիրած էր արգէն, 500 տուարի յաւելուածական նուէր մը եւս ըրաւ: Այդ առթիւ Պատուոյ Անդամ արձանագրեցինք ինքն ու իր ողբ. եղբայրը յետ մահու:

Դ . Մ Ա Ս

ՀԻՄՆԱՐԿՆԵՐ, ԶԵՌՆԱՐԿՆԵՐ ԵՒ ՆՊԱՍՏՆԵՐ

Այս գլուխին մէջ հակիրճօրէն կ'ամփոփենք Միութեանս սեփական եւ նպաստընկալ հիմնարկութիւնները, օգնութեան գանազան ձեռնարկները, վարկերը եւ նպաստները, դասաւորելով եօթը ստորաբաժանումներու մէջ.— Հայաստանի ձեռնարկներ, Որբերու օգնութիւն, Կրթական հաստատութիւններ, Մշակութային ձեռնարկներ, Առողջապահական ձեռնարկներ, Պատրիարքարաններու յատուկ վարկեր եւ Գաղթականներու օգնութիւն:

Ինչպէս որ ամփոփուած է թիւ 2 հաշուեցոյցին եւ մանրամասնուած է թիւ 6 կցեալին մէջ, 1935 տարուան օգնութեան մարդերուն համար ծախսուած ընդհանուր գումարն է Անդլ. ոսկի 37012.11.8:

Ա.— ՀԱՅԱՍՏԱՆԻ ԶԵՌՆԱՐԿՆԵՐ

1.— ՆԵՐԳԱՂԹ

Մեր նախորդ Տեղեկագրին մէջ ընդարձակօրէն պարզած էինք այն բարձրագոյնի գիմումները զոր ըրած էինք, ներգաղթի համար, դադարեցան աշխատաւորներու գործադրութիւնը աւելի քան երբեք անհրաժեշտ դարձուցած ըլլալով այդ կենսական ձեռնարկին յաջողութիւնը, ձեռնարկ զոր Հ. Բ. Բ. Միութիւնը նկատած է եւ միշտ կը նկատէ արդապահանջութիւն եւ հայրենաշինութեան իր ծրագրին անբաժան եւ կարեւորագոյն մասը:

Մեր հետապնդումները շարունակեցինք անցեալ տարուան առաջին ամիսներու ընթացքին եւս, ամէն ուղղութեամբ: Մեր Նախագահը յատկապէս դիմեց նախորդ Վարչապետ Սահակ Տէր Գարրիէլեանի եւ յետոյ ներկայ Վարչապետ Ա. Գուրջեանի, որ բարեացակամ յուսադրումներով պատասխանեցին կատարուած գիմումներուն: Դիմումներ ըրինք նաեւ ժընէվ եւ բարձրէն արուած խորհուրդներուն անսալով Մոսկուա ալ: Յաջողութեան բարեբաստիկ լուրին անձկութեամբ կը սպասէին հազարաւոր անդործ ու հայրենաբաղձ

աշխատաւորներ, որ արձանագրուած էին Միութեանս եւ «ՀՕԿ»ի մօտ:

Վերջապէս, Երեւանէն պաշտօնական հեռագիրներ հաղորդեցին թէ՛ Կառավարութիւնը որոշած է Ֆրանսայէն 1200 գաղթականներ ընդունիլ եւ թէ՛ այդ գործը գլուխ հանելու համար քաղ. Դ. Շահավերտեան իբրեւ ներգաղթի Լիազոր գէպի Ֆրանսա կ'ուղեւորի: Ըստ ղեկուցման, ինչպէս որ ալ բաղձանք յայտնած էինք, նախապատուութիւնը կը տրուի այն գաղթականներուն զոր յանձնարարած են Հայաստանի մէջ աւան կամ Նուպարաշէնի մէջ թաղամաս կառուցանող հայրենակցականները:

Երբ քաղ. Շահավերտեան Բարիկ հասաւ, բաղձաթիւ խորհրդակցութիւններ ունեցաւ մեզի հետ, եւ գլխաւորաբար ներգաղթի Ֆօնտի Կեդր. Յանձնաժողովին հետ: Յետագային, ներգաղթի խնդրարկուներուն թիւը աւելի քան 7000 ըլլալով, Լիազորը որոշեց մանրակրկիտ քննութեան մը բովէն անցընել եւ յարմարագոյններուն ընտրութիւնը կատարեց անձամբ: Յաջողեցաւ որոշուած թիւը բարձրացնել 1800ի, մանուկները չի հաշուելու կարգադրութեամբ:

Յայտնի է թէ ձեւակերպութիւնները եւ բանակցութիւնները երկար տեւեցին, եւ ներկայ տարուան Մայիս 9 ին միայն Մարտէյէն կարելի եղաւ ճամբայ հանել 1800 գաղթականները, «Սինայա» չուզենալով: Սոյն ներգաղթը նախորդներուն հետ բաղձատելով շատ աւելի հանգստաւէտ պայմաններու մէջ տեղի ունեցաւ, չնորհիւ Ֆրանսական Կառավարութեան ցոյց տուած բարեացակամ օժանդակութեանց: Նանսէնեան Օֆիսին հետ, մեր Միութիւնը ընծայեց իր բարոյական եւ նիւթական լայն մասնակցութիւնը, գլխաւորաբար ստանձնելով ներգաղթողներուն եւ իրենց գոյքերուն փոխադրութիւնը մինչեւ Մարտէյլ, եւ չուզենալին վրայ եւս ապահովելով անոնց սնունդը մինչեւ Պաթում (չուրջ 150.000 Ֆրանք):

Մոսկուայի Կեդր. Կառավարութեան վերջերս ընծայած թանկագին ձեռնտուութիւնները, ի նպաստ ներգաղթողներու եւ յօգուտ Նուպարաշէնի եւ այլ աւաններու, մեզի կը ներշնչեն յոյսը թէ յառաջիկայ դարնան եւս կարելի պիտի ըլլայ խումբ մը հայրենակիցներ փոխադրել Հայաստան:

2.— ՆՈՒՊԱՐԱՇԷՆ

1935 տարուան միջոցին Նուպարաշէնի շինարարութիւնը ակընկալուած չափով չի յառաջելմեց եւ ջուրի պակասը, մասնաւորաբար,

թույլ չի տուաւ բնականաբար որ բնակիչներուն տնտեսական վիճակը բարելաւուի հողամշակութեամբ :

Մեր գիտողութեանց եւ հարցումներուն իբրև պատասխան, ահա թէ Երեւանէն ինչ կը գրուէր մեզի անցեալ տարի.—

« Նուպարաչէնի շինարարութիւնը բուն թախով յառաջ է դնում, կազմակերպուած կերպով : Մօտաւորապէս 300 հողի աշխատում են, եւ մինչեւ Հոկտ. 15 կիսաւարտ բոլոր շէնքերը եւ մի քանի նորեր եւս, մօտ երկու հարիւր սենեակ, ամբողջովին կ'աւարտին : Ծէնքերի արտաքին բարեկարգումը եւ տանիքների կըմխարների զետեղումը շարունակուում են, եւ շատ աւելի պիտի զեղեցկացնեն Նուպարաչէնի արտաքին տեսքը :

« Ձեր մի կարգ գիտողութիւնները արգարացի լինելով հանդերձ, պէտք է մտնալ որ ընդհանուր կերպով Նուպարաչէնի բարգաւաճման համար անհրաժեշտ եւ հիմնական ձեռնարկութիւնները սկսուած են, թէեւ դանդաղ, բայց անընդհատ յառաջ են տարուում : Այսպէս՝ երկրորդական լոյսը արդէն ստացուած է, Երեւան — Նուպարաչէն շօսէին հողային աշխատանքները աւարտած են եւ մնում են քարային աշխատանքները, առունները արդէն փորուած են, իսկ պէթոնի աշխատանքները հետզհետէ պիտի կատարուին : Միայն այս վերջին երկու կարեւոր ձեռնարկները, որոնք Նուպարաչէնի կեանք պիտի տան, մեծ ձեռնարկներ են, մեծ բլանների հետ կապ ունին եւ նւթական մեծ միջոցների կարիք ունեն : »

1935 Օգոստոսին Նուպարաչէն այցելած է Ժողկոմխորհի Նախագահ Գուրչեան, քաղաքապետ Մարտինեանի եւ Միութեանն ներկայացուցիչ Գարակէօղեանի հետ : Ականատես ըլլալով կատարուած աշխատանքներուն եւ նկատի ունենալով ներկայ կարելիութիւնները, վարչապետը կարգ մը որոշումներ տուած է, ընդ որս կարեւոր փոփոցներուն սալարկումին մասին : Որպէսպի տրուած որոշումները ապագային կատարուին, Կառավարութիւնը Նուպարաչէնի շինարարութեան ուղղակի պատասխանատուութիւնը յանձնած է Ներգաղթի Յանձնաժողովին, տրուած ըլլալով որ ան իր տրամադրութեան տակ ունի լայն միջոցներ եւ հարկ եղած շինուածանիւթերը :

Քաղ. Արսէն Յսայեանի անուանումը, որպէս Հայաստանի Օգն. Կոմիտէի Գլխ. վարչութեան եւ Ժողկոմխորհի կից կազմուած Ներգաղթի Կոմիտէի Նախագահ, Նուպարաչէնի ձեռնարկը, ինչպէս դադուեթահայ բոլոր ձեռնարկները, կը դնէ նոր ուղղութեան մը մէջ : Նորընտիր Նախագահը ըլլալով Խ. Հայաստանի ամէնէն օժտուած, երիտասարդ, կորովամիտ ու եռանդուն պետական ղեկավարներէն

մին, անոնց յաջողութիւնը եւ բարգաւաճումը կրնան նկատուիլ բոլորովին ապահովուած :

Քաղ. Յսայեանի առաջին դործերէն մին կ'ըլլայ քաղ. Գարակէօղեանի հետ այցելել Նուպարաչէնը, եւ, առկա միացած հարցերը տեղւոյն վրայ մանրակրկիտ ուսումնասիրելի վերջ, ըրած է կարգ մը կարգադրութիւններ եւ անմիջապէս դործի ձեռնարկած է :

Այդ մասին Երեւանէն ստացուած տեղեկագրին գլխաւոր հասուածները կ'արտադրենք ստորեւ.—

« Ա.— Նուպարաչէն — Երեւան խճուղու շինարարութեան համար պայմանագիր կնքուած է ճանապարհների վարչութեան հետ, շուրջ մէկ միլիոն բութի նախահաշիւով : Ընդօրոյթ կը սկսուի շինարարական աշխատանքներին եւ ամենաուշը մինչեւ դարուն շոտ ճանապարհը կ'աւարտի :

« Բ.— Պայմանագիր կնքուած է Կոմունալ բաժնի Պաշկեանի ուղղակի Նուպարաչէն խմելու եւ մասամբ ալ սոսոգման համար լայն եւ նոր խողովակներով ջուր բերելու համար : Հետաւորութիւնն է 20-21 քիլոմէթր : Այս աշխատանքը պիտի արժէ մէկ կամ մէկ միլիոն երկու հարիւր հազար բութի : Այս ջուրը ոչ միայն խմելու պիտի ծառայէ, այլ պիտի ուղղէ մօտաւորապէս 60-70 հեկտար հողամաս եւ այս նպատակի համար Նուպարաչէնում պիտի շինուի մի մեծ ջրամբար :

« Գ.— Երկրորդական լուսաւորութիւնը Նուպարաչէն հասած ըլլալով, այժմ բաժանուում են բոլոր բնակարաններին եւ Նոյեմբերեան տօներին առթիւ ամբողջ Նուպարաչէնը պիտի լուսաւորուի :

« Դ.— Նուպարաչէնի բնակչութեան տնտեսական պայմանների անմիջական բարելաւումին համար, կարգադրուած է Նուպարաչէնի սահմանամերձ ջրովի հողամասերից 200 հեկտար կցել Նուպարաչէնի, ուր բնակչութիւնը հնարաւորութիւն պիտի ունենայ ժամանակաւորապէս օգտագործելու մինչեւ Նուպարաչէնի ամբողջ տարածութեան հիմնական ուղղումը :

« Ե.— Նուպարաչէնի բոլոր բնակիչներին, իրենց անձնական կարիքներին համար անխախտ տրուում է կիթան ոչխարներ եւ ցեղային ընտիր հաւեր, հաւարութիւնը զարգացնելու նպատակով, ապահովելով նաեւ կերը :

« Զ.— Առաջիկայ գարնան պիտի կառուցուի Նուպարաչէնի բաղնիքը, ուր օրական 50-60 հողի հնարաւորութիւն պիտի ունենան իրենց լողանքը առնելու :

« Նուպարաչէնը դեռ կրտաւարա է, բնակչութիւնը վերջնականապէս հաստատուած եւ կռիւկտիով կամ անհատական աշխատանքներէ չէ անցած, այլ մեծ մասամբ լծուած է բնակարաններէ շինութեան: Առաջիկայ եղանակին միայն վերջնականապէս պիտի կրնայ նուիրուել արդիւնաւոր աշխատանքի: Այն ատեն միայն արդարացիօրէն կարելի է դատել թէ ի՞նչ աշխատանք է տարուած ցարդ եւ ի՞նչ պիտի լինի իր սպազան: »

Յետագային, քաղ. Եսայեանի 16 Յունվ. 1936 թուական ընդարձակ պաշտօնագիրը, Նուպարաչէնի անցեալին ու ներկան առարկայօրէն ուսումնասիրելէ յետոյ կը յանդի որոշ եւ լուրջ եզրակացութեան: Այդ կարեւոր տեղեկագրէն կը ներկայացնենք քանի մը էական քաղուածքներ. —

« Անցեալ տարիների ընթացքում Նուպարաչէնում կառուցուած են եղել 33 տներ 129 սենեակներով: Այս տարուայ համար կազմուած ծրագրի համաձայն, պէտք է կառուցուէր 19 շէնք 95 սենեակներով: Ուրախ եմ ձեզ յայտնելու, որ այս տարուայ ծրագիրն ամբողջապէս կատարուած է. 19 տուն արդէն պատրաստ են, այնպէս որ Նուպարաչէնը ներկայումս ունի 52 բնակելի շէնքեր 224 սենեակներով, աւանց հաշուելու խոհանոցները եւ միւս յարմարութիւնները:

« Այս տարուայ կառուցուած շէնքերը թէ՛ իրենց արտաքին տեսքով, եւ թէ՛ իրենց որակով շատ աւելի լաւ են, քան թէ անցեալում կառուցուածները: Եթէ այս բնակարանները մենք համեմատենք Հայաստանում դոյութիւն ունեցող նման աւանների բնակարանների հետ, ապա առանց տատանումների կարելի է ասել որ նրանք ամէն բանով գերազանցում են միւսներին: Հակառակ այս բոլորին, մենք ծրագրել ենք սպազային աւելի լաւ հիմքերի վրայ դնել բնակարանային շինարարութիւնը, աշխատելով ստեղծել մաքսիմում յարմարութիւններ այնտեղ սարդ բնակիչներին համար:

« Ելնելով այս նպատակից, կառավարութիւնը որոշել է կառուցել գլխաւորապէս անհատական բնակարաններ, իրենց բոլոր յարմարութիւններով, 2-3-4 եւ մինչեւ 5 սենեակից բաղկացած: Այս բնակարանները, ըստ նախագծի, որը հաստատուելուց յետոյ խիզոյն ձեզ կ'ուղարկենք, լինելու են քարաշէն, կղմինտրէ տանիքներով, ունենալու են բացի խոհանոցից եւ արտաքնոցից, լողարան, նկուղ, պահեստի սենեակ: Բնակարանային շինարարութեան այս ձեւը, ճիշդ է, շատ աւելի մեծ գումարներ է պահանջում, բայց սպասովում է բնակիչներին աւելի մեծ առաւելութիւններ: Դրանցից ամենահիմնականը այն է, որ բնակիչներին հնարաւորութիւն է տալիս ունենալու

իրենց անհատական տնտեսութիւնը ստանալով բնակարաններին կից որոշ քանակութեամբ հող՝ տնամերձ այգի կամ ագարակ ստեղծելու համար: Նրանք կարող են պահել մեծ քանակութեամբ մանր եւ խոշոր եղջիւրաւոր անասուններ, հաւեր, մեղուներ, եւ այլն: Աւելորդ եմ համարում շեշտել, թէ ի՞նչ մեծ նշանակութիւն ունի այդպիսի տնտեսութիւնների ստեղծումը բնակիչների համար:

« Պարզ է որ աւանի կառուցման այս ձևն անհրաժեշտ է դարձնում Նուպարաչէնի յատակագծի վերաքննութիւնը: Բացի այդ, պէտք է յայտնեմ որ Ղոբրի ջրանցքը, որն ըստ իր հին պլանի անցնելու էր աւանի միջով, մի շարք պատճառներով որոշուած է անցկացնել Նուպարաչէնի ներքեւից, այնպէս որ աւանի մի մասն ընկնում է ջրանցքի վերեւը: Յանկալի էր շինարարութիւնը դարդանայ ջրանցքի ներքեւի մասում: Արդէն ձեռնարկել ենք յատակագծի վերաքննութեան աշխատանքներին: Կարող էք վստահ լինել որ նոր յատակագիծը ոչինչով վատ չի լինելու նախկինից, ընդհակառակը, նա հաշուէ է առնելու այն բոլոր բացերը, որոնք դոյութիւն ունին ներկայ յատակագծում եւ, հետեւաբար, լինելու է նրանից շատ աւելի լաւը: Յատակագծի վերաքննութեան եւ բարելաման աշխատանքների դեկավարութիւնը յանձնելու ենք դարձեալ ակադեմիկոս Թամանեանին:

« Նուպարաչէնին տրամադրուած հողամասը Հայաստանի ամենաբերրի, ամենալաւ հողամասերից է: Բայց այդ հողերի բերքատուութիւնը կ'ապահովուի միայն այն ժամանակ, երբ նրանք ջրում են: Դժբախտաբար, պէտք է խոստովանել թէ այդ հողերի ոռոգումը ներկայացնում է շատ աւելի մեծ դժարութիւններ եւ ծախսեր, քան թէ նախատեսել էին այդ աշխատանքների նախագիծը կազմող ինժեներները: Յետագայում պարզեց որ մի շարք վայրերում անհրաժեշտ է ջրանցքն ամբողջովին պատնէշել քարով եւ ցեմենտով, որովհետեւ այդ վայրերում ջուրը ծծւում է եւ մի մասը կորչում: Ըստ ջրային տնտեսութեան պատասխանատու աշխատակիցների յայտարարութեան, Ղոբրի ջրանցքի կառուցման աւարտումը եւ հետեւաբար Նուպարաչէնի հողերի լրիւ ոռոգումը պահանջում է լրացուցիչ 7-8 միլիոն բուրլի: Այս աշխատանքներն, ինչպէս գիտեք, սերտ կապ ունեն Քանաքեռի հիդրոկայանի կառուցման հետ, որը պէտք է աւարտի այս ամբան: Դրանով այդ հողերի ոռոգման գործը մեծ չափով հեշտանում է: Յամենայն դէպս, Նուպարաչէնի հողերի ոռոգումը 2-3 տարւայ գործ է՝ եթէ աշխատանքներն ինտեսիվ կերպով առաջ տարւին: Պարզ է ուրեմն որ Նուպարաչէնի բնակիչները, որոնք մինչեւ այժմ զրկւած էին գիւղատնտեսութեամբ պարապելու հնարաւոր-

բութիւնից, գրեւած պէտք է լինեն դեռ մի քանի տարի եւս նոյն հընարաւորութիւնից :

« Այս պայմաններում Նուպարաշէնցիները նիւթական գրութեան բարեփոխման, ինքնարաւ կեանք ստեղծելու խնդիրը կառավարութեան յատուկ ուշադրութեան եւ քննութեան առարկայ դարձաւ : Որոշեց շտապ իրագործել մի շարք ձեռնարկումներ, նպատակ ունենալով բարելաւել Նուպարաշէնցիները եւ նորեկների տնտեսական գրութիւնը : »

« Նուպարաշէնի բնակչութեան տնտեսական-նիւթական գրութեան բարելաւման համար կայացրել ենք մի շարք կարեւոր որոշումներ, օրինակ՝ արտադրել 200 հեկտար ջրովի հողեր (5-7 քիլոմէթր հեռաւորութեան վրայ), կազմակերպել տնայնագործական արտելներ (ներկայումս աշխատում է մի դորգի արհեստանոց, կազմը ավել 7-8 հոգուց բաղկացած կօշկակարանոց, եւ մօտ օրերս կը կազմակերպենք մի գերձակատուն ուր կ'աշխատին 20-30 կանայք), վերջապէս՝ դարդացնել տնտեսագրութիւնը (ոչխար, հաւ, մեզու, եւ այլն) : »

« Հարեւածային կարգով կառուցել եւ աւարտել ենք Նուպարաշէնի երեկտրիֆիկացիայի դործը : Ներկայումս Նուպարաշէնի ոչ միայն բոլոր փողոցները, այլ եւ բնակարանները լուսաւորում են երեկտրական լոյսով : Այս մի շարք ձեռնարկումները, կատարած վերջին մի քանի ամիսների ընթացքում, տեւել են արդէն իրենց գրական արդիւնքները :

« Ինչպէս ասացի, այս տարւայ համար կազմել ենք շինարարական խոշոր աշխատանքների ծրագիր : Երբ այդ աշխատանքները վերջանան, Նուպարաշէնը օժտւած կը լինի բոլոր հիմնական կոմունալ, կուլտուրական ձեռնարկների համապատասխան շէնքերով : Ներկայ բնակչութեան տնտեսական եւ կուլտուրական կարիքների ապահովումից յետոյ, 1937-38 թուականներին կ'աշխատենք արագացնել բնակարանային շինարարութիւնը : Թոյլ տւէք յիշատակել այդ ծրագրի հիմնական աշխատանքները եւ նրանց մօտաւոր արժէքը :—

« 1.— Զրմուղ Բաշգեաններից Նուպարաշէն ր. 500.000

Այս աշխատանքը խիստ անհրաժեշտ է, որովհետեւ գոյութիւն ունեցող Զրմուղը չի կարելի բաւարար համարել : Նոր կառուցուող Զրմուղը տալու

է խմելու ջուր Նուպարաշէնին, մինչեւ 20000 բնակչութեան համար, եւ, բացի դրանից, ջրելու է մօտ 50-60 հեկտար հող :

2.— Ծօսէի կառուցումը Երեւանից Նուպարաշէն 9 քիլոմէթր 800.000

Այս աշխատանքը նոյնպէս անհրաժեշտ է, եւ շօսէն ծածկելու է կուտրօնով կամ ասֆալտով :

3.— Աւանի բարեկարգում եւ ծառադարդում 100.000

4.— 16 տների կառուցումը 3-4 սենեակից, իրենց յարմարութիւններով 300.000

5.— Աւանի Խորհրդի շէնք 50.000

6.— Հիւանդանոցային կոմբինատ եւ նրա կահաւորումը 400.000

7.— Բաղնիք եւ նրա կահաւորումը 100.000

8.— Տասնամեայ դպրոցի շէնք եւ նրա կահաւորումը 400.000

9.— Մանկապարտէզ եւ նրա կահաւորումը 110.000

10.— Մանկամսուր եւ նրա կահաւորումը 120.000

11.— Թատրոն, կինո, դուր եւ նրանց կահաւորումը 330.000

Գումար ր. 3.210.000

« Այս թիւերը որ ես յառաջ եմ բերում, առայժմ պէտք է համարել մօտաւոր թիւեր : Ներկայումս մենք զբաղւած ենք նախագծեր ու նախահաշիւներ կազմելով : Այդ աշխատանքի աւարտումից յետոյ միայն կարելի է վերջնականապէս արժէքաւորել կատարուելիք աշխատանքները : Նախագծերի կազմումից ու հաստատումից յետոյ, ի հարկէ, ձեզ կ'ուղարկենք նրանցից մի օրինակ, աւելի լաւ ծանօթացնելու համար ձեզ կատարուելիք աշխատանքների հետ : Այս ծրագիրն ամբողջապէս դեռ կառավարութեան կողմից հաստատուած չէ :

« Այս ծրագրի կառավարութեան կողմից հաստատումը եւ, որ ամէնէն գլխաւորն է, նրա լրիւ եւ ժամանակին իրագործումը մեծ չափով կախւած է այն օգնութիւնից, որ դուք ցոյց տալու էք Նուպարաշէնին : »

Յարգելի Նախագահը կը լրացնէ իր ընդարձակ եւ վերին աստիճանի շահեկան գրութիւնը հետեւեալ սրտապնդիչ խօսքերով :—

« Թոյլ տւէք յոյս յայտնել որ մեր ընդհանուր ջանքերով Նուպարաշէնը

րաշէնը կը դառնայ, մօտիկ ապագայում, Հայաստանի ամենաբարեգարդ եւ ամենազեղչեցիկ աւաններէց մէկը: »

Երբ կը սպասէինք խոստացուած նորագոյն յատակադիժներուն եւ ծրագիրներուն, վերջին Յուլիսին ամենամեծ բերկրութեամբ իմացանք որ քաղ. Եսայեանի նախագահութեամբ յատուկ Պատուիրակութիւն մը Մոսկուա գացած է, Հայաստանի ներգաղթի եւ գաղութահայ շինարարական ձեռնարկները պարզելու համար Խ. Միութեան մեծ ղեկավարներուն, որ սրտազին համակրանքով լսած են այդ գեղուցումները եւ իրենց բարեացակամութեան դրական ապացոյցները տուած են, վեհանձնօրէն կարգադրելով մեծարժէք օժանդակութիւններ որ կոչուած են մեծապէս սատարելու ներգաղթի զարգացման եւ ներգաղթողներու տեղաւորման եւ բարեկեցութեան:

Ստորեւ նոյնութեամբ կը դնենք քաղ. Եսայեանի հեռագիրը, զոր Յուլիսին մեցի ուղղած է Մոսկուայէն.—

« Բարեբախտութիւնը ունիմ ձեզի հազորդելու որ Կառավարութեան Կեդր. Կոմիտէն եւ Խորհրդային Միութեան Կառավարութիւնը մանրակրկիտ կերպով քննեցին հայկական ներգաղթի հետ կապ ունեցող բոլոր խնդիրները, եւ ատոնց կարգին տակաւին չի լուծուած հարցերը որ Նուպարաշէնը կը շահագրգռեն: Որոշեցին անմիջապէս ձեռնարկել եւ յառաջիկայ տարի լրացնել հետեւեալ աշխատանքները.— ջրանցքին կառուցումը եւ խմելիք ջուրին փոխադրումը, Երեւան-Նուպարաշէն խճուղին, հարիւր ընտանիքի բնակութեան համար հարիւր տուն, իննամեայ շրջանով վարժարան մը, մանկապարտէզ մը, մսուր, հիւանդանոց, թատրոն: Ստացայ մեծաքանակ շինուածանիւթ եւ հարկ եղած վարկերը, այդ աշխատութեանց իրագործումին համար: Սոյն որոշումը ստորագրուած է Խ. Միութեան Կառավարութեան նախագահ Մոլոթովի եւ մեր մեծ առաջնորդ Սթալինի կողմէ: Կրնաք ապահով ըլլալ որ ձեռք առնուած են այն ամէն միջոցները որ պիտի ապահովեն տրուած որոշումներուն գործադրութիւնը, այնպէս որ 1937 ին Նուպարաշէնը օժտուած ըլլայ ոռոգելի եւ ըմպելի ջուրով, եւ ըլլայ Հայաստանի բարգաւաճ աւաններէն մին, ընդունելով ներգաղթող հարիւր ընտանիք եւս: Մանրամասնութիւնները Երեւանէն պիտի հազորդեմ նամակով: »

Այս գլուխը փակելէ առաջ, կը յայտնենք թէ 1930էն ի վեր Նուպարաշէնի հաշուոյն Հայաստանի Կառավարութեան յանձնած ենք 83452 Անգլ. ոսկիի գումար մը, որուն մէջ մեր Միութեան գործակցող

ինը Հայրենակցական Միութիւններ իրենց թաղամասերուն հաշուոյն ունին իրենց բաժինը, ցարդ կատարուած վճարումներու հիման վրայ.—

	Տոլար
Հապուսի	7111
Խուլու-Թլկատին	6250
Բալու	6250
Հաճըն	4272
Չնգուշ	2961
Քէօրփէ գիւղ	2500
Խոշմաթ գիւղ	2500
Չմշկածագ	2024
Ակն	900

Համագումար Տոլար 34768

3.— ՆՈՐ ԵՒԳՈՎԻՍ

Բնիկ Եւզոկիացի ողբ. Գ. Մէօթէմէտեանի կտակադրամին շընորհիւ Հայաստանի մէջ հիմնուած գաղութահայ անդրանիկ աւանը եղաւ Նոր Եւզոկիան, որ կը բարգաւաճի հետզհետէ, սպասելով որ թոքատցի հայրենակիցները եւս պէտք եղած հողածութիւնը ցոյց տան այդ կարեւոր ձեռնարկին մասին:

1935ի վերջը Երեւանէն ստացուած տեղեկագրէն, որ կը պարզէ Նոր Եւզոկիոյ ներկայ դրութիւնը, կ'ամփոփենք հետեւեալ տեղեկութիւնները.—

Ներգաղթի Կոմիտէի եւ ՀՕԿի Նախագահ Ա. Եսայեան այցելած է Նոր Եւզոկիա, եւ անձամբ տեղւոյն վրայ ստուգելով ամէն ինչ, շարք մը կարգադրութիւններ ըրած է, թէ՛ աւանին եւ թէ՛ բնակիչներուն վիճակը բարելաւելու մտահոգութեամբ:

Քաղ. Եսայեան յանձնարարած է Ներգաղթի Կոմիտէին, որպէս անոր Նախագահը, որպէսզի Նոր Եւզոկիային յատկացնէ 4 արկղ ապակի, 5 թօնօ կիր, որոշ քանակութեամբ տախտակ եւ 200 քիօ դամ: Առկէ գատ, նոյն Կոմիտէին հրահանգած է տրամադրել 37000 բուրբի փոխառութիւն մը, շատ մը կենսական պէտքեր իրագործելու համար: Իսկ Կոլխոզին տրուած է լրացուցիչ 8-10 հեկտար հող մշակութեան համար եւ 5 հեկտար այգի:

Այդ կարգադրութիւններուն մեծ մասը արդէն կատարուած է: Իսկ ուրիշներ, ինչպէս օրինակ՝ դոմի եւ պահեստի կառուցումը, պատրաստ կ'ըլլան դարձան: Կը հաստատուի թէ այս կարգադրութիւնները տարուան մը ընթացքին կուտան տնտեսական մեծ արդիւնք, եւ Նոր Եւրոպիայի նիւթական վիճակը դաւաճութիւն կը բարւոքի եւ կը դառնայ էջմիածնի շրջանի բարեկեցիկ համայնքներէն մին:

Բայց այս ամէնը դեռ շատ քիչ է Նոր Եւրոպիան շրջանին օրինակելի եւ բոլորովին ինքնարաւ աւանը դարձնելու համար: Անհրաժեշտ է աւելի մեծ դումար ծախսել այդ նպատակին հասնելու համար: Պէտք է բարեկարգել այդ աւանի բոլոր փողոցները, շինել 10-15 նոր բնակարաններ, խմելու ջուր տանիլ բնակարանները, կառուցանել նոր դպրոցական շէնք, մսուր եւ մանկապարտէզ:

Առ այդ Միութեանս կողմէ անցեալ տարի տրամադրուեցաւ 266 Անգլ. ոսկի, որուն 1000 տոլարը Նիւ-Եորքի Թորատի Կրթ. Ընկերութիւնը մեղի յանձնած էր:

Բաց աստի, մեր Նախագահը Զարեհ պէյ Նուպար 162 Անգլ. ոսկի յատկացուց բեռնատար ինքնաշարժ կառքի մը համար, զոր Նոր Եւրոպիա զրկեցինք:

4.— ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆԻ ՏՈՒՆ

Ի յիշատակ իրենց յաւէտ ողբացեալ հօր Պօղոս Նուպար փաշայի, իր մահուընէ վերջ իր չորս զաւակներուն կողմէ Միութեանս նուիրուած գումարով կառուցուած է « Բարեգործականի Տուն »ը, Երեւանի Արովեանի պողոտային վրայ, ահագեմիկոս ողբ. Թամանեանի յատակադիրն համաձայն:

Շէնքը անցեալ տարուան վերջերը աւարտեցաւ, եւ իր արդիւնական յարմարութիւններովը ու գեղեցիկ երեւոյթովը Երեւանի գեղեցկագոյն շէնքերէն մին կը նկատուի: Կը բաղկանայ 20 բնակարաններէ: Հինգերորդ յարկը ունի չորս աշխատանոցներ, նկարիչներու համար, իսկ գետնաշարիը ընդարձակ սրահ մը:

Ինչպէս յայտնի է, Բարեգործականի Տունը սահմանուած է բրօֆէսէօրներու եւ զխոնականներու բնակութեան:

Հոն պիտի ըլլայ նաեւ Միութեան կեդր. գրասենեակը եւ մեր ներկայացուցիչին բնակարանը, ըստ պայմանագրութեան:

5.— ՄԵԼԳՈՆԵԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԱԿԱՆ ՎԱՐԿ

Մելգոնեան Փօստի Գործադիր Յանձնախումբը, որ կը մատակարարէ Միութեանս կողմէ վճարուած տարեկան 3000 Եգ. ոսկին որ-

պէս Մելգոնեան վարկ, 1935 տարուան ընթացքին գործունէութիւնը կեդրոնացուցած է գլխաւորաբար Մատենադարանին շինութեան վրայ: Կառուցուած է շէնքին ձախ թեւը, իսկ Տպարանին երկու յարկերը, բանախօսութեանց սրահը եւ կեդրոնական մասը գրեթէ լրացած են: Տպարանին մեքենաներու բաժինը սկսած է շահագործման: Գրաշարատունը եւս գործի ձեռնարկած է:

Գիտհրատ տպարանին կազմակերպութեան ձեռնարկուած է 1934 ին եւ Միութեանս միջոցաւ ապստղուած են տպագրական եւ կազմարարական մեքենաներ: Տպարանը ստացած է նաեւ զանազան լեզուներով տպագրական տառեր, որոնցմէ կ'ունենայ բաւական հարուստ պաշար մը:

Շինարարական եւ կազմակերպչական գործերու հետեւանքով 1935 ին հրատարակչական բաժինը չունեցաւ այն թափը զոր ունեցած էր նախորդ երկու տարիները: Ասկէ զատ, Պետհրատի տպարանը, ծանրաբեռնուած ըլլալով, մերժեց նոր պատուէրներ ընդունիլ: Այսուհանդերձ, 1935 ին Մելգոնեան Յանձնաժողովը Բրօֆ. Ա. Խաչատրեանի յանձնարարեց պատրաստել « Ուրարտու - Արարատ » Խալտեան շրջանի Հայաստանի պատմութիւնը, եւ ընդունեց չորս ուրիշ աշխատութիւններ:

Մինչեւ Յունվար 1935, Մելգոնեան Յանձնաժողովը հրատարակած է 23 հատոր (ընդամէնը 9022 էջ): 1935 ին հրատարակուեցան հետեւեալ զիրքերը.—

Մելիքսեթ Բէդ՝ Վրաց պարիւրները Հայերի եւ Հայաստանի մասին (Ա. հատոր), Գ. Լեւոնեան՝ Հայոց պարբերական մամուլը, Սպ. Մելիքեան՝ Ուրուազիծ հայ երաժշտութեան պատմութեան, եւ Հր. Աճառեան՝ Արմատական բառարանի յաւելումը:

Տպագրութեան պատրաստ աշխատութիւնները կը ներկայացնեն 29796 էջ (աւելի քան 1500 մամուլ): Ասկէ զատ կան նաեւ մշակման եւ խմբագրման կարօտ ձեռագիրներ, 19072 էջ (953 մամուլ):

Պետական Համալսարանին Հայագիտական ամպիոններուն օժանդակութեան համար Յանձնաժողովը յատկացուցած է 12401 բուբլի: Երբ շինարարական ձեռնարկները լրանան, Յանձնաժողովը ի վիճակի պիտի ըլլայ աւելի լայնօրէն օժանդակելու Համալսարանին եւ Հայաստանի պատմութեան ու գրականութեան Ինստիտուտի հայագիտական ամպիոններուն:

1935 ին Յանձնաժողովը Համալսարանին մէջ պահեց երեք աս-բլիւրաններ, որոնք երկուքը քաղ. Սերոր Պօղոսեան եւ քաղ. Հմայեակ

Յարութիւնեան՝ Հայաստանի պատմութեան ամպլիոնին կից, եւ եր-
րորդը՝ քաղ. Գուրգէն Անտոնեան հայ գրականութեան ամպլիոնին
կից: Նախորդ տարի շրջանը աւարտած է «ասորիւրան» քաղ. Մկրտիչ
Մկրեան, որ այժմ Համալսարանին մէջ հայ գրականութեան «լեզ-
թէօր» է:

6.— ԴԱՐՈՒՀԻ ՅԱԿՈՒԲԱՆ ՄԱՅՐԱՆՈՅ

Երեւանի Դարուհի Յակոբեան Մայրանոցի վերատեսուչ Բրոֆ.
Գ. Արէշեանի զոյգ տեղեկագիրներէն կը քաղենք հետեւեալ մանրա-
մասնութիւնները.—

1934 տարուան ընթացքին Մանկաբարձական բաժինը ընդուն-
ուած են 3510, Կնախտարանական բաժինը 389 եւ Յետծննդեան բա-
ժինը 321, ընդամէնը 4220 հիւանդ:

Շրջուն բժշկական սպասարկութիւնը դարձանած է, առաջին եւ
կրկին այցելութիւններով, 3387 հիւանդ, իսկ մանկական խորհրդ-
ղակցութեանց թիւը եղած է 1994: Համադումար 5381:

Մանկաբարձական բաժինը ընդունուած 3510 հիւանդներէն, 805ը
յղի կիներ են, 2655ը ծննդաբեր, 49ը ծննդկան եւ մէկը հիւանդ:

Վերոյիշեալ 805 յղիներէն, 271ը ընդունուած են մանկաբար-
ձական ցուցմունքով, իսկ 534ը արհեստական վիժման համար: Յղի-
ներու թիւէն ազատած են 35 հոգի եւ արհեստական վիժման համար
ընդունուած 534 հոգին անցած են ծննդաբերներու բաժինը, որոնց
թիւը այսպէսով բարձրացած է 3224ի:

Այս դէպքերէն հասուն ծննդաբերութեանց թիւն է 1610, վա-
ղածամ ծննդաբերութեանց թիւը՝ 1495: Հասուն ծննդաբերներէն
1468ը Հայ են, 102ը Ռուս, 31ը Թուրք: 1610 ծննդաբերութիւններէն
1584ը միապտուղ են, իսկ 26ը երկուորեակ: 3 կին մեռած են ծննդ-
աբերութեան հետեւանքով: Ծնած երախաներուն թիւն է 1636,
որոնց 824ը մանչ եւ 768ը աղջիկ: Մեռած ծնած են 44 երախայ, իսկ
ծնելէ վերջ մեռած են 7: Իրենց մօր հետ մեկնած են 1585 երախաներ:

1495 վիժումներէն 961ը բնական են, իսկ 534ը արհեստական:
Այս վերջիններէն 16ը բժշկական, իսկ 534ը ընկերային պատճառնե-
րով (291ը նիւթական միջոցներու չզոյուցութիւն, 144ը բաղմանգամ
ընտանիք, մնացեալը դանազան պատճառներ):

49 ծննդականներէն 42ը Հայ են, 5ը Ռուս եւ 2ը Թուրք:
Մահերու ընդհանուր սակը եղած է 0,34 առ 100:
Կնախտարանական բաժինը ընդունուած 389 հիւանդներէն 337ը

Հայ են: Հիւանդներէն միայն 2ը մեռած են, իսկ յետծննդեան բա-
ժինը ընդունուած 321 հոգիէն 265ը Հայ են: Մահերու թիւն է 13:

Մայրանոցի կից Մանկաբարձական դպրոցը 1933 - 1934 տարե-
շրջանին ունեցած է 45 աշակերտ առաջին, 20 երկրորդ եւ 5 երրորդ
դասարանին մէջ:

Մանկաբարձական կնախտարանութեան ամպլիոնը Յրդ դասա-
րանի (65 հոգի) եւ 4րդ դասարանի (91 հոգի) համար կատարած է
մանկաբարձական եւ կնախտարանական դասաւանդութիւններ, հա-
մապատասխան դործնական աշխատանքներով:

1935 ին, Մայրանոցէն օգտուած են 9593 հոգի, հետեւեալ վի-
ճակացոյցին համեմատ:

Մանկաբարձական բաժնին մէջ ընդունուած է 3533 հոգի, կնախ-
տարանական բաժնին մէջ 431, յետ ծննդեան հիւանդութեանց բաժ-
նին մէջ 341, դումար 4305: Իսկ յաճախած են խորհրդակցութեան
համար կիներ 7526 եւ տղաք 2067, դումար 9593: Համադումար
13,898:

Մանկաբարձական բաժնին մէջ ընդունուած 3533 կիներէն 735ը
յղի, 2728ը ծննդաբեր եւ 70 ծննդական: Յիշեալ 735 կանանց 283ը
ընդունուած են մանկաբարձական ցուցմունքով, իսկ 452ը արհես-
տական վիժման համար, բաղման ընտանիք 128, միջոցներու սղու-
թիւն 4, ամուսինը հաշմանդամ 17, ուսանող 5, ծծկեր երախայ 128,
պատճառը չի նշանակուած 73: Ասոնցմէ 430ը դուրս դրուած են ա-
ռողջ, լաւացած 21 եւ 1 հոգի փոխադրուած յետ ծննդեան բաժի-
նը: Մանկաբարձական բաժնին մէջ ընդունուած 3533 կիներէն մե-
ռած են միայն 9ը:

Մանկաբարձական դպրոցի 1935-36 ուսումնական տարեշրջանին
մէջ, աշակերտներուն թիւը եղած է 52: Ասոնցմէ 19ը, 1936 Յուլիս
20ին վերջացներով աւարտական քննութեանց բոլոր աշխատանքները,
չըջանաւարտ եղած են:

Բացի Հ. Բ. Լ. Միութեան յանձն առած տարեվճարէն (800
Անգլ. ոսկի), զոր կը հատուցանենք Դարուհի Յակոբեան Հիմնա-
դրամի եկամուտէն, 1934 ին սոյն Մայրանոցին նուիրեցինք 203·13·7
Անգլ. ոսկի արժէքով բժշկական դործիքներ, գիրքեր եւ հանդէս-
ներ, իսկ 1935 ին Ա.Ո. 42·12·0 արժէքով:

Բ. — Ո Ր Բ Ե Ր Ո Ւ Օ Գ Ն Ո Ւ Թ Ի Ի Ն

Միութեան որբախնամ գործը հետզհետէ հաշուեյարդարի ենթարկուելով յանգած էր իր վախճանին, մասնաւորապէս Պէյրութի Գէլէկեան-Սիսուան երկսեռ Որբանոցի վերջաւորումովը: Նիկոսիոյ Մեղչոնեան Կրթ. Հաստատութիւնը, թէեւ սաներուն մէկ մասը որբեր են, բայց չենք դասեր սրբէս որբանոց, այլ Կրթական Ձեռնարկներու յետագայ գլուխին մէջ տեղ կուտանք անոր, սեփական եւ նպաստընկալ Վարժարաններու կարգին:

1.— ԱՂԵՔԱՆԴԻՐԻՈՅ ՈՐԲՈՒՀԻՆԵՐՈՒ ԿԱՅԱՆ

1935ին եւս Աղեքսանդրիոյ Որբուհիներու Կայանը շարունակեց իր գոյութիւնը մինչեւ Օգոստոս, երբ փափուեցաւ Տիկնանց Խնամակալութեան կարգադրութեամբ, որուամբ ըլլալով որ որբուհիները այլեւս չափահաս ըլլալով, ի վիճակի եղած էին հողալու իրենց պատասխարումի ծախքերը: Անոնք արդէն սկսած էին, իրենց անդործութեան շրջանին, բնակակցիլ իրենց ամուսնացած ընկերուհիներուն հետ, վճարումի մը փոխարէն, ինչ որ երկու կողմին ալ օգտակար ձեւ մըն էր: Ամուսնացած որբուհի կ'օգտուէր նիւթապէս, իսկ միւսը կը վախէր ընտանեկան յարկի մը առաւելութիւնները: Կայանի փափումէն վերջ բոլոր որբուհիներն ալ այս կերպ կարգադրեցին իրենց բնակութիւնը: Պարտինք յիշել թէ Աղեքսանդրիոյ որբուհիներու այս Կայանը, որ հաստատուեցաւ 1929 Սեպտեմբերին, երբ տեղւոյն որբապաշտպան Մարմինը բոլորովին կազմալուծուած էր, յոյժ օգտակար գործունէութիւն մը ունեցաւ, որբուհիները հասցնելով նիւթապէս ու բարոյապէս վիճակի մը ուր այլեւս կարող էին ինքզինքնին կառավարելու: Միութիւնն 1929 Սեպտեմբեր — 1935 Օգոստոս շրջանին համար այս Կայանին յատկացուցած է 1063 Եդ. ոսկիի գումար մը, իսկ մնացեալ գումարը հողացուած է Տիկնանց Խնամակալութեան կողմէ սարքուած հաստեմբեր ձեռնարկներով ու որբուհիներէ գանձուած պարենադիւններով:

Հոս պարտք կը զգանք գնահատանքի ջերմ զգացումներով ի վեր հանել այն զմայելի անձնութիւնը որով այս գործին լծուեցան Տիկնանց Խնամակալութիւնը եւ գլխաւորաբար ատենապետուհի Տիկին Վիքթորիա Արշարունի:

2.— ԳԱՀԻՐԷԻ ՈՐԲՈՒՀԻՆԵՐՈՒ ՊԱՇՏՊԱՆՈՒԹԻՒՆ

Գահիրէի որբուհիներու հսկողութեան գործը կը շարունակուի Միութեան Տիկնանց Խնամակալութեան կողմէ, որքան որ այդ որբուհիներու յատուկ Կայանը փափուած է 1933էն ի վեր: Ասկէ գատ, Տիկնանց Խնամակալութիւնը իր պաշտպանութեան ներքեւ ունի այդ սանուհիներէն այն քանի մը քրոնիկ հիւանդութեանց ենթարկուած որբուհիները որ բացարձակապէս անոք ու անօգնական են: Այս վերջինները տեղաւորուած են ընտանիքներու կամ հիւանդանոցներու մէջ՝ վճարման փոխարէն:

Գահիրէի որբուհիները ըստ առաջնոյն Միութեան ի պահ կը յանձնեն իրենց աշխատավարձերը որ կը յանձնուին գումարներ Անոնք, գրեթէ քիչ բացառութեամբ, բաւական կոկիկ գումարներ ինայած են, ինչ որ կը գիւրացնէ իրենց ամուսնութիւնը: 1935ին 15 որբուհիներ ամուսնացան, ընդհանրապէս իրենց բախտակից որբերու հետ, համեստ ընտանեկան բոյներ կազմելով:

3.— ՊԵՅՐՈՒԹԻ ՈՐԲԵՐՈՒ ՊԱՇՏՊԱՆՈՒԹԻՒՆ

1935ին եւս հողացինք Պէյրութի մէջ նոյն 4-5 սաներու եւ սանուհիներու գարմանման եւ պատասխարման ծախքերը, որովհետեւ անոնք կը մնան Գէլէկեան Որբանոցէն եւ բացարձակապէս անոք են, ենթարկուած գրեթէ անբուժելի հիւանդութեանց, ինչպէս թոքախտի, ջրազրգուցութեան, եւն.: Ասոնց համար ծախսուած է 173 Եդ. Ոսկիի գումար մը: Այս ծախքը հարկադրուած է ընկու Միութիւնը, քանի որ տեղւոյն վրայ չիկայ որբախնամ Մարմին մը որ ստանձնէ այդ գեթախտներուն հողածութիւնը:

Գ. — Կ Ր Թ Ա Կ Ա Ն Ձ Ե Ռ Ն Ա Ր Կ Ն Ե Ր

1. — ՆԻԿՈՍԻՈՅ ՄԵԼԳՈՆԵԱՆ ԿՐԹ. ՀԱՍՏԱՏՈՒԹԻՒՆ

Ներկայ 1934-1935 դպրոցական տարեշրջանին սկիզբը սոյն Հաստատութեան սաներուն եւ սանուհիներուն ընդհանուր թիւն էր 345, որոնցմէ 213 մանչ եւ 132 աղջիկ, որբեր կամ չքաւոր ծնողքներու զաւակներ: Ասոնցմէ զատ ունեցանք նաեւ 21 ցերեկեայ աշակերտ, որով ընդամէնը 366 հոգի, որ մանչերու կողմը բաժնուած էին 8 դասարաններու եւ աղջկանց կողմը 6 դասարաններու մէջ:

1935 ին չրջանաւարտ եղած են 21 սաներ, որոնց 8ը մանչ եւ 13ը աղջիկ:

Ուսուցչական կազմը կը բաղկանար 24 հոգիէ, որոնցմէ 4ը աշցելու եւ մնացեալ 20ը մնայուն: Իսկ ուսուցչական մարմնոյ եւ ընդհանուր պաշտօնէութեան թիւն էր 59 հոգի:

Աշակերտութեան աստղջական վիճակը ամէն կերպով զոհացուցիչ եղած է շնորհիւ բժշկական ամենօրեայ կանոնաւոր սպասարկութեան: Միայն թէ կսկծալի մահ մը արձանագրեցինք, մեր սանուհիներէն Եղիսաբէթ Քէօսէեանը ուղեղատալի զոհ տալով, հակառակ բժշկական ամէն խնամքներու:

Ճիղիքական կրթութեան դանազան ճիւղերը շարունակեցին կիրակուիլ, մեր հիմնական նպատակը ըլլալով մեր սաները դարձնել քաջաուղջ եւ չարքաշ: Այս ուղղութեամբ իրենց թանկագին նպաստները բերած են օգասուն բնակավայրի, առողջապահի սնունդի եւ բժախնդիր մաքրութեան աղբակները: Մարմնամարզի դասը աւանդուեցաւ անթերի կերպով: Փութպուլ, պասքէթպուլ եւ վոլիպուլ աշակերտութեան մշտապէս փնտռած խաղերը եղան, առաջինը միայն սաներուն, իսկ միւս երկուքը սանուհիներուն համար եւս: Մասնաւոր ժամանակացոյցի մը համաձայն բարձրագոյն երկու կարգի սաներն ու սանուհիները կը մարդուէին նաեւ թէնիսի զաշտին մէջ: Մեծապէս ուշադրաւ է թէնիսի խաղին արթնցուցած հետաքրքրութիւնը սաներուն մէջ:

Սկստական կազմը այս շրջանին աւելի մեծ գործունէութիւն մը ունեցաւ, իբրեւ Կիրարոսի մէջ տիպար խումբ պաշտօնական գնահատութեանց առարկայ ըլլալով:

Ինչպէս ուրիշ տարիներ, այս տարի ալ ամբողջ աշակերտութիւնը կատարեց հեռաւոր կամ մերձաւոր զբօսական պտոյտներ ու արշաւ-

ներ, հետիոտն կամ հեծանիւով:

Լուրջ աշխատանք տարուեցաւ նաեւ բարոյական դաստիարակութեան մարդին մէջ: Կրօնական պաշտամունքը, կրօնքի եւ բարոյաբարոյութեան դասեր, բարոյախօսական ասուլիսներ, դպրոցական հանդէսներ եւ հաւաքոյթներ կարեւոր ազդակներ հանդիսացան այս տեսակէտով:

Աշակերտներուն նկարագրի կազմութեան մասնաւորապէս հոգ տարուեցաւ եւ ընդհանուր կարգապահութեան տեսակէտով եւս Հաստատութեան վիճակը գոհացուցիչ եղած է:

Անցեալ տարեշրջանին Հաստատութիւնը ունեցաւ, Տ. Վահան Թէքէեանի տեսչութեամբ, Վարժապետանոցի բաժինը, որ սահմանուած է կարեւոր պակաս մը լրացնելու զաղութահայ կրթական կեանքին մէջ: Հ. Բ. Լ. Միութիւնը, որ, նիւթապէս մեծ գոհողութիւններու գինով ներկայիս կարեւոր պատասխանատուութիւններ ստանձնած է սիւնքի հայութեան կրթական գործին մէջ, իր այս ձեռնարկով կ'առաջադրէ պատրաստել երկսեռ ուսուցիչներ որ իրենց ստացած համանման դաստիարակութեամբ հետզհետէ դուրս գալով՝ ներդաշնակութեան եւ միութեան ազդակ մը պիտի հանդիսանան զաղութահայ նոր սերունդի տոհմային կրթութեան գործին մէջ: Վարժապետանոցի շրջանն է երկու տարի. առաջին դասարանին աշակերտներուն թիւն էր 20, որոնց 14ը մանչ եւ 6ը աղջիկ, որոնցմէ ոմանք դուրսէն ընդունուած են մուտքի քննութեամբ:

Հաստատութեան ընդհ. տնօրէնի պաշտօնը շարունակած է վարել Տ. Գ. Կիրակոսեան: Ուսուցիչներէն Տ. Օննիկ Մահտեսեան կոչուած է Դիւանապետի պաշտօնին:

1935ի արձակուրդէն վերջ վերաքննելով Հաստատութեան վիճակը եւ հիմնուելով անցեալ շրջաններու տուած փորձառութեան վրայ, բարենորոգչական կարգ մը տնօրինութիւններ ընելու պէտքը զգացինք, եւ ասոնց գործադրումը յանձնեցինք Տօքթ. Յ. Թօփճեանի որ իբրեւ լրագոր Պէյրութէն Նիկոսիա անցնելով յաջողապէս գլուխ հանեց իրեն յանձնուած պաշտօնը:

Տ. Թէքէեան հրաժարած ըլլալով, Վարժապետանոցի կրթական տեսուչ անուանեցինք Տ. Պ. Գէորգեանը, որ ստանձնեց նաեւ Հաստատութեան կրթական հսկողութիւնը:

Կազմուեցան երեք ժողովներ. — Տեսչական՝ մասնակցութեամբ Տեարք Կիրակոսեանի, Գէորգեանի եւ Մահտեսեանի, եւ մէյ մէկ աւագ-ուսուցչի եւ ուսուցչուհիի: Մտտակարարական՝ որուն կը մասնակցին, բացի ընդհ. տնօրէնէն, Միութեանս ներկայացուցիչը Տ.

Մ. Սուլթանեան, պատուակալ հաշուեքննիչ եւ վերահսկիչ Տ. Միք. Թօփճեան, Դիւանապետը եւ Հաշուակալը: Կրթական՝ բարձրագամ ընդհ. տնօրէնէն, կրթ. տեսուչէն եւ երկուսն ուսուցիչներէն:

Երուսաղէմի նորընծայ Միարաններէն Պարոյր Վարդ. Մինասեանի յանձնեցինք Հաստատութեան Հոգեւոր Հովիւի եւ կրօնի ու դրարարի ուսուցչի պաշտօնները:

1934-1935 ին Մելգոնեան կրթ. Հաստատութեան համար ծախսուած գումարն է Անգլ. ոսկի 10828.10.2:

2.— ՎԱՐԺԱՐԱՆՆԵՐ

1935 տարեշրջանի ընթացքին Միութեանս կրթական ծրագիրը լաւագոյն կերպով գործադրուեցաւ, եւ այդ ուղղութեամբ ապահովուած բարեյաջող արդիւնքները ըստ ամենայնի քաջալերական են: Օտարութեան մէջ դեռատի սերունդին տոհմային դաստիարակութեան գործին կենսական կարեւորութիւնը հետզհետէ աւելի ուժգնապէս կ'ըմբռնուի, որպէս ազգատղանջանումի դերազանց սատար: Հայ եկեղեցին եւ Հայ Դպրոցը, ահա՛ դերագոյն պատուաստը ուժացումի եւ այլաւերումի վտանգէն դէմ, գաղութներու մէջ:

Մեր դպրոցական գործունէութիւնը հիմնուած է երկար տարիներու փորձառութեան վրայ, զոր ձեռք բերած ենք Միացեալին հետ համերաշխ գործակցութեամբ մը եւ գաղութահայ ներկայ իրականութեան կարիքներուն եւ պահանջներուն խորին դիտակցութեամբը:

Այդ պատճառաւ Հայ Ժողովուրդը ամէն տեղ խանդավառութեամբ ուղղունեց մեր Միութեան տիրական վերերեւումը այդ ազգօգուտ մարզին մէջ, չի հաշուելով անխուսափելի բացառութիւնները: Ստուգելու, ամէն օր մեզի ուղղուած սրտագին դիմումները ցոյց կուտան թէ գաղութահայը ի՞նչ գուրգուրանքով եւ ի՞նչ վստահութեամբ կը փափաքի որ Հ. Բ. Ը. Միութիւնը վճռականօրէն իր բարերար դերը կատարէ նոր սերունդին դաստիարակութեան գործին մէջ, որպէս ղեկավար եւ առաջնորդ:

Այսօր հարիւր յիսունի մօտ Վարժարաններ կը վայելեն Միութեան բարոյական եւ նիւթական պատշապանութիւնը, սիրալոյսօտար ենթարկուելով անոր հակակշիռին: Ծատ քիչ Վարժարաններ, այլազան ազգեցութիւններէ տարուելով, մերժած են Միութեանս գործակցութեան եւ հսկողութեան պայմանը, որպէս գործնական եւ տրամաբանական իրաւունք մը, պահանջ դնելով որ մեր կրթական վարկերը տրամադրենք առանց պայմանի, այսինքն դեր չունենալով պիւտճէի

կազմութեան եւ ուսուցիչներու ընտրութեան մէջ, ինչ որ հիմը կը կազմէ մեր կրթական ծրագրին: Դեռ կան բազմաթիւ խնդրամատոյց Վարժարաններ, որ անվերապահօրէն համոզում դրոյացուցած ըլլալով Միութեան հովանին եւ օգնութիւնը վայելելու առաւելութեանց մասին, կը սպասեն որ վաղը իրենք ալ մտնեն Միութեան դպրոցական ցանցին մէջ: Պահանջը այնքան մեծ է որ, մեզի տրամադրուած նիւթական միջոցներու սեղմ սահմանին մէջ, հարկադրուած ենք բնակարար նախապատուութիւնը տալու այն Վարժարաններուն որ ամէն տեսակէտով արժանաւորագոյն են եւ առանց մեր օժանդակութեան փակուելու վտանգին մէջ կը գտնուին: Քիչ չէ նաեւ թիւը այն համայնքներուն, ընդհանրապէս փոքր եւ չքաւոր, որ կը փափաքին որ Միութիւնը բոլորովին ինք ստանձնէ իրենց Վարժարանին ղեկն ու հոգը:

Այլեւս տարակույս չի կայ որ գաղութներու մէջ Միութեան կարեւորագոյն ձեռնարկը կրթական գործն է, որ մասնաւոր ծրագրի մը համաձայն կը հետապնդուի գլխաւորաբար Սուրբիոյ, Լիբանանի, Յունաստանի եւ Պուլկարիոյ մէջ, նպատակ ունենալով երկուսն մանուկներու տոհմային դաստիարակութիւնը ապահովել, գործնական ուղղութեամբ մը, դերձ հատուածական եւ այլ խաթարիչ ազդեցութիւններէ:

Հ. Բ. Ը. Միութեան հովանիին ներքեւ գտնուող Վարժարաններու թիւը, մէջը ըլլալով իր սեփական դպրոցները եւ Յրանասյի մէջ հայերէն դասընթացքները, 1935ին յանդած է 139ի, հետեւեալ կերպով.—

Սուրբիա 62, Լիբանան 28, Յունաստան 24, Պուլկարիա 9, Յրանաս 12, Պաղեստին եւ Իրազ 4:

Սելանիկի Աղաթօն Վարժարանէն վերջ, Գոգինիայի մէջ եւս (Աթէնք) բացուեցաւ սեփական վարժարան մը:

Այդ վարժարաններուն կը հետեւի աւելի քան 16.000 երկուսն աշակերտութիւն մը:

Սուրբիոյ շրջանին կրթական տեսուչն է Տ. Մ. Նաթանեան, Յունաստանի՝ Տ. Կ. Պանիկեան, եւ Մակեդոնիոյ՝ Տ. Վ. Բագրեւանդեան: Կազմուած են նաեւ կրթ. Յանձնախումբեր, գլխաւորաբար Պէյրութի մէջ: Անցեալ տարի Տ. Պանիկեան Պուլկարիոյ մէջ քննական շրջան մը կատարեց, իսկ Տ. Օ. Թադէոսեան Յրանասյի մէջ, ուսումնասիրելու համար նպաստընկեալ վարժարաններու եւ հայերէնի դասարաններու վիճակը եւս:

Եթէ ստոյգ է որ մեր Միութեան կրթական նպաստներուն շնորհիւ բազմաթիւ վարժարաններ, առանց դաւանական խտրութեան, կը յաջողին պահել իրենց գոյութիւնը, կը խոստովանինք թէ այդ օգնութիւնը բազմատարար նուազագոյն չափով կը հայթաթուի անհրաժեշտ պէտքին գոհացում տալու համար, եւ դժբախտարար նիւթական միջոցներու անբաւականութեան հետեւանքով է որ հնար չըլլար դըպրոցական յարմարագոյն շէնքեր արհեստելի եւ ուսուցիչներուն վերձակը բարելաւել: Այսուհանդերձ, ընդհանուր առմամբ, ձեռք բերուած արդիւնքները գոհացուցիչ են, եւ տարուէ տարի բարւոքումը կը շեշտուի նորագոյն կարգադրութեանց շնորհիւ: Տեղ տեղ, եւ մասնաւորաբար Պուլիարիոյ մէջ, կրթական վարկերու տեղ յանձն առինք տնօրէններու եւ ուսուցիչներու թոշակներուն վճարումը, եւ այս դրութիւնը տուաւ գնահատելի արդիւնքներ:

1935ին կրթական ձեռնարկներու համար ծախսուած գումարն է 4827 Անգլ. ոսկի, չի հաշուելով Մելրոնեան կրթ. Հաստատութեան եւ ստորեւ նշանակուած գործերուն համար եղած ծախքերը: Այդ գումարին փոխարէն Միութեան գլխաւորագոյն հասոյթն է Մշակոյթի նուիրահաւաքութիւնը, որ բազմաամբար բաւարար արդիւնք չի տար, մանաւանդ Ամերիկայի մէջ:

3.— ՀԵԼԻՈՓՈԼԻՍԻ ՆՈՒՊԱՐԵԱՆ ՎԱՐՓԱՐԱՆ

Պօղոս Նուպար փաշա Հելիոփոլիսի մէջ կառուցած իր սոյն վարժարանին համար, որ կը կրէ իր անունը, Միութեանս յանձնած է հիմնադրամ մը, որուն եկամուտը ամէն տարի կը յատկացնենք Նուպարեան վարժարանին. 1935ին Գահիրէի Այգ. Առաջնորդարանին միջոցաւ տրամադրուած գումարն է Անգլ. ոսկի 284:

4.— ՅԵՏ-ԴՊՐՈՑԱԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹԻՒՆ

Ահաւասիկ Միութեան մէկ նոր բայց շատ կարեւոր ձեռնարկը որ կը կազմէ շարունակութիւնը բուն դպրոցական գործին:

Յայտնի է թէ երկար տարիներէ ի վեր մեր ուշադրութիւնը գրաւած էր այդ կենսական հարցը, մէկ կողմէ նոր սերունդը իր դպրոցական շրջանէն վերջ ազգային զգացումով տոգորուած պահելու, եւ միւս կողմէ ալ երիտասարդութիւնը Միութեան հովանիին տակ համախմբելով եւ կազմակերպելով անոր կապելու մտահոգութեամբ, լեցնելու համար պարսպը որ կը գոյանար, քանի կը շիջանի հին

սերունդը, որ այնքան հաւատքով ու գուրգուրանքով փարած էր Միութեան մեծ դադափարականին: Առանց այդպիսի պաշտպանութեան մը, նոր սերունդը, իր գտնուած նոր միջավայրերուն մէջ, անխուսափելիօրէն պիտի ուժանար, կորսնցնելով իր ազգային գլխադիծը:

Իբրեւ սկզբնաւորութիւն, անմիջապէս Միութեանս հովանաւորութեան ներքեւ առնուեցան Հայկ. Եւ Պէյրութի մէջ արգէն գոյութիւն ունեցող Երիտասարդական Ընկերակցութիւնները, որ նախապէս Նիր Իսթ Պաուստէյչընի կողմէ կը նպաստաւորուէին եւ կը գտնուէին Անթիլիասի Կաթողիկոսարանին հսկողութեան ներքեւ:

Յունաստանի եւ Պուլիարիոյ մէջ եւս ձեռնարկներ եղան 1935ին Երիտասարդաց Միութիւններ կամ Լիկաներ ստեղծելու, Մասնաճիւղներուն կից: Գահիրէի մէջ Շրջանակային Յանձնաժողովին նախաձեռնութեամբ հիմը դրուեցաւ Նուպար Միութեան, մարդական եւ մշակութային ծրագրով, իսկ Բարիկի մէջ կատարուած խորհրդակցութիւնները իրենց բարեյաջող արդիւնքը տուին 1936ին սկիզբները:

Այդ շրջանին երիտասարդական ձեռնարկներու համար ծախսուած գումարն է Անգլ. ոսկի 724:

5.— ԶԱՆԱԶԱՆ ԿԻՐՔԱԿԱՆ ՆՊԱՍՏՆԵՐ

Անցեալ տարի, կրթական այլազան նպաստներ եւս յատկացուցած ենք, որոնց համագումարն է Անգլ. ոսկի 396:

Ա.— Սէվրի Սամուէլ Մուրատ վարժարանին կիսաթոշակ ուսանողներու հաշտոյն Ա. Ո. 80:

Բ.— Աթէնքի Ամերիկեան Աղջկանց Գօլէճին Ա. Ո. 63, յօդուս հայ ուսանողուհիներու:

Գ.— Զանազան վարկեր եւ նպաստներ եւս Ա. Ո. 253:

Դ. — Մ Շ Ա Կ Ո Ի Թ Ա Յ Ի Ն Ձ Ե Ռ Ն Ա Ր Կ Ն Ե Ր

1. — ՀԻՄՆԱՐԿՈՒԹԻՒՆ ՆՈՒՊԱՐԵԱՆ ՍԱՆԵՐՈՒ

1934-1935 տարեշրջանին, սոյն Հիմնարկութեան վարչական կազմը կրեց մասնակի փոփոխութիւն մը, Տ. Յ. Թօփուզեանի հրաժարումով: Իր տեղը, Հ. Բ. Լ. Միութեան Կեդր. Վարչութեան պատուիրակ անուանուեցաւ Պրիւսէյի Համալսարանին դասախօս Բրոֆ. Ն. Ադոնց:

Հիմնարկութիւնը անցեալ տարեշրջանին ունեցաւ վեց «պուրսիէ» ուսանող, որոնցմէ երեքը նոր:

Հին ուսանողներն են Տեարք Եղիա Պէտէվեան, Նուպար Կիւլէսէրեան եւ Երուանդ Վարդանեան: Նորերն են Տեարք Սարոյեան, Գէորգ Գարլանեան եւ Հրանդ Գարամանեան:

Հիմնարկութիւնը այս վեց ուսանողներէն դատ, մասնակի եւ բացառիկ օգնութիւններ քննուեցան Երուանդ Պորիս Գոչարեանի, Մարտիրոս Թաւրեանի եւ Եղիա Պէտէվեանի:

Տ. Եղիա Պէտէվեան, աշակերտ Պրիւսէյի Կերպարուեստի Բարձրագոյն Կաճառին, 1935 Յուլիսին ստացաւ «Խրպանիսթ»ի վկայական: 1935-1936 տարեշրջանին վերջը կ'անցընէ իր աւարտական քըննութիւնը, ճարտարապետի վկայական ստանալու համար:

Տ. Հրանդ Գարամանեան, ուսանող ժանալուի Երկրագործ. Պետ. Կաճառին, ամառվերջի քննութիւնները յաջողութեամբ անցուցած է:

Տ. Նուպար Կիւլէսէրեան, ուսանող Շարլըռուայի Աշխատանքի Համալսարանին, նոյնպէս յաջողութեամբ անցուց քննութիւնները:

Տ. Գէորգ Գարլանեան, աշակերտ Բարիլի Մեքենագիտութեան եւ Ելեկտրականութեան Մասնաւոր Վարժարանին, 56 աշակերտի վրայ Ծրգ հանդիսանալով ստացաւ ելեկտրագէտ-ճարտարագէտի վկայական:

Տ. Գրիգոր Սարոյեան, աշակերտ Բարիլի Կերպարուեստի Ազգ. Բարձրագոյն Վարժարանին, յաջողութեամբ անցուցած է ամառվերջի քննութիւնները:

Տ. Երուանդ Վարդանեան, ուսանող Պրիւսէյի Համալսարանին, յաջողութեամբ անցուցած է Մանկավարժական Վարժարանին Յրգ եւ Գրգ տարիներու քննութիւնները, եւ իրաւունք ստացած է թէկ մը ներկայացնելու, ստանալու համար մանկավարժական գիտութեանց տոքթորի վկայականը:

1934-1935 տարեշրջանին, Նուպարեան Սաներու թոշակներն ու Հիմնարկութեան ծախքերը կը ներկայացնեն Անդլ. ոսկի 614.8.0:

1924էն մինչեւ 1935, Հիմնարկութիւնը ունեցած է 53 սան, որոնցմէ Յը մեռած են: 52 սաներէն միայն մէկը՝ Տ. Ն. Սարգիսեան ամբողջովին, իսկ Տեարք Յ. Մաստեսեան, Ե. Պահլաւունի եւ Կ. Չաքարեան մասամբ վերադարձուցած են իրենց փոխ տրուած ուսանողական պուրսերը: Միւսները ցարդ պարտազանց գտնուած են, հակառակ իրենց ստորագրած յանձնառութեանց:

Հիմնարկութեանէն ի վեր սաներու իրրեւ փոխ վճարուած գումարն է պելթ. Փր. 1.357.957:

2. — ՄԿՐՏԻՉ ԱԼԼԱՎԵՐՏԻ ՍԱՆԵՐ

Ողբացեալ Մ. Ալլահվերտի կտակադրամին մէկ երրորդը, Ա. Ո. 47.14.4, յանձնեցինք Վենետիկի Միթարեան Միարանութեան, հայ կաթողիկ սանի մը արհեստ սորվեցնելու համար, ըստ կտակի: Նպաստընկալ սանին անունն է Յակոբ Ասլանեան, որ կը հետեւի Արուեստից Վարժարանին:

3. — ՆՇԱՆ ԳԱԶԱԶԵԱՆ ՍԱՆԵՐ

Ողբ. Ն. Գաղաղեան կտակադրամին պայմանը ըլլալով զուտ եկամուտը յատկացնել երկսեռ պատանիներու բարձրագոյն ուսման, անցեալ տարեշրջանին այդ նպատակին համար Կ. Պոլսի Ազգ. Պատրիարքարանին վճարեցինք Ա. Ո. 27: Գաղաղեան երկու սաներն են՝ Օր. Աղաւնի Թորոսեան որ կը յաճախէ Պէղաղեան Վարժարանը եւ Ղեւոնդ Մարգարեան որ իր ուսումը կը շարունակէ Ազգ. Կեդրոնական Վարժարանին մէջ:

4. — ՄԱՐԻ ՆՈՒՊԱՐ ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ՏՈՒՆ

Միութեան Հիմնադիր եւ Բարերար ողբ. Պօղոս Նուպար փաշայի հիմնած Հայ Ուսանողական Տունը, որ կը կանգնի Բարիլի Համալսարանական Ոստանին մէջ, անցեալ տարի աւելի բարերար չեղաւ, քանի որ հոն բնակող հայ ուսանողներու թիւը 14ը չանցաւ: Եւ այդ թիւն ալ ապահովելու համար հարկադրուեցանք մէկ մասին վարձքին կէսը վճարել, թեթեւեցնելու համար չքաւոր ուսանողներուն բեռը:

Ինչպէս արդէն քանիցս արտայայտուած ենք, սակաւաթիւ ուսանողներ միայն կ'օգտուին իրենց ընծայուած այս գեղեցիկ պատե-

հուլիսին, այնպէս որ Ոստանին վարչութիւնը ստիպուած կ'ըլլայ Ծրանսացի ուսանողներու վարձել տրամադրելի սենեակները:

Տ. Արշակ Զօղանեան 1934-1935 ին եւս շարունակեց հայաբնակարան դասախօսութիւնները, որոնց դժբախտաբար քիչ թիւով ուսանողներ կը հետեւին: Իր դասախօսութեանց գլխաւոր նիւթը եղած է՝ Ս. Հայաստանի նոր բանաստեղծները եւ Մկրտիչ Պէշիկթաշեան եւ իր շրջանը:

Անդամ մը եւս ծնողներու եւ խնամակալներու ուշադրութիւնը կը հրաւիրենք, պարտադրելու համար որ օտար երկիրներէ Բարիկ եկող հայ ուսանողները բնակին Մարի Նուպար Ուս. Տունը, որ ունի հանգստութեան եւ հսկողութեան բոլոր առաւելութիւնները:

5. — ՆՈՒՊԱՐԵԱՆ ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆ

Նուպարեան Մատենադարանը անցեալ 1935 տարուան ընթացքիս ալ շարունակելով իր հաւաքածոներուն ճոխացման գործը, ունեցաւ 481 հատորներու յաւելում: Այս հատորներէն 146ը միայն գնուած են, իսկ մնացեալ 335ը արդիւնք են դանաղան նուիրատուութեանց: Նուիրատուներու կարգին կը յիշենք Գեր. Յովսէփեան եւ Սիւրմէեան Արքեպ. ները, Տեարք Զարեհ պէյ Նուպար, Տիգրան Կամսարահան, Լ. Կ. Կէրտան, Յ. Զաւրիէվ, Լեւոն Բաշալեան, Հ. Գարակէօզեան (Երեւանէն), Տօքթ. Վահրամ Թորգոմեան, Ներսէս Կիւլպէնկեան, Վահան Մալէգեան, Լեւոն Տնտես, Մերուժան Պարսամեան, Տօքթ. Ալլահվերտի որդի, Մ. Անտրէ Մանտէլշթամ, Մ. Գ. Պալթրուշայթիս, Մոսկուայի «Վօքս» Հիմնարկութիւնը, Հայաստանի Գրապաշտօրը, Պետական Թանգարանը, Մելքոնեան Ֆոնտի Հիմնարկութիւնը, եւն.:

Մատենադարանին հարուստ հաւաքածոները այս տարուան ընթացքին եւս տրամադրուեցան հայ եւ օտար ուսումնասիրողներու: Վերջիններէն առանձնապէս յիշատակելի է Մ. Պալթրուշայթիս, որ հայկական արուեստին նուիրուած իր վերջին գեղեցիկ եւ արժէքաւոր աշխատութեան պատրաստութեան առթիւ մեծապէս օգտուեցաւ Միւլթեան Մատենադարանին գիրքերէն:

Նուպարեան Մատենադարանը այս տարուան ընթացքին ալ յաջորդաբար սարքեց ուշադրաւ բանախօսութիւններ: Ծրանսացի վաղամեռ լեզուաբան Մ. Միշէլ Ժօնվալ, Հայաստանէ վերադարձին, խօսեցաւ մեր մայր երկրին իմացական կենցաղին կարգ մը երեւոյթներուն մասին, ամենամեծ համակրութեամբ, ունկնդիր ունենալով

Ծրանսացի ականաւոր մտաւորականներ: Ողբացեալ Շահէ Արքեպ. խօսեցաւ Մուրիոյ հայութեան եւ Կիլիկիոյ Կաթողիկոսական Աթոռին մասին, Միւլթեանս վեթերաններէն Տ. Վահան Գիւրքեան Ամերիկահայ դաղութին նկատմամբ, Տ. Ճանիկ Զաքըր Եգիպտոսէն Պարսկաստան կատարած ուղեւորութեան մասին, Կաթողիկոսական Նուիրակ Գեր. Գարեգին Արքեպ. Յովսէփեան՝ սիւրբի հայութեան պահպանման ազդակներուն մասին, անոնց գլխաւորապէս նկատելով Եկեղեցին եւ Բարեգործականը: Տիկին Անայիս, Տ. Լ. Բաշալեան եւ Մատենադարանի Վերատեսուչ Տ. Լ. Կ. Կէրտան եւս շահեկան բանախօսութիւններ կատարեցին, Բարիկի Հայ Օրիորդաց Միւլթեան կազմակերպած հաւաքոյթներուն առթիւ: Տ. Լ. Կ. Կէրտան այդ պատեհութեամբ խօսեցաւ Բիւզանդիոնի հայ կայսրերու եւ կայսրուհիներու մասին, եւ ուրիշ նոյնքան յանկուցիչ բանախօսութիւն մը ըրաւ Հայ Մտաւորականներու Ակումբի հաւաքոյթին առթիւ, Նուպարեան Մատենադարանին մէջ, նիւթ ունենալով Տիգրան Երկաթը, անոր նուիրած իր նշանակելի երկասիրութեան տեղեկութիւններ տալով: Նոյն Ակումբի մէկ ուրիշ գումարման առթիւ ուշադրաւ բանախօսութիւն մը ըրաւ նաեւ Տ. Գարիկեան՝ Եթովպիոյ եւ տեղւոյն հայ դաղութին մասին:

Նուպարեան Մատենադարանի Թանգարանի բաժնին համար եղած նուիրատուութիւններու կարգին կը յիշենք Հայաստանի Պետական Թանգարանին կողմէ զրկուած շարք մը գեղեցիկ լուսանկարներ, որ կը ներկայացնեն Հայաստանի հնութիւններ եւ բնական տեսարաններ, Տ. Արսէն Գրասիրտիկեանի կողմէ՝ դաժէ երեք փոքրադիր զարդաքանդակներ, որ կը պատկերացնեն Ս. Արուսեան, Գ. Արծրունին եւ Ղ. Աղայեանը, Տ. Պօղոս Էմէրեանի կողմէ Ժէ. դարու պատկեր մը որ կը ներկայացնէ Ամսթէրտամի Հայոց եկեղեցին՝ կիրակնօրեայ արարողութեան մը միջոցին, Տ. Լ. Կէրտանի կողմէ Տիգրան Երկաթի նամակներու շարք մը որ կը պակսէր Մատենադարանին ունեցած հաւաքածոյէն, հետաքրքրական պատկերներ եւ լուսանկարներ Տեարք Ա. Հիւրմիւզի, Ա. Թահթաճեանի, Արմենակ պէյ Սաքըղի եւ ուրիշներու կողմէ:

Իսկ դրամագիտական բաժնին եղան երկու նուիրատուութիւններ, առաջինը Միւլթեանս Եգիպտոսի հաւատարիմ բարեկամներէն Տ. Առաքել Փափազեանի կողմէ, որ նուիրեց 7 կտոր հին արծաթ դրամներ, մէկը Երուսաղէմի եւ Կիպրոսի միացեալ թագաւորութեանց եւ մնացեալ վեցն ալ Կիլիկիոյ հայկական հարստութեան վերաբերող: Այս վերջիններէն մէկը շատ հաղուապիւտ երկլեզուեան

դրամ մըն է որ առանձին ուսումնասիրութեան առարկայ դարձաւ վեներիկի «Բազմավէպ» հանդէսին մէջ: Երկրորդ նուիրատուութիւնը զոր ըրաւ Բարիզի ծանօթ հնագէտներէն Տ. Յակոբ Ինճուճեան, կը բաղկանայ Կիլիկիոյ հայկական հարստութեան երկու դրամներէ եւ Արշակունեաց հարստութեան պատկանող դրամէ մը, երեքն ալ արծաթ:

1935 տարուան ընթացքին Միութեանս այս կարեւոր հիմնարկութեան համար ծախսուած գումարն է Ա. Ո. 484:

6.— ՆՈՒՊԱՐԵԱՆ ՄՐՑԱՆԱԿ ՕՔՍՖՕՐՏԻ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻՆ

Ինչպէս ժամանակին ծանուցած էինք, ողբ. Պօղոս Նուպար Փաշա մասնաշատուկ հիմնադրամ մը յանձնած էր Օքսֆորտի Համալսարանին, հայագիտութեան ճիւղին համար:

Այդ մասին Համալսարանի վարիչէն ստացուած տեղեկագրին համաձայն, Նուպարեան մրցանակը արդիւնաւորապէս օգտագործուած է, իբրեւ պուրս, հայ պատմութեան եւ հայ դրականութեան ուսումնասիրութեան համար:

Առաջին մրցանակը ստացած է Տօքթ. Հ. Պէյլի, որ ժամանակ մը Լոնտոնի Արեւելեան Ուսումներու վարժարանին մէջ դասական հայերէնի դաստիարակ եղած է:

Ե.— ԱՌՈՂՁԱՊԱՀԱԿԱՆ ՁԵՌՆԱՐԿՆԵՐ

1.— ՄԱՄԼԹԵՅՅԵՒ ՍԱՆԱԹՕՐԻՈՄԸ

Նախորդ տարիներու նման, 1935 ին շարունակեցինք Միութեանս օժանդակութիւնը Պէյրութի Թոքախտաւորներու Մամլթէյնի Բուժարանին, ամսական վճարումներով, որոնց 11 ամսուան գումարն է Ա. Ո. 102:

Բաց աստի, նոյն Բուժարանի Խնամակալութեան յանձնեցինք 650 Ա. ոսկիի գումար մը, Լիբանանի բարձունքը յատկապէս դնուած հողին վրայ նոր Սանաթօրիոմի մը շինութեան յատկացուելու համար: Այդ գումարին 1500 տողարը վերջերս ազնուօրէն տրամադրեց մեր Միութեան Բարերար Անդամներէն Տ. Տիգան Թէյլըր, Լօս Անճէլըսէն:

Միւս կողմէ, մեր դիմումներուն վրայ Նանսէնեան Օֆիսը այդ նպատակին համար 8000 Զուլից. Փրանքի գումար մը տրամադրեց իբրեւ փոխատուութիւն, եւ վերջերս ալ Տ. Արմէն Մսրեանէ (Պրիւսէլ) ստացանք 1000 տողարի նուիրատուութիւն մը:

Միութեանս վարիչ-Պատուիրակ Տ. Վ. Մալէգեան, իր վերջին առաջելութեան առթիւ Պէյրութի մէջ տեսակցած ըլլալով Առողջապահական ընդհ. տնօրէն Չօր. Տօքթ. Մարթէնի հետ, որ ցարդ մերժած էր նոր շէնքի մը արտօնութիւնը, օրէնքին պահանջած երաշխաւորութիւնները ներկայացուած չըլլալուն համար, յաջողած է շինութեան արտօնութիւնը ձեռք բերել, որով յուսալի է թէ այդ կարեւոր ձեռնարկը քիչ ատենէն կ'իրագործուի վերջապէս, լրացնելով պէտք մը որ յոյժ զգալի դարձած էր Սուրիահայութեան համար:

2.— ԶԱՆԱԶԱՆ

Շնորհիւ ողբ. Տիկ. Թագուհի Ճանիկեանի մնայուն հիմնադրամին եւ ողբ. Տ. Յակոբ վարժապետեանի եւս կտակային նպաստադրամին, անցեալ տարուան շրջանին կրցանք բազմաթիւ Թոքախտաւորներու եւ այլ չքաւոր հիւանդներու բացառիկ օգնութիւններ ընձեռնել, որոնց ընդհ. գումարը եղած է Ա. Ո. 218-18-11:

Այդ գումարին մաս կը կազմէ Բարիզի Հայ Տիկնանց Միութեան կարմիր Խաչի ճիւղին տրամադրուած գումարը, Ֆր. 3000, յօգուտ իր Բուժարանին:

Յաւալի է որ մեր տրամադրութեան տակ դրուած վարկերը յոյժ անբաւական են, բաղդատելով պէտքին որ անսահման է, քանի որ ոչ ոքի համար դադարեցնել է թէ հիւժարտը ի՞նչ մտալիկ է համեմատութիւններ առած է գլխաւորաբար չքաւոր դադարութիւններու մէջ:

2. — ՊԱՏՐԻԱՐՔԱՐԱՆՆԵՐ

1.— Կ. ՊՈԼՍԻ ՀԱՅՈՑ ՊԱՏՐԻԱՐՔԱՐԱՆ

Մելքոնեան նուիրատուութեան պարտադրած պայմաններուն համաձայն, անցեալ տարի Կ. Պոլսի Պատրիարքարանին վճարեցինք Ա. ոսկի 1538·9·6, որուն 500 ոսկին յանուն Բարերարին Ս. Փրկչի Հիւանդանոցին մէջ անկողիններու յատուկ է:

2.— ԵՐՈՒՍԱՂԵՄԻ ՀԱՅՈՑ ՊԱՏՐԻԱՐՔԱՐԱՆ

Նոյն նուիրատուութեան պարտադիր տրամադրութեանց համաձայն, Երուսաղէմի Պատրիարքարանին յատկացուցինք Ա. ոսկի 1025, յօդու ժառանգաւորաց Վարժարանին, ուր Բարերարին անուանով սաներ կ'ուսանին:

3.— ԱՆԹԻԼԻԱՍԻ ԿԻԼԻԿԻՈՅ ԿԱԹՈՂԻԿՈՍԱՐԱՆ

Ի յիշատակ Բարերար Կարապետ Մելքոնեանի անցեալ տարի եւս Կիլիկիոյ Կաթողիկոսարանին տրամադրեցինք Ա. ոսկի 1000, յօդու Դպրեվանքին:

4.— Կ. ՊՈԼՍԻ ՀԱՅ ԿԱԹ. ՊԱՏՐԻԱՐՔԱՐԱՆ

Ողբ. Մկրտիչ Ալահվերտիի կտակած հիմնադրամին երկու երրորդը յանձնեցինք Հայ Կաթ. Պատրիարքարանին, ըստ պայմանի յատկացուելու համար Կ. Պոլսի հայ կաթողիկ կարօտեալներու, Ա. ոսկի 95·8·9:

է. — ԳԱՂԹԱԿԱՆՆԵՐՈՒ ՕԳՆՈՒԹԻՒՆ

1.— ԳԱՂԹԱԿԱՆՆԵՐՈՒ ՊԱՇՏՊԱՆՈՒԹԻՒՆ

Աղբերու Ընկերութեան Նանսէնեան Միջադաշին Օֆիսին հետ 1935 ին շարունակեցինք մեր յարաբերութիւնները, հայ գաղթականութեան ընդհանուր վիճակը բարելաւելու ձգտող հարցերուն կարգադրութեան համար:

Երբ տեղեկացանք թէ Հայկական Կառավարութիւնը որոշած է գաղթականներու նոր խումբ մը ընդունիլ Հայաստան, այս անգամ բացառաբար Յրանսայէն, մեր պատուիրակ Տ. Լ. Բաշալեանի միջոցաւ անմիջապէս խնդրեցինք Ժընէվի Օֆիսէն, Սեպտեմբերի սկիզբը, որպէսզի դիմէ Յրանսական Կառավարութեան եւ անոր օժանդակութիւնը խնդրէ այս ձեռնարկին յաջողութեան համար: Մեր դիմումին վրայ, Օֆիսը իր կողմէ 125,000 Յրանք քուէարկեց ի հաշիւ ներգաղթի ծախքերուն եւ, շատ չանցած, Յրանս Կառավարութիւնը պաշտօնապէս կը հաղորդէր Օֆիսին թէ՛ որոշած է մասնակցիլ ներգաղթողներէն «որակեալ աշխատաւորներուն» միայն Մարսիլիա երկաթուղիի եւ բոլոր ներգաղթողներուն ալ մինչեւ Պաթում շոգենաւի ծախքերուն:

1935ին, Նանսէնեան Օֆիսը 20000 Զուլից. Փրանքի դումար մը տրամադրեց մեր Միութեան, նախորդ տարիներուն պէս հնարաւորութիւն ընծայելու համար Սուրիոյ, Յունաստանի եւ Պուլկարիոյ չքաւոր հայ գաղթականներուն որ ապրուստի միջոց մը ձեռք բերեն:

Աղբերու Ընկերութեան Խորհ. Միութեան Պատուիրակութեան մօտ 1935 ին ալ շարունակեցինք մեր դիմումները, խնդրելով Մուկուայի Կառավարութեան բարեացակամ վերաբերումը դէպի ներգաղթը, որ զանազան երկիրներ ցրուած հայ գաղթականներէ շատեալուն համար փրկութեան միակ միջոցն է, եւ կրկին հաւաստիք ըստացանք Մուկուայի բարեհաճ տրամադրութեանց՝ այս հարցին նկատմամբ:

Նանսէնեան Օֆիսին գոյութեան տասնամեայ պայմանաժամը 1938 ին լրանալուն պատճառաւ, Աղբերու Ընկերութեան Սեպտեմբերի Ընդհանուր Ժողովին որոշումով մասնապէսներու Յանձնաժողով մը կազմուեցաւ, որուն պաշտօնը պիտի ըլլար Նանսէնեան Օֆիսին վերակազմութեան կամ ընդլայնումին համար միջոցներ խորհիլ եւ առաջարկներ ներկայացնել Աղբ. Ընկերութեան Խորհուրդին: Ի դի-

մաց հայ կաղմակերպութեանց, այդ Յանձնաժողովին աշխատութեանց մասնակցեցաւ մեր պատուիրակ Տ. Լ. Բաշալեան, որուն պարզած եւ բացատրած տեսակէտը, այսինքն թէ հայ գաղթականութեան հարցին լուծումը պէտք է փնտուել ամէն բանէ առաջ ներգաղթի մէջ, ընդունուեցաւ եւ արձանագրուեցաւ այդ Յանձնաժողովին տեղեկագրին մէջ:

Սուրբոյ հայ գաղթականներու տեղաւորման դործը չաւարտեցաւ 1935 ին, ինչպէս առաջադրուած էր: Նանսէնեան Օֆիսը անցեալ տարի ալ կարելին ըրաւ փրկելու համար քէմբերու մէջ տուայտող մնացորդները, բայց դրամական միջոցներու պակասը արդէլք եղաւ ամբողջացնելու այդ դործը: Միութիւնս, դիւրացնելու համար այդ մնացորդներուն տեղաւորման դործը, սիրայօժար Օֆիսին տրամադրութեան ներքեւ զրաւ այն գումարները որ կը գոյանան՝ արդէն հաստատուած գաղթականներուն կատարած մասնակի վճարումներէն:

Գաղթականներու պաշտպանութեան դործին համար, զոր մեր Պատուիրակը Տ. Լեւոն Բաշալեան շարունակեց հետապնդել Բարիզ թէ ժըլէվ, 1935ին ծախսեցինք Ա. Ո. 307.8.—:

2.— ԱԹԷՆՔԻ ԱՇԽԱՏԱՆՈՑ

1935ին շարունակուեցաւ Աթէնքի Աշխատանոցը, որ ապրուստի միջոց կը հայթայթէ անոք հայուհիներու: Այս բաղամեայ հիմնարկութիւնը կը կառավարուի Միութեանս Աթէնքի Տիկնանց Յանձնախումբին կողմէ, որուն անձնուէր ջանքերուն շնորհիւ ինքնապահ դարձած է: Տիկիները կ'աշխատին նպաստաւոր դիներով վաճառել ձեռագործները, որոնց հասոյթը կը յատկացնեն նախանիւթերու գընումին եւ աշխատաւորուհիներու վարձքին:

Անցեալ տարի ծախսուած գումարն է Անդլ. ոսկի 194.13.5:

3.— ԶԱՆԱԶԱՆ ՆՊԱՍՏՆԵՐ

Ինչպէս որ անցեալ տարեշրջանի հաշուեկշիռին թիւ 6 կցեալը ցոյց կուտայ, գաղթականներու ընձեռնուած այլազան օգնութեանց գումարը եղած է Ա. Ո. 3888.1.11, մէջը ըլլալով գաղթականներու պաշտպանութեան եւ Աթէնքի Աշխատանոցին ծախքերը:

Մնացեալ գումարը (Ա. Ո. 2886.9.6) հետեւեալ կերպով կը մամբամանուի.—

1.— Նանսէնեան Օֆիսին կողմէ տրամադրուած նպաստադրամը Ա. Ո. 1255.19.10 յատկացուած է Յունաստանի, Պուլկարիոյ եւ Սուրբոյ չքաւոր գաղթականներուն, նախընտրաբար ապրուստի միջոց հայթայթելու առաջադրութեամբ:

2.— Նիւ Եորքի դործադուրկներուն եւ չքաւորներու յատկացուած է Ա. Ո. 465.12.— իսկ Մարսէյլի Ա. Ո. 317.7.2:

3.— Մարգար Միրզա կտակին եկամուտը ըստ կանխորոշ յատկացումի օգտագործուած է Իզմիրցի կարօտեալներու, Ա. Ո. 140.5.—:

4.— Բարիզի Աղքատախնամ Ընկերութեան բացառիկ վարկ տրամադրուած է Ա. Ո. 66.13.4:

5.— Այլազան նպաստներ՝ յօդուա գաղթականներու, համագումար Ա. Ո. 640.2.7:

Վ Ր Ի Պ Ա Կ

Թիւ 1 Կցեալ	1. Հիմնական Գրամադրուխ (կարգալ) 71913. 3. 0
Թիւ 2 Կցեալ	2. Հիմնական Գրամադրուխի Պահեսի Հիմնադրամ (կարգալ գումարը) 1113.19. 5

Վ Ե Ր Զ Ա Բ Ա Ն

Իբրև եզրակացութիւն, հետեւեալ կերպով կ'ամփոփենք 1935 Տարեշրջանի արդիւնքները.—

Անցեալ տարի Կեդր. վարչ. ժողովը արձանագրած է Մասնաւոր Գրամագույնի հաշուոյն նոր կտակներ եւ նուիրատուութիւններ, համագումար՝
Ա. Ո. 50389

Իսկ գանձուած ամէն տեսակ հասոյթներուն համագումարը եղած է
Ա. Ո. 50389

Այդ Տարեշրջանին հիմնարկութիւններու եւ ընդհանուր նպատակներու յատկացում է
Ա. Ո. 37013

Եթէ նկատի առնենք տնտեսական տագնապը եւ համաշխարհային դժուարութիւնները որ կը շարունակեն մնշել մեր գաղութներուն վրայ առաւելապէս, ձեռք բերուած արդիւնքը գոհացուցիչ կրնայ համարուիլ, մանաւանդ որ, հետապնդելով հանդերձ օգնութեան բազմազան ձեռնարկները, անցեալ տարի եւս կրցանք Միութեան ելեւմուտքը հաւասարակշռել:

Կեդր. վարչ. ժողովը կը պարտի այդ յաջողութիւնը իր բոլոր գործակիցներուն քանակազին աջակցութեանը, որով սոյն Տարեշրջանը կը վերջացնէ իր ջերմագին շնորհակալութիւնները յայտնելով Միութեան հազարաւոր Անդամներուն եւ վեթերաններուն, եգիպտոսի եւ Ամերիկայի Շրջանային Յանձնաժողովներուն, Շրջանային եւ Տիկնանց Յանձնախումբերուն, Տեղական Մասնաժողովներուն, Օժանդակ Մարմիններուն եւ Կրտսերաց Լիկաներուն, իւրաքանչիւրին անձնապէս եւ հաւաքաբար ցոյց տուած անձնուիրութեան եւ վեհանձնութեան համար, ինչպէս նաեւ Հոգեւոր Պետերուն եւ Հովիւներուն, բարեսէր ազգայիններուն եւ խմբագիրներուն, որ իրենց գնահատելի օժանդակութիւնը անցեալ Տարեշրջանին եւս տրամադրեցին մեր Միութեան:

Նախագահ
Կեդր. վարչական ժողովի
ԶԱՐԵՀ ՆՈՒՊԱՐ

Վ Ի Ճ Ա Կ Ա Յ Ո Յ Յ Մ Ա Մ Ն Ա Ճ Ի Դ Ն Ե Ր Ո Ւ

(1935 ՏԱՐԵՇՐԶԱՆԻ ՀԱՍՈՅՔՆԵՐ)

Թիւ	ՄԱՄՆԱՃԻԴ	Մուտքի Տուրք	Անդամավճար	Հանգան. եւն.	Զանազան	Գումար Ա. Ոսկի
Ա. ՅՈՒՑՈՒԿ						
Կեդր. վարչութեան կից Մասնաձիւղներ						
1	Բարիգ	8	944	2	280	1234
2	Մարտիլ	3	50	—	4	57
3	Լիռն	—	18	8	—	26
4	Կրքնօպլը	1	1	—	—	2
5	Սէնք-էքիէն	1	6	—	—	7
6	Սէն-Շամօն	—	1	—	1	2
7	Վիէն	—	9	—	2	11
8	Կարտան - Պիվէն	—	1	—	12	13
9	Նիս	3	7	—	1	11
10	Վալանս	—	—	—	—	—
11	Շաս	—	1	—	—	1
12	Վիլֆրանշ	—	1	—	—	1
13	Էքս-ան-Բրովանս	—	4	2	—	6
14	Լոնտօն	—	65	—	—	65
15	Մանչէսթըր	—	286	—	—	286
16	Ճընէվ	—	25	—	—	25
17	Միլան	—	61	—	1	62
18	Վիեննա	—	31	—	—	31
19	Պրիստի	—	42	—	—	42
20	Անվերս	—	6	—	—	6
21	Քոնսթանցա	—	70	49	128	247
22	Պուրթէշ	9	94	21	21	145
23	Կալաց	—	—	—	—	—
24	Սիլիսթրէ	2	35	8	10	55
25	Բլովտիվ	6	68	—	23	97
26	Սօֆիա	—	—	—	—	—
27	Սթարա Զակօրա	—	7	2	7	16
28	Նովա Զակօրա	—	—	—	—	—
Գումար Ա. Ո.		33	1833	92	490	2448

Թիւ	ՄԱՍՆԱՃԻԻՂ	Մուտքի Տուրք	Անդամա- վճար	Հանգան. են.	Զանազան	Պումար Ա. Ոսկի
	Փոխադրեալ Ա. Ո.	33	1833	92	490	2448
29	Թաքար-Պագարներ	1	12	—	—	13
30	Շումէն	—	15	—	1	16
31	Այբօս	1	8	1	—	10
32	Եամպոլ	—	9	—	—	9
33	Պուրկազ	1	12	—	5	18
34	Խասֆոլո	2	11	10	6	29
35	Վաննա	2	20	—	—	22
36	Սվիլէնկրատ	1	5	2	—	8
37	Սլիվէն	1	2	—	1	4
38	Քըրնալը	1	1	—	—	2
39	Ռուսնուբ	—	—	—	—	—
40	Մեֆսիֆօ	1	8	—	13	22
41	Գորսուպա	—	—	—	—	—
42	Պուէնոս-Այրէս	3	102	32	42	179
43	Թօրմնթօ	1	44	—	5	50
44	Սան-Բալլօ	—	—	—	—	—
	Համագումար Ա. Ո.	48	2082	137	563	2830

Թիւ	ՄԱՍՆԱՃԻԻՂ	Մուտքի Տուրք	Անդամա- վճար	Հանգան. կտակ, են.	Զանազան	Պումար Տուրք
	Բ. ՅՈՒՅԱԿ					
	Ամերիկայի Մ. Նահանգներու Մասնահիւղներ					
1	Ալպընի	—	150	250	—	400
2	Անամոգա	—	—	2700	—	2700
3	Եանգըրս	—	—	—	27	27
4	Եգեմ	—	46	75	—	121
5	Եունեբն Սիթի	—	40	1000	13	1053
6	Թըրլաֆ	—	95	—	—	95
7	Թրէնթըն	—	175	—	—	175
8	Թրոյ	—	90	—	60	150
9	Թուլարա	—	11	—	—	11
10	Ինտիանաբուրիս	—	—	436	—	436
11	Իսթ-Մուլինօ	—	—	130	—	130
12	Լին	—	10	45	—	55
	Պումար Տուրք	—	617	4638	100	5353

Թիւ	ՄԱՍՆԱՃԻԻՂ	Մուտքի Տուրք	Անդամա- վճար	Հանգան. են	Զանազան	Պումար Տուրք
	Փոխադրեալ Տուրք	—	617	4636	100	5353
13	Լոնկ Պիչ	—	31	—	—	31
14	Լօուէն	—	14	1250	—	1264
15	Լօս Աննէլըս	—	430	177	44	651
16	Լորէնս	—	—	100	21	121
17	Հարթֆըրս	—	18	27	60	105
18	Հէվրիլ	—	48	1880	—	1928
19	Միլուօֆի	—	52	30	10	92
20	Մօսկոպօ	1	110	123	—	234
21	Նիւ Եորք	6	1032	12864	1247	15149
22	Նիւ Հիվըն	—	87	20	—	107
23	Շիֆալօ	40	463	1203	465	2171
24	Ուօրըրքաուն	—	—	1831	—	1831
25	Ուստր	1	195	5	43	244
26	Ուօշիկըրն	—	15	20	35	70
27	Չըլսի	—	63	—	—	63
28	Պալթիմօր	—	78	15	25	118
29	Պիմկիլթըրն	—	—	6	—	6
30	Պոսթոն	5	100	301	514	920
31	Պուրլօ Օլիվերըր	—	10	—	—	10
32	Պրաֆթըն	4	38	27	—	69
33	Պրէտտաֆ	—	6	—	2	8
34	Պրիմրոք	—	3	—	2	5
35	Պրանֆս	—	64	48	488	600
36	Պրուֆլին	—	49	190	100	339
37	Պրիֆլի-Օֆլէնս	—	42	30	38	110
38	Ռիչմոնտ	—	15	—	—	15
39	Ռիալի	7	117	10	—	134
40	Ռօչէսթըր	—	28	96	54	178
41	Սան Տիէկօ	—	29	—	—	29
42	Սան Ֆրանչիսկօ	—	215	130	10	355
43	Սաֆրամէնթօ	—	16	—	—	16
44	Սէլմա	—	16	—	—	16
45	Սէմըրվիլ	—	30	117	—	147
46	Սէյլըմ	—	14	—	—	14
47	Ս. Բօլ-Միմիաբուրիս	—	—	15	125	140
48	Սէնթ Լուիս	—	22	—	—	22
	Պումար Տուրք	64	4067	25151	3383	32665

Թիւ	ՄԱՍՆԱՃԻԻՂ	Մուտքի Տուրք	Անդամա- վճար	Հանգան. են.	Զանազան	Գումար Տուրք
		64	4067	25151	3383	32665
49	Սիէթլ	—	46	—	—	46
50	Սիմկըր	—	70	—	—	70
51	Սինսիմաթի	—	5	5	—	10
52	Սիբէֆուզ	—	53	105	30	188
53	Վայլէիա	—	11	—	—	11
54	Վէն Նայս	—	23	—	—	23
55	Վիսֆանքն	—	34	—	26	60
56	Տայնուպա	—	23	—	—	23
57	Տիքրոյք	39	349	140	7	535
58	Տօրչէսքըր	—	—	—	80	80
59	Փասատինա	—	60	1400	—	1460
60	Փարլիքըր	—	15	—	7	22
61	Փէրէրսըն	—	30	24	66	120
62	Փէլրսէտ	—	—	1	—	1
63	Փիքսպըրկ	—	—	15	115	130
64	Փօքթլէնտ	—	68	30	—	98
65	Փրէնսքըն	—	—	5	—	5
66	Փրօվիտանս	—	—	2575	70	2645
67	Քէմպրին	—	36	—	—	36
68	Քընօշա	—	—	5	—	5
69	Քինսպըրկ	—	13	—	—	13
70	Քիլվլէնտ	4	50	220	70	344
71	Ֆաուլըր	—	52	—	25	77
72	Ֆիլատէլֆիա	1	106	35	243	385
73	Ֆրէզնօ	5	550	158	229	942
	Համագումար Տուրք	113	5661	29869	4351	39994

ԾԱՆ.— Ամերիկայի Միացեալ Նահանգներու շրջանա-
կի Մասնանիւղներուն 1935 տարուան հատոյթ-
ներուն գումարն է ըստ Հաշուեկշիռի Անգլ.
Ոսկի 6428.5.7, ինչպէս եւ աւանդներու գու-
մարն է Անգլ. Ոսկի 1570.10.5, համագումար
Անգլ. Ոսկի 7998.16. 0:

Թիւ	ՄԱՍՆԱՃԻԻՂ	Մուտքի Տուրք	Անդամա- վճար	Հանգան. են.	Զանազան	Գումար
	Կ. ՅՈՒՑԱԿ					
	Նգիպօսու Երջանակի Մասնանիւղներ					
1	Գահիրէ Ե.Ո.	2	576	23	239	840
2	Ադեֆանդրիա ,,	—	176	24	242	442
3	Խարքում ,,	—	—	—	14	14
4	Նիկոսիա Ա.Ո.	4	163	—	45	212
5	Լառնաֆա ,,	—	19	—	4	23
6	Պաղտատ Տինար	2400	34505	—	1000	37905
7	Մուսուլ Ֆիլս	180	30912	550	14872	46514
8	Երուսաղէմ Պ.Ո.	1	78	—	10	89
9	Եաֆա ,,	—	2040	—	860	2900
10	Հայֆա ,,	90	2640	—	355	3085
11	Տիրէ Տավա Թալէր	—	246	—	—	246
12	Հալէպ Օսմ.Ղ.	168	14131	—	7040	21339
13	Պէյրուք Սուր.Ո.	11	292	—	374	677
14	Դամասկոս Ս.Ղ.	560	11996	—	4910	17466
15	Տրիպոլիս ,,	930	4405	—	1306	6641
16	Զահլէ ,,	25	6275	—	375	6675
17	Քէսապ ,,	—	7435	—	300	7735
18	Վազըֆ ,,	—	168	—	—	168
19	Ազէզ ,,	340	5530	—	2412	8282
20	Աքըֆ ,,	20	1885	—	150	2055
21	Ղազիր ,,	—	965	—	565	1530
22	Աքար Բունար ,,	80	7505	—	4170	11755
23	Սայտա ,,	—	—	—	—	—
24	Ճիւնիէ ,,	—	—	—	—	—
25	Սիւլէյմանիէ ,,	—	—	—	—	—
26	Անտիոֆ ,,	—	550	—	—	550
27	Այն էլ Արուս ,,	—	—	—	270	270
28	Բաֆֆա ,,	—	—	—	550	550
29	Տէր - Զօր ,,	70	5005	—	1468	6543
30	Մէրնաուն ,,	70	2095	—	300	2465
31	Եագուպիէ ,,	1275	3060	—	—	4335
32	Համամ ,,	550	—	—	150	700
33	Մէյտան էֆալէզ ,,	455	4615	—	1675	6745

Թիւ	ՄԱՍՆԱՃԻՒՂ	Մուտքի Տուրք	Անդամա- վճար	Հանգան. եւն.	Զանազան	Գումար IIIIIIIIIIIIIIIIIIII
34	ձարապուս Ս.Ղ.	—	2276	—	—	2276
35	Հոմս ,,	95	3025	—	1472	4592
36	Րիհանիէ ,,	190	—	—	10	200
37	Լաքաֆիէ ,,	135	4414	—	1482	6031
38	Քարատուրան ,,	100	4975	—	900	5975
39	Սէլիսիէ ,,	—	1650	—	480	2130
40	Ալեքսանուրէք Ֆր.	68	2612	—	2010	4690
41	Պէյլան Սուր.Ղ.	60	4807	—	1904	6771
42	Գըրըզ-Խան ,,	—	6720	—	3300	10020
43	Ճէպէյլ ,,	—	1233	—	1467	2700
44	Քէպուսիէ ,,	—	230	—	—	230
45	Րայաֆ ,,	—	—	—	—	—
46	Աքէնֆ Տրախմի	2225	28815	—	26275	57315
47	Ֆիֆս ,,	870	7550	—	220	8640
48	Քոֆինիա ,,	930	8115	—	1230	10275
49	Բարաքիզմաքա ,,	—	4020	—	264	4284
50	Բաքրաս ,,	370	7420	—	800	8590
51	Քոօթիմի ,,	—	—	—	2000	2000
52	Գանտիա ,,	20	4050	—	2020	6090
53	Միտիլի ,,	380	6430	—	1315	8125
54	Լիբազմա ,,	300	6010	—	8076	14386
55	Սէրէզ ,,	535	1440	—	1000	2975
56	Էկիյօն ,,	165	2815	—	365	3345
57	Տէտէ - Աղան ,,	1165	9065	—	3455	13685
58	Վոյօ ,,	40	2490	—	1600	4130
59	Ռէքիմնօ ,,	270	3210	—	—	3480
60	Քալամաքա ,,	—	1770	—	—	1770
61	Սեյանիկ ,,	1415	27403	—	158560	187378
62	Լարիսա ,,	30	3700	—	700	4430
63	Գոքօն ,,	—	—	—	1130	1130

ԾԱՆ.— Եգիպտոսի շրջանակի Մասնահիւղներուն 1935 տարուան հասոյքներուն համագումարն է ըստ Հաշուեկշիռի Անգլ. Ոսկի 3926.19.10:

Հ Ա Ս Ց Է Ն Ե Ր

ԿԵՂԻՐ. ՎԱՐՉԱԿԱՆ ԺՈՂՈՎ - ԲԱՐԻՉ

CONSEIL D'ADMINISTRATION
DE L'UNION GÉNÉRALE ARMÉNIENNE DE BIENFAISANCE
11, Square Alboni, PARIS

ԿԵՂԻՐ. ՅԱՆՁՆԱԺՈՂՈՎ, ԵԳԻՊՏՈՍԻ - ԳԱՀԻՐԷ

COMITÉ CENTRAL D'EGYPTE
DE L'UNION GÉNÉRALE ARMÉNIENNE DE BIENFAISANCE
B. P. 1079 — 11, Charch Zaki, LE CAIRE

ԿԵՂԻՐ. ՅԱՆՁՆԱԺՈՂՈՎ, ԱՄԵՐԻԿԱՅԻ — ՆԻՒ-ԵՕՐԳ

CENTRAL COMMITTEE OF AMERICA
ARMENIAN GEN. BENEVOLENT UNION
381, Fourth Avenue, NEW-YORK

ԿԵՂԻՐ. ՅԱՆՁՆԱԺՈՂՈՎ, ԵՒՐՈՊԱՅԻ - ԲԱՐԻՉ

COMITÉ CENTRAL D'EUROPE
DE L'UNION GÉNÉRALE ARMÉNIENNE DE BIENFAISANCE
11, Square Alboni, PARIS

« Ազգային գրադարան



NL0218867

42. 988